

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ա. Փ. ԵՆԳՈՅԱՆ

ԱՐԴԻ ԳԱՐԱՇՐՁԱՆԻ  
ՀԻՄՆԱԿԱՆ  
ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ-2002

Խմբագիր՝ Վ. Գերձյան

Ենգոյան Ա. Փ.

Ե Արդի դարաշրջանի գաղափարախոսական հոսանքները- Եր.: Երևանի  
համալս. հրատ., 2002, 105 էջ:

Աշխատանքն ընթերցողին ծանոթացնում է գաղափարախոսության կոնցեպցիաների հետ,  
ներկայացնում է քաղաքագիտական մտքի ներկայացուցիչների հայացքներն այդ  
ֆենոմենի վերաբերյալ: Հեղինակն անդրադառնում է գաղափարախոսության էությանը,  
նշում դրա ֆունկցիաներն ու դրսևորման մակարդակները:

Գրքույկում լուսաբանվում են արդի հիմնական գաղափարախոսությունների ելա-կետային  
դրույթները: Գաղափարախոսական տեսական համակարգերի զարգացումը սերտորեն  
կապվում է քաղաքական կուսակցությունների գործունեության հետ:

Այն օգտակար կլինի դասախոսների, ասպիրանտների և ուսանողների համար:

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

## ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

## 1. Գաղափարախոսության տեսության ակունքները

Քաղաքական գաղափարախոսությունների ուսումնասիրությունը 20-րդ դարի քաղաքագիտության ուղղություններից մեկն է: Ուսումնասիրվում է քաղաքական գաղափարախոսությունների բովանդակությունը, դրանց միջև գոյություն ունեցող տարբերությունները և փոխ-հարաբերությունները, գաղափարախոսության կապը քաղաքականության և տնտեսության հետ, ինչպես նաև հենց ինքը՝ գաղափարախոսական գիտակցության ֆենոմենը, դրա կառուցվածքը և մակարդակ-ները, հասարակության մեջ իրականացվող ֆունկցիաները:

«Գաղափարախոսություն» հասկացությունը (գիտություն գաղափարների մասին) գիտական շրջանառության մեջ մտցրեց Դեսպյոթ դե Թրասին, որը ֆրանսիական Մեծ հեղափոխության ժամանակ ընդ-գրկված էր «Գաղափարախոսություն» խմբի մեջ: «Գաղափարա-խոսության տարրերը» աշխատության մեջ նա գաղափարախոսությունը դիտում էր որպես մարդկանց զգայական փորձից առաջացած գաղափարները և այդ գործընթացի օրինաչափությունները ուսումնասիրող գիտություն, որի հիմնական սկզբունքների վրա պետք է հենվեն քաղաքականությունը և բարոյագիտությունը: «Գաղափարախոսություն» բառն առաջին անգամ բացասական նշանակություն ձեռք բերեց Նապոլեոնի օգնությամբ: Նա «գաղափարախոսներ» անվանեց այն մարդկանց, որոնք դեմ էին դուրս գալիս իր կայսրատիրական նկրտումներին, դրանց համարում էր իրական քաղաքականությունից կտրված գաղափարների կողմնակիցներ: Այդ ժամանակներից գաղափարների և իրականության, տեսության և գործնականի փոխհարաբերության մասին հարցը դարձավ ոչ թե միայն գիտական, այլև գործնական քաղաքականության հարց:

Գաղափարախոսության տեսության մեջ մեծ ներդրում ունի Կ. Մարքսը: Մարքսն ու Էնգելսը «Գերմանական գաղափարախոսություն» աշխատության մեջ գաղափարախոսությունը դիտում էին որպես՝

1. իդեալիստական կոնցեպցիա, որի համաձայն աշխարհը մտքերի և սկզբունքների մարմնավորում է.
2. մտավորական գործունեության տիպ, որը չի գիտակցում սեփա-կան գաղափարների կախվածությունը կենսական պարագաներից և դասակարգերի նյութական շահերից.
3. իրականության երևակայական արտացոլում<sup>1</sup>:

Գաղափարախոսությունը դիտելով որպես ընդհանրապես կեղծ մտածողություն, Մարքսն այդ մտածեցումը չէր կիրառում իր մտա-հղացումների համակարգի նկատմամբ: Նա մարքսիզմը համարում էր սոցիալիզմի գիտական տեսություն, որը բացահայտորեն հռչակում էր պրոլետարիատի դասակարգային պայքարի անհրաժեշտությունը: Մյուս կողմից Մարքսի գործունեության տարիները համընկան կա-պիտալիզմի առավել բիրտ ժամանակաշրջանի հետ: Նա իր «Կապիտալ» աշխատության մեջ աշխատավորության

շահագործման մի շարք օրինակներ է բերում: Ուստի մեղադրել Մարքսին կապիտալիզմի ջատագովների նկատմամբ բացարձակ բացասական վերաբերմունք ունենալու մեջ ճիշտ չէ:

Մարքսի գիտական նվաճումներից է այն հաստատումը, ըստ որի, յուրաքանչյուր հասարակական տեսության հետևում կանգնած են որոշակի շահեր:

Գաղափարախոսությունը Մարքսը դիտարկեց որպես սոցիալական կենսական շահերով պայմանավորված մտածողություն:

Քաղաքական տեսությունը գաղափարախոսությունը համարում է ոմանց շահերին ծառայող գաղափարների մի համակարգ: Խոսվում է ոչ միայն պրոլետարական և բուրժուական գաղափարախոսությունների, այլ նաև գյուղացիական, մանր-բուրժուական, ազգային և այլոց մասին: Այսօր ընդունվում է այն տեսակետը, ըստ որի գիտությունը, որպես իրականության ճշմարիտ, անկողմնապահ ճանաչում, տարանջատվում է գաղափարախոսությունից, որը համապատասխանեցնում է իրականության ճանաչումը որևիցե սուբյեկտի շահերին: Այդ առումով մարքսիզմը սուբյեկտ է համարում գոյություն ունեցող դասակարգերը: Սակայն սուբյեկտի դերում կարող են հանդես գալ ոչ միայն դասակարգերը, այլև տարբեր սոցիալական խմբեր: Նման մոտեցումը հատուկ է հայտնի գերմանական փիլիսոփա Նիցշեին (1844-1900), որը հանդիսանում է արքիկոլոգիայի (արժեքների տեսության) հիմնադիրը:

Ժամանակակից քաղաքագիտության մեջ «արժեք» հասկացությունն այն հիմնաքարերից մեկն է, որը հնարավորություն է տալիս բացատրել գաղափարախոսության ֆեոնոմենը:

Նիցշեի տեսությունը գաղափարա-խոսություն կրող սուբյեկտներ է համարում ազնվականներին և ստորին խավերին:

Խոսելով մտածողության տարբեր տիպերի մասին Նիցշեն օգտագործում էր ազնվական և դեմոկրատական կուլտուրա հասկացությունները: Նա զարգացրեց այն կոնցեպցիան, ըստ որի, բարձր խավը պետք է բացարձակ իշխանություն ունենա ճնշող մեծամասնության՝ միջակայության, վրա: Ազնվականությանը հատուկ է կամքի ուժը և իշխանության ծարավը: Նա կարողանում է իրեն ենթարկել խաղա-դասեր, ավելի թույլ և տկար դեմոկրատական կուլտուրան:

Կյանքն, ըստ Նիցշեի, ավելի թույլին շահագործելն է: Ազնվա-կանությունը, եթե ցանկանում է մնալ կենսունակ, պետք է հետևի այդ օրենքին, հակառակ դեպքում նա դատապարտված է մահվան: Իշխող-ների բարոյականությունը հատուկ է արիական՝ նվաճողների, ռասային, Նիցշեն նրանց բարձրակարգ էր համարում, անգամ կենսաբանական տեսակետից:

Նա գտնում էր, որ բարձր խավն ունի համապատասխան ուժ և կարողություն՝ տղամարդկություն: Այդ խավը որոշակի սահմանների մեջ է դնում մեղմության և բարյացկամության դրսևորումները: Նրան կարելի է անվանել անգամ «նվաճողների ռասա»: Դեմոկրատական գաղափարախոսությունը, ըստ Նիցշեի, ամրագրում է ստորին խավերի ամոթալի բնագոյները՝ վախը, մեղմությունը, կարեկցանքը, ուժի պակասը, իշխանության նկատմամբ անտարբերությունը և այլն:

Իշխող և ենթարկվող խավերը ստեղծում են արժեքների սեփական համակարգեր: Ազնվական խավերը ղեկավարվում են արժեքային դատողությամբ, իսկ ստորին խավերը՝ օգուտ քաղելու տրամաբանությամբ: Առաջիններն իրենց համարում են արժեքներ ստեղծող խավ և պարտավորվածություն են զգում միայն իրենց նմանների նկատմամբ: Ազնվական և դեմոկրատական համակարգերը հակադրվում են միմյանց: Ազնվական բանաձևը հետևյալն է՝ լավ=ազնվատոհմ=հը-գոր=հիասքանչ=երջանիկ=Աստծո կողմից սիրված: Այս հավասարմանը ստորին խավերը հակադրում են, ըստ Նիցշեի, քրիստոնեության կողմից առաջ քաշված այլ բանաձև՝ լավ=աղքատ=մերժված=թույլ=ոչ ազնվա-կան=տառապող=գրկանքներ տանող: Ճնշված, անազատ, անվստահ մարդիկ կարևոր արժեքներ են համարում կարեկցանքը, կոկիկությունը, ազատության ձգտումը, բարյացկամությունը:

Եթե Մարքսը գտնում էր, որ «արդարացիության», «ազատության», «հավասարության» և այլ արժեքների մասին պատկերացումները լինում են առնվազն երկու տեսակի՝ իշխող և

ճնշվող դասակարգերի պատ-կերացումներ, ապա Նիցշեն որոշ քաղաքական արժեքներ համարում էր միայն իշխողներին հատուկ, օրինակ՝ իշխանության ձգտումը, իսկ մյուսները՝ իշխվողներինը, օրինակ ազատության ձգտումը:

Այսպիսով 19-րդ դ. 2-րդ կեսին ձևավորվեց հետազոտությունների մի նոր ոլորտ՝ գաղափարախոսական գիտակցության վերլուծություն: Մարքսը առաջ քաշեց դրա սոցիալ-տնտեսական մեկնաբանությունը, գաղափարախոսությունը դիտելով որպես իրական տնտեսական հա-րաբերությունները քողարկող ռացիոնալ կառուցվածք, կարճ ասած, կեղծ գիտակցություն: Նիցշեն առաջարկեց գաղափարախոսական գիտակցության արժեքային մեկնաբանություն, ըստ որի, իշխող դա-սակարգի կողմից առաջ քաշված արժեքային համակարգը ճշմարիտ է, իսկ իշխվողներինը՝ ոչ:

## 2. 20-րդ դարի առաջին կեսի տեսությունները

20-րդ դարի առաջին կեսում գաղափարախոսության գիտական ուսումնասիրությունները լրացվեցին ևս երկու մոտեցումներով՝ հոգե-բանական և սոցիոլոգիական:

Հոգեկան կառուցվածքի վերլուծության հիմնադիր Չ. Ֆրեյդը (1856-1939)

գաղափարախոսության որևիցե տեսություն չստեղծեց, սակայն իր կողմից առաջ քաշված ուսմունքը հնարավորություն տվեց բացահայտել մարդկանց կատարած գործողության թաքնված դրդապատճառները: Ֆրեյդը մարդկային հոգեկան կառուցվածքը հատուկ ուշադրության արժանացրեց և ընդգծեց անգիտակից շարժառիթների դերը:

Գիտակցությունը Ֆրեյդն առանձնացրեց հոգեկան կառուցվածքից, նաև ցույց տվեց, որ գիտակցական գործընթացները լիովին չեն բա-ցահայտում հոգեկան կառուցվածքի բովանդակությունը: Մարդկանց հոգեկանը նման է սառցալեռան, իսկ գիտակցությունը՝ դրա գագաթն է: Անգիտակցականը Ֆրեյդը դիտում է որպես հոգեկան գործընթացներ, որոնք ակտիվորեն ընթանում են հոգեկանի խորքերում և չեն հասնում տվյալ անհատի գիտակցությանը: Անգիտակցականում պահպանվում են ժառանգած բնագոյները, բարդույթները, անպատասխանատու հա-կումները՝ բոլոր այն ձգտումները, որոնք բնորոշվում են անգիտակ-ցականությամբ, ժառանգականությամբ, սեքսուալությամբ, անտրամա-բանությամբ և անբարոյականությամբ: Այդ համակարգը հոգեկանորեն կարգավորվում է հաճույքներ ստանալու սկզբունքով: Այստեղից ան-ընդհատ ստացվում են տարբեր գործողությունների մղող դրդիչներ (իմպուլսներ):

Սակայն մինչ գիտակցությանը հասնելը այդ դրդիչները պետք է անցնեն մտածողության գրաքննության միջով: Վերջինը ղեկավարվում է այլ սկզբունքով՝ ռեալությամբ

(իրականությամբ): Այդ սկզբունքի համաձայն մտածողությունը հետ է մղում բոլոր այն ցանկությունները, որոնք իրականության պահանջների տեսանկյունից անընդունելի են:

Մարդկային հոգեկան կառուցվածքի անգիտակցական տարրերի դերը հասարակական կյանքում վերլուծեց նաև Վ. Պարետոն (1848-1923): Նա գտնում էր, որ մարդու ռացիոնալ վարքագիծը ընդգրկում է նրա վարքագծի բոլոր ձևերի միայն մի մասը: Այդ պատճառով Պարետոն իր հիմնական ուշադրությունն ուղղեց իռացիոնալ վարքագծի ուսումնասիրությանը: Համաձայն Պարետոյի մարդը ղեկավարվում է ոչ այնքան գիտակցությամբ, որքան հույզային մղումներով և աշխատում է այդ հույզային վարքագիծը արդարացնել կեղծ ռացիոնալ եզրահան-գումներով:

Հույզերի հիմքում ընկած հոգեկան կառուցվածքները Պարետոն անվանեց «մնացորդներ», որոնք դրդում են մարդուն ոչ տրամաբա-նական արարքների: Սակայն մարդը դրանք չի ընկալում որպես իր վարքագծի հիմնական և թաքնված դրդապատճառներ: Նա հակված է տրամաբանորեն հիմնավորելու անգամ ոչ ռացիոնալ վարքագիծը:

Ըստ Պարետոյի «մնացորդները» անփոփոխ են (օրինակ, սպանու-թյան նկատմամբ անհանդուրժողականությունը), իսկ դրանց բացատրու-թյունները, տրամաբանական հիմնավորումները՝ փոփոխական (օրի-նակ, սպանության արգելքը կարող է բացատրվել որպես Աստծո պատ-վիրան, կամ էլ մարդու իրավունքների խախտում): Այդ փոփոխական մեծությունը, որի դերում կարող է հանդես գալ «մնացորդները» հիմ-նավորող ցանկացած տեսություն, կոչվում է գաղափարախոսություն:

Ըստ Պարետոյի, զգացմունքներն են շարժում մարդկանց, իսկ գաղափարախոսական համակարգերը զգացմունքներից բխող կեղծ գիտակցության համակարգերն են: Ինչպես և Մարքսը, Պարետոն գաղափարախոսությունը հակադրում է գիտությանը, սակայն նշում, որ հասարակական զարգացման ընթացքում անտրամաբանական ունի իր ուրույն տեղը: Այն, ինչ իռացիոնալ է գիտական տեսակետից, սոցիալական առումով կարող է լինել արդյունավետ և օգտակար: Գաղափարախոսությունը նա դիտում էր, որպես իշխանությունների երկու հիմնական պաշարներից մեկը (ուժայինի հետ համատեղ): Պարետոն բացահայտեց զանգվածային գիտակցության մանիպուլյացիայի մեխանիզմը, որն օգտագործվում է հույզային, զգացմունքային կառուցվածքի վրա ազդելու նպատակով: Գաղափարախոսության տեսության մշակման գործում կարևոր դեր խաղաց Կ. Մանհայմը (1893-1947) («Գաղափարախոսություն և ուտոպիա» աշխատությունը)2:

Գաղափարախոսության ֆենոմենի նրա վերլուծությունը համարվում է ամենաամբողջականը: Արևմտյան գիտնականներն ընդգծում են Մանհայմի և Մարքսի հայացքների նմանատիպությունը: Սակայն գաղափարախոսության արմատների բացահայտման գործում Մանհայմը Մարքսից առաջ գնաց, ստեղծելով, այսպես կոչված, գիտության սոցիոլոգիա: Ընդօրինակելով Մարքսի այն դրույթը, ըստ որի հասարակական գիտակցությունը կախված է հասարակական կեցությունից, Մանհայմը վերջինը չէր հանգեցնում միայն նյութական արտադրության մեջ ծավալվող տնտեսական հարաբերությունների: Տարբեր դարաշրջանների ոճը բնորոշող «սոցիալական կեցությունը» կարող է ձևավորվել ոչ միայն տնտեսական գործոնի շուրջը, ինչպես դա տեղի է ունենում ժամանակակից փուլում, այլ նաև կրոնական գործոնի շուրջը, ինչպես դա եղավ միջին դարերում:

Մանհայմը նշում էր, որ մտածողությունն ընդհանրապես, այդ թվում նաև գիտական մտածողությունը, զարգանում է սոցիալապես պայմանավորված միջավայրում և սոցիոլոգիայի խնդիրն է կապել գոյություն ունեցող գաղափարական համակարգերը դրանց կրողների սոցիալա-կան դիրքորոշումների հետ: Դրա հետ մեկտեղ պետք է հաշվի առնել այն, որ մտածողության վրա մեծ ազդեցություն ունեն տվյալ սոցիալական միջավայրով պայմանավորված անգիտակցական տարրերը: Մեզինք յուրաքանչյուրի մտածողությունը պայմանավորված է նախա-պաշարմունքների սեփական համակարգով, այսպես կոչված տոտալ (համապարփակ) գաղափարախոսությամբ: Քաղաքականության մեջ յուրաքանչյուր տեսաբան այնքան սերտ է կապված որոշակի քաղաքական հոսանքի հետ, որ կարելի է խոսել անգամ մտածողության ոճերի տարբերության մասին, որը տարածվում է նաև տրամաբանության վրա: Որպես այդ դրույթի ապացույց, Մանհայմը օրինակ է բերում 19-20-րդ դարերի սոցիալ-քաղաքական հոսանքներն իրենց հատուկ մտածողության ոճերով՝ բյուրոկրատական-պահպանողական, պատմական-պահպանողական, լիբերալ-դեմոկրատական բուրժուական, սոցիալիստա-կան-կոմունիստական, ֆաշիստական:

Ըստ Մանհայմի, հենց քաղաքական պայքարի ընթացքում է, որ մարդիկ առաջին անգամ բացահայտեցին մտածողության կախվածությունը կոլեկտիվ անգիտակցական շարժառիթներից: Գաղափարական պայքարի մտնելով հակառակորդների դեմ, նրանք կանգ են առնում ոչ թե այս կամ այն տեսական դրույթի վրա, այլ աշխատում են բացահայտել դրանց համոզմունքների անգիտակցական շարժառիթները:

Ինչպես իշխողների, այնպես էլ իշխվողների կոլեկտիվ անգիտակցականը նրանցից թաքցնում է հասարակության իրական վիճակը: Իշխող խմբերի մտածողությունը ի վիճակի չէ տեսնել այն գործոնները, որոնք հարցականի տակ են դնում իրենց տիրապետությունը: Առաջ քաշելով և տեսականորեն հիմնավորելով գաղափարների իր համա-կարգը, ներկայացնելով դա որպես միակ ճշմարիտը, իշխող դասակարգը ձևավորում է հոգևոր այն կառուցվածքը, որը կոչվում է գաղափարա-խոսություն:

Գաղափարախոսությունը չի պայմանավորում գիտակցված խաբեության առկայությունը, նա ուղղակի սուբյեկտիվորեն է արտացոլում իրականությունը: Միևնույն ժամանակ որոշ պարագաներում հնարավոր է նաև գիտակցված խաբեության օգտագործումը գաղա-փարական դրույթների հիմնավորման համար3:

Յուրաքանչյուր գաղափարախոսություն ներկա հասարակական կարգի ջատագովն է: Դրանում է կայանում գաղափարախոսությունների կայունացնող դերը հասարակական կյանքում: Գաղափարախոսությունը հանդես է գալիս որպես ամբողջական աշխարհայացք, որի միջոցով քաղաքական գործիչները ձգտում են ձևավորել ոչ միայն կուսակցական հայացքները, այլև զանգվածների աշխարհայացքային մտածողություն, դրանց վերաբերմունքն իրականության նկատմամբ: Ըստ Մանհայմի, գաղափարախոսություններին հակադրվում են ուտոպիաները, որոնք ընդդիմադիր դասակարգերի գիտակցության դրսևորումներն են, և նույնպես սուբյեկտիվորեն կողմնապահ: Ծնշվող խավերը, ձգտելով խախտել հասարակության կայունությունը, շրջա-պատող իրականության մեջ տեսնում են միայն այն երևույթները, որոնք համապատասխանում են իրենց տրամադրություններին: Բոլոր այն հանգամանքները, որոնք կարող են խարխլել իրենց գաղափարական հիմքերը, կասկածի տակ դնել իրականության փոփոխման անհրաժեշտությունը ճնշվող խմբերը հաշվի չեն առնում: Իշխանափոխության հետևանքով ուտոպիաները մեխանիկորեն դառնում են գաղափարա-խոսություններ: Ստացվում է, որ թե՛ գաղափարախոսությունները և թե՛ ուտոպիաները հակադրվում են քաղաքական գիտությանը: Գիտակա-նորեն մտածել, գերծ մնալով դասակարգային նախապաշարմունքներ-րից, կարող է միայն մտավորականությունը: Նկատելով հասարակու-թյան մեջ գոյություն ունեցող բոլոր սոցիալական դրդիչները, նա հնարավորություն ունի քաղաքական հոսանքների համակողմանի ուսումնասիրության միջոցով ամբողջական պատկերացում կազմել քաղաքական իրականության մասին:

### 3. 20-րդ դարի երկրորդ կեսի տեսությունները

Այդ ժամանակաշրջանում շարունակվում էր գաղափարախոսության տեսության մշակումը: Քաղաքական գիտության որոշ ներկայացուցիչ-ներ հանդես եկան գաղափարախոսություններից ընդհանրապես հրա-ժարվելու գաղափարով: Դրանցից էին «ապագաղափարայնացման» կոնցեպցիայի հեղինակները և Ֆրանկֆուրտյան դպրոցի ներկայացու-ցիչները:

20-րդ դարի կեսին ծավալված գիտատեխնիկական հեղափոխու-թյունը մեծ հնարավորություններ ստեղծեց ժողովրդական զանգված-ների կենսամակարդակի բարձրացման, հասարակության սոցիալական կառուցվածքի սահմանների ողողման, իրավական մեխանիզմների միջոցով դասակարգային կոնֆլիկտների հաղթահարման համար: Այդ պատճառով որոշ գիտնականների կողմից առաջ քաշվեց այն դրույթը, ըստ որի հետզհետե գաղափարախոսությունները պետք է վերանան քաղաքական ասպարեզից: Ամերիկացի սոցիոլոգ Է. Շիլըր հանդես եկավ «գաղափարախոսությունների վերջը» կարգախոսով: Նրան հետևեցին հայտնի գիտնականներ Դ. Բելը և Ս. Լիփսեթը՝ ԱՄՆ-ում, Ռ. Արոնը՝ Ֆրանսիայում:

Հակադրելով գաղափարախոսությունը գիտությանը, «ապագաղա-փարայնացման» տեսության կողմնակիցները գաղափարախոսությունը ևս համարում էին սուբյեկտիվ, սոցիալ-դասակարգային շահերի արտա-հայտիչ: Համաձայն Լիփսեթի ժամանակակից ինդուստրիալ հասարա-կությունը ընդունակ է, առանց գաղափարախոսական հիմնավոր-վածության, հաղթահարել բոլոր պրոբլեմները: Շիլըր փորձեց հիմնա-վորել այն գաղափարը, ըստ որի հասարակությանը անհրաժեշտ է մի-այն մաքուր, գնահատողական դատողություններից զուրկ սոցիալական գիտության առկայությունը: Նման մոտեցումների առաջացումը ռացիո-նալիստական գիտակցության ասպտամբությունն էր իռացիոնալ գաղափարախոսությունների դեմ: Հետագայում դա հնարավորություն տվեց հրաժարվել գաղափարախոսությունների որպես միայն կեղծ գիտակցության բացատրությունից, ըստ որի դրանք կարող էին գերու-թյան մեջ պահել ամբողջ հասարակությանը:

60-70-ական թվականների դեմոկրատական և ազատագրական շարժումների տպավորության տակ, որոշ գիտնականներ (Բելը, Լիփսեթը) հրաժարվեցին «ապագաղափարայնացման» կոնցեպցիայից: Առաջացավ նոր՝

«վերագաղափարայնացման» տեսությունը, որը բարձ-րացրեց գաղափարախոսությունների դերը հասարակական զարգացման ընթացքում: Արևմտյան մարքսիզմի Ֆրանկֆուրտյան դպրոցը 20-70-ական թթ. իր հիմնական ուշադրությունը դարձրեց մշակույթի և գաղափարա-խոսության տեսության վրա: 30-40-ական թթ. նրանք, հիմնականում, քննադատում էին Մանհայմին, իսկ 60-ական թթ. առաջ քաշեցին մի շարք նոր տեսական դրույթներ: Եթե Մանհայմը գաղափարախոսի հայացքների կեղծությունը բացատրում էր նրա խմբակային շահերով (դասակարգային պատկանելությամբ), ապա օրինակ Ադորնոն, գի-տակցության կեղծությունը բացատրում էր հենց իրականության կեղ-ծությամբ: Ադորնոն, Հաբերմասը և ուրիշները տարբերում էին գաղափարա-խոսության դերը բուրժուական հասարակության մեջ: 19-րդ դարում գաղափարախոսությունը հանդես է գալիս որպես քաղաքական տեսություն: Ավելի ուշ այն ձևափոխվում է, ընդունելով զանգվածային (մասսայական) կուլտուրայի ձև: Այն դադարեց տեսություն լինելուց, միաձուլվեց քարոզչության հետ, ձևավորվելով որպես «զանգվածների ծոցից դուրս եկած մարդու» նախասիրություններ: Կոլեկտիվ շահերն ու անգիտակցականն արտահայտող գաղափարախոսության փոխարեն առաջ եկավ արդեն գիտակցված և նպատակաուղղված, կենտրոնաց-ված եղանակով իրականացվող քարոզչություն: Ադորնոյի կարծիքով անգամ լեզուն գործիք է դառնում բուրժուական գաղափարախոսության տարբեր մեքենայացումների համար (գիտակցության մանիպուլյացիա): Այս պայմաններում գաղափարախոսությունը դադարում է քաղաքական գաղափարախոսություն հանդիսանալուց:

Հասարակության մեջ գաղափարախոսության դերի գնահատման կապակցությամբ հայտնի է Յու. Հաբերմասի և Ն. Լումանի (կառուց-վածքային ֆունկցիոնալիզմի ներկայացուցիչ) միջև ծավալված բա-նավեճը: Վերջինը բացասականորեն վերաբերելով «ապագաղափարայնացման» տեսությանը, ընդգծում էր գաղափարախոսությունների ինտեգրացնող և կայունացնող դերը հասարակական կյանքում: Ըստ Լումանի, գաղափարախոսության նպատակը ոչ թե ճշմարտության հասնելն է, այլ մարդկանց որոշակի կողմնորոշման ապահովումը:

Չմերժելով այդ դրույթը, միևնույն ժամանակ Հաբերմասը նշում էր, որ գաղափարախոսությունը իր էությամբ շարունակում է լինել կեղծ: Ինչ վերաբերվում է գաղափարախոսության կայունացման ֆունկցիա-յին, ապա ըստ Հաբերմասի, գաղափարախոսությունը կայունացնում է ոչ թե հասարակությունը, այլ այստեղ գերիշխելու հնարավորությունը: Ժամանակակից պայմաններում գաղափարախոսությունների կայու-նացնող դերն ընկնում է, դրանք պահպանվում են միայն որպես զանգվածային լրատվամիջոցների նկատմամբ խիստ վերահսկողու-թյուն իրականացնող համակարգեր:

Գաղափարախոսության յուրահատուկ տեսության հեղինակ է հան-դիսանում Լ. Ալտյուսերը: Նրա կարծիքով գաղափարախոսությունները, ինչպես և անգիտակցականը, հավերժ են: Դրանք իրականության աղա-վաղված պատկերացումներ են: Բոլոր գաղափարախոսություններն, ըստ Ալտյուսերի, ձգտում են անհատներին ներկայացնել որպես քաղաքականության սուբյեկտներ, սակայն իրականում նրանց ենթար-կում են սոցիալական դրվածքին: Նա քննադատում էր այն գաղափարն, ըստ որի, մարդիկ և դասակարգերը հանդես են գալիս որպես պատ-մության գիտակից սուբյեկտներ: Գաղափարախոսության մեկնաբանման նոր փորձ արեց ժամանա-կակից գերմանացի քաղաքագետ Ու. Մատցը: Նրա կարծիքով, գաղափարախոսությունները արժեքների այն համակարգերն են, որոնք ասպարեզ են դուրս գալիս լուրջ հասարակական ճգնաժամերի ըն-թացքում: Դրանք հանդես են գալիս որպես կրոնի ուժ ունեցող քա-ղաքական աշխարհայացքներ, որոնք կարող են սանձահարել ճգնա-ժամերի հետ կապված սոցիալական պրոբլեմները: Նոր պատմության առաջին լուրջ ճգնաժամն էր-Ռեֆորմացիան: Եկեղեցու ջլատումը հանգեցրեց քաղաքականության և մշակույթի անջատմանը կրոնից: Եթե միջին դարերում կրոնն էր միավորում մարդկանց, ապա այժմ այդ ֆունկցիան իր վրա վերցրեց պետությունը: Այդ գործը նա կատարում էր «ներքին կրոնի» գաղափարախոսության օգնությամբ:

Մատցն առաջարկեց գաղափարախոսության իդեալական տիպը, որի բնորոշ գծերն են՝ կողմնորոշման համակարգի կրոնական պատ-ճառաբանությունը, հեղափոխականությունը, առաջադիմականությունը, գաղափարախոսական սկզբունքի ավտորիտարիզմը:

Ըստ Մատցի, քաղաքական համոզմունքները, ինչպես և կրոնը, հենվում են հավատքի վրա: Գաղափարախոսություններն իրենց մեջ են ներառում մարդու իսկզբանե չար կամ բարի էության, մարդկության առաջադիմության, հավասարության կամ ի ծնե անհավասարության, մասնավոր սեփականության դրական կամ բացասական արտահայտու-թյան վերաբերյալ հավատը: Բացի դրանից, նոր պատմության բոլոր գաղափարախոսությունները սրբացնում են ապագան, որը ներկայաց-վում է որպես մարդկության զարգացման լավագույն, որակապես նոր մակարդակ: Եթե կրոնը գեղագրում է դրախտը երկնքում, ապա գաղափարախոսությունները նույնը խոստանում են իրական կյանքում: Երկու դեպքում էլ դրախտը սպասվում է ապագայում:

Գաղափարախոսություններում ներկայացված պայծառ ապագան հանդես է գալիս որպես հեղափոխական մեծ գործ, որը գերադասվում է մասնավոր և խմբակային շահերից: Աշխարհի բազմազանությունը թելադրում է տարբեր գաղափարախոսությունների գոյության անհրա-ժեշտությունը, որն իր հերթին մարդկանց բաժանում է օտարների և հարազատների:

Ցանկացած գաղափարախոսություն պետք է ապահովի իր դրույթ-ների մատչելիությունը, քանի որ դրանք կոչված են ուղեցույց հան-դիսանալու մարդկանց լայն զանգվածների համար: Ուստի գաղափա-րախոսությունները հանգում են զանգվածային գիտակցության համար շատ պարզ և հասկանալի բանաձևերի: Պարզեցնելով իրական աշ-խարհի բազմազանությունը գաղափարախոսությունները կրկին անգամ հակադրվում են գիտությանը: Օրինակ, ուսումնասիրելով քաղաքական կոնֆլիկտը, գիտնականն անդրադառնում է այդ խճճված հարցի բոլոր կողմերին, դիտում է կոնֆլիկտը տարբեր տեսանկյուններից: Գաղա-փարախոսը, նման դեպքում, հակամարտությունը պարզեցնում է՝ հանգեցնելով այն կա՛ն դասակարգային, կա՛ն էլ ռասայական ան-համատեղելիության:

Գաղափարախոսությունների կարևորությունը ժամանակակից հա-սարակությունում բացատրվում է նաև այն հանգամանքով, որ դրանց հատուկ դոգմատիզմն ընդունակ է արգելակել ապակողմնորոշման գործընթացները, ինչպես նաև կանխել այն փորձերը, որոնք քաղա-քական գործունեությունը ներկայացնում են որպես աշխարհիկ կյանքի բարիքների պարզ կառավարում: Մարդկանց մեջ դեռևս պահպանվել է քաղաքական գործիչներին իրենց հոգևոր ղեկավարներ համարելու միտումը, իսկ գաղափարախոսությունների մեջ նրանք փնտրում են առօրյա քաղաքականության իմաստավորում:

Միևնույն ժամանակ, Մատցը մերժում է գաղափարախոսությունների անհրաժեշտությունը բաց հասարակություններում: Դրանք նա համեմա-տում է հենակների հետ, որոնք ձեռքի տակ են ընկել ժամանակակից հասարակություններում ծագած աշխարհայացքային բնույթի ճգնաժա-մերի ընթացքում: Ըստ Մատցի, գաղափարախոսությունները կոչված են հակամարտություն սերմանել մարդկանց միջև: Արդի հասարակության պլյուրալիզմի և հանդուրժողականության մթնոլորտը այնպիսի պա-հանջներ է ներկայացնում գաղափարախոսություններին, որ դրանք ստիպված են այսօր հրաժարվել թշնամանքից, բացառիկը հանդիսա-նալու ձգտումից: Ապագայում հասարակությունները, ըստ Մատցի, պետք է ազատվեն քաղաքացիական հավատքի այդ շինծու երևույթ-ներից:

Գաղափարախոսության տեսության մշակման գործում իր ուրույն տեղն ունեն նաև հայ քաղաքական մտքի ներկայացուցիչները: Գաղափարախոսությունը որպես սոցիալ-քաղաքական երևույթ դիտում է ակադեմիկոս Հ. Միմոնյանը: Նրա աշխատություններում առանձ-նահատուկ տեղ է գրավում ազգային գաղափարախոսության մշակման պրոբլեմը: Այստեղ լուրջ և համակողմանի քննադատության է արժա-նանում թուրք ազգային բուրժուազիայի գաղափարախոսությունը և քա-ղաքականությունը: Հայ ժողովրդի ազգային գաղափարախոսության սկզբնավորման, միջնադարյան գաղափարախոսությունը, հայ



հասարակական հոսանքների ու քաղաքական կուսակցությունների ծրագրերում արտացոլված համագաղափարային գաղափարախոսության հիմնահարցին է նվիրված պրոֆ. Հ. Մանուչարյանի «Հայության գոյա-պահպանության գաղափարախոսությունը»<sup>2</sup> մենագրությունը: Գաղափարախոսության տեսության մշակման, ինչպես նաև համաշխարհային գաղափարախոսական հոսանքների հիմնադրությունների քննարկման ուղղությամբ աչքի է ընկնում նաև Ի. Բալյանի և Ա. Ենգոյանի «Քաղաքական գաղափարախոսություններ»<sup>3</sup> աշխատանքը:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԳ

### ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹ

#### 1. Գաղափարախոսության էությունը

Սոցիալական իրականության արտացոլման խորության տեսանկյունից քաղաքական գիտակցությունը դրսևորվում է հոգեբանական և գաղափարախոսական մակարդակներով: Այս հանգամանքը քաղաքական գիտակցության կառուցվածքում ստիպում է դիտել երկու փոխկապակցված հասկացություններ՝ քաղաքական հոգեբանությունն ու քաղաքական գաղափարախոսությունը: «Քաղաքական գիտակցություն» հասկացությունն, ըստ էության, հանդիսանում է այդ երկու կատեգորիաների ամբողջություն:

Քաղաքական հոգեբանությունը իրենից ներկայացնում է զգացմունքների, հույզերի, տրամադրությունների, ավանդույթների, կարծիքների միագումարություն, որը հատուկ է ինչպես տվյալ հասարակությանը ամբողջությամբ, այնպես էլ դրան պատկանող առանձին սոցիալական խմբերին (դասակարգեր, ազգեր և այլն): Քաղաքական հոգեբանությունը ձևավորվում է սոցիալական կեցության կոնկրետ պատմական պայմանների անմիջական ազդեցությամբ: Եվ քանի դեռ այդ պայմանները տարբեր են այս կամ այն մեծ սոցիալական խմբի համար, անխուսափելիորեն տարբեր են նաև դրանց սոցիալ-հոգեբանական համակարգերը: Միևնույն ժամանակ, անգամ հակադիր դասակարգերի սոցիալ-հոգեբանական համակարգերն ունեն նաև ընդհանուր գծեր, որոնք կապված են պատմական առանձնահատկությունների, ազգային ավանդույթների և մշակույթի զարգացման աստիճանի հետ: Պատահական չէ, որ խոսվում է ամերիկյան գործ-ինացության (գործարարության) կամ գերմանական ճշտապահության մասին: Որևիցե հասարակության մասին խոր պատկերացում ստանալու համար «քաղաքական գաղափարախոսություն» և «քաղաքական հոգեբանություն» հասկացությունները պետք է դիտել միասնության մեջ: Այս հանգամանքն է, որ որոշում է դրանց միջև գոյություն ունեցող սերտ կապը: Ասենք, կարելի<sup>4</sup> է արդյոք մինչև վերջ հասկանալ ներկայիս ազգամիջյան կոնֆլիկտների առաջացման պատճառները, հաշվի չառնելով տվյալ էթնոսների միջև գոյություն ունեցող կայուն հակակրանքը (կամ համակրանքը): Կամ ինչպես կարելի է իրականացնել սոցիալական բարեփոխումները, հաշվի չառնելով զանգվածների քաղաքական տրամադրությունները: Քաղաքական գաղափարախոսության և հոգեբանության հարաբերակցությունը կանխորոշված է այն հանգամանքով, որ առաջինը քաղաքական գիտակցության ռացիոնալ մակարդակ է, իսկ երկրորդը՝ հուզական և զգացմունքային:

Հայտնի է, որ գիտակցության ձևավորման համար զգացմունքային ճանաչողությունը դեռևս անբավարար է: Սակայն այն տալիս է սկզբնական անհրաժեշտ լրատվություն աշխարհի մասին, որը ենթակա է որոշակի վերամշակման: Ըստ էության, համապատասխան գաղափարախոսության ձևավորման համար հոգեբանությունը համարվում է յուրատեսակ բազիս: Գաղափարախոսությունը բացատրում է այն, ինչը արդտ կերպով «հասկացել է» հոգեբանությունը, խորանում է երե-վույթների էության մեջ:

Գաղափարախոսության և հոգեբանության հարաբերակցությունը բավականին բարդ է: Գաղափարախոսությունը հենվում է տվյալ սոցիալական խմբի հոգեբանության որոշակի գծերի վրա, սակայն, այն չի կարելի համարել հոգեբանության յուրահատկությունների պարզ և պասիվ արտացոլում: Գաղափարախոսությունը նպաստում է կոնկրետ սոցիալական խմբի հոգեբանական գծերի ուժեղացմանը կամ թուլացմանը:

Եթե քաղաքական հոգեբանությունը ձևավորվում է տարերայնորեն, այն պայմաններում, որոնցում գտնվում է տվյալ սոցիալական ընդ-հանրությունը, ապա գաղափարախոսությունը տվյալ սոցիալական ընդհանրության կողմից «հատուկ լիազորված» անհատների՝ գաղա-փարախոսների, տեսական բնույթի գործունեության արդյունք է: Գաղափարախոսները տեսականորեն են հանգում այն եզրակացու-թյուններին, որոնց սոցիալական ընդհանրությունները մոտենում են, հիմնականում, գործնականորեն: Կարևոր է նշել, որ դասակարգային գաղափարախոսները, ծառայելով տվյալ դասակարգին, իրենց սոցիալական ծագումով կարող են չպատկանել դրան:

Գաղափարախոսության ֆենոմենի մասին պատկերացումների կենտրոնում գտնվում է «արժեք» հասկացությունը: Արժեքը՝ առանձին մարդուն, մարդկանց խմբերը և, ընդհանրապես, հասարակությունը շրջապատող օբյեկտների կարևորումն է: Այն չի կարելի դիտել որպես այդ օբյեկտների բուն հատկանիշների դրսևորման արդյունք, այլ կապված է այն հանգամանքի հետ, թե որքանով են դրանք ներքաշված մարդկային կենսագործունեության մեջ: Այդ օբյեկտները մարդկանց կողմից գնահատվում են իրենց շահերին և պահանջումներին համապատասխան:

Գաղափարախոսությունը հանդիսանում է որոշակի սոցիալական սուբյեկտների արժեքների համակարգի տեսական հիմնավորում: Գաղափարախոսությունը բացատրում է նրանց իրենց իսկ աշխարհի իմաստները: Սակայն որոշ գիտնականների, օրինակ, Կ. Պոպպերի կարծիքով, գաղափարախոսության հիմքում դրսևորվում է ոչ միայն գիտակցականը, այլ նաև զգացումներայինը<sup>1</sup>: Այսպես, երբ մարդը, ընդունելով որոշ արժեքների արդարացիությունը, դիմում է «իր խղճի համապատասխան» գործողությունների, ապա, նա չի ղեկավարվում գործնական օգուտ ստանալու սկզբունքով, կամ չի փորձում տրամաբանորեն հիմնավորել նման գործողությունները: Այստեղ արժեքները հանդիսանում են այդ գործողությունների դրդապատճառներ: Մարդը դիմում է նման քայլերի, ելնելով պարտքի զգացումից:

Գաղափարախոսություններն առաջադրում են քաղաքական գործողությունների նպատակները: Գաղափարախոսության անհրաժեշտու-թյունը պայմանավորվում է այն հանգամանքով, որ կյանքում պետք է լինում որոշում ընդունել այնպիսի հարցերի շուրջը, որոնց պատասխանները չի կարող տալ անգամ գիտությունը: Ա. Էյնշտեյնի խոսքերով, առավելագույնը, ինչ կարող է անել գիտությունը՝ ցույց տալ այն միջոցները, որոնք հնարավորություն կտան հասնել որոշակի նպատակների<sup>2</sup>: Առաջադրել նպատակները, առավել ևս արմատավորել դրանք մարդկանց գիտակցության մեջ, կարող է անել միայն քաղաքական գաղափարախոսությունը:

Գաղափարախոսությանը հատուկ է հաջորդականությունը, գաղա-փարների փոխանցումը եկող սերունդներին: Պատմականորեն ենթարկվում են փոփոխության միայն գաղափարական պայքարի ձևերն ու միջոցները, այլ ոչ թե գաղափարախոսական հիմնադրույթները: Գաղափարական հիմքերը, հիմնականում, մնում են նույնը: Դիտելով գաղափարախոսությունը որպես արժեքների համակարգ, կարելի է նկատել, թե ինչպես են փոփոխվում դրան բնորոշող շեշտադրումները: Գաղափարախոսական գիտակցության այնպիսի բնո-րոշ գծեր, ինչպիսիք են դոգմատիզմը, ավտորիտարիզմը և այլն վերաճում են «գաղափարների նկատմամբ հավատի» և պահանջում են հավատարիմ մնալ այդ դրույթներին:

Գաղափարախոսական գիտակցությանը հատուկ են՝

1. Վեհ գաղափարները. Գաղափարները վեր են դասվում իրական պրոբլեմներից: Մարդկանց անձնական կյանքը ամբողջովին ծառայում է դրանց իրականացմանը:
2. Դոգմատիզմ. Գաղափարախոսների համար արժեքներն անխախտելի սկզբունքներ են:

3. Հավատարմությունը գաղափարներին. Արժեքների սեփական համակարգերի անվերապահ պաշտպանությունը:

4. Ավտորիտարիզմ. Գաղափարախոսությունը դիմում է մարդկանց որոշակի պահանջներով, մոդելավորում գիտակցությունն ու վարքա-գիծը:

Քաղաքական գաղափարախոսությունը քաղաքացիների քաղաքա-կան վարքի գաղափարական կողմնորոշմանն ուղղված հոգևոր երե-վույթ է: Այդ կապակցությամբ պետք է տարբերել դրա հիմնական մակարդակները.

- Տեսական-կոնցեպտուալ. ըստ որի որոշակի սոցիալական կամ էթնիկական շահերի և գաղափարների ընդհանրության համապա-տասխան ձևավորվում են աշխարհի յուրովի ընկալումն արտահայտող կարևորագույն դրույթները:

- Քաղաքական-ծրագրային, ուր նպատակները, սկզբունքները և գաղափարները արտացոլվում են քաղաքական էլիտայի ծրագրերում, կարգախոսներում և պահանջներում, հիմք են հանդիսանում վարչա-կան որոշումների ընդունման և բնակչության քաղաքական վարքի կողմնորոշման համար:

- Արդիականացված մակարդակ, որը բնորոշում է քաղաքացիների կողմից տվյալ գաղափարախոսական սկզբունքների յուրացման աստիճանը, որն արտացոլվում է իրենց քաղաքական գործունեության վրա:

Հանդիսանալով քաղաքական գործողությունների բաղկացուցիչ մասը գաղափարախոսությունը կատարում է հետևյալ ֆունկցիաները<sup>3</sup>.

- Ամբողջացման, միավորման ֆունկցիայի իմաստն է մարդկանց համախմբումը որոշակի գաղափարների և նպատակների իրականաց-ման շուրջ: Մարդկանց միավորման աստիճանը, միասնական նպա-տակին հասնելու համար նրանց գործողությունները կախված են այն հանգամանքներից, թե ինչ չափով է համապատասխանում տվյալ գաղափարախոսությունն իրենց շահերին:

- Ճանաչողական ֆունկցիան կապված է սոցիալական ընդհան-րությունների կամ անհատների կողմից իրականությունը ճանաչելու, իրենց արմատական շահերը գիտակցելու անհրաժեշտության հետ: Քանի որ գաղափարախոսությունն արտացոլում է շրջակա միջավայրը որոշակի սոցիալական խմբի տեսանկյունից, այն ունենում է յուրովի ճշմարտացիության աստիճան և ղեկավարվում է յուրահատուկ ար-ժեքներով: Ընդ որում, որքան որ տվյալ սոցիալական խմբի շահերը համապատասխանում են հասարակական առաջընթացի հիմնական ուղղություններին, այդքան բարձրանում է նրա գաղափարախոսության ճշմարտացիության աստիճանը:

- Գնահատողական ֆունկցիան դրսևորվում է այն հանգամանքով, որ գաղափարախոսությունը յուրահատուկ մոտեցում է ցուցաբերում սոցիալ-քաղաքական իրականության տարբեր գործընթացների և երևույթների նկատմամբ:

Սոցիալ-քաղաքական գործընթացների, քա-ղաքական իրադարձությունների գնահատականը գաղափարախոսու-թյան կողմից տրվում է արդեն ձևավորված սկզբունքների տեսանկ-յունից:

- Կանխատեսման ֆունկցիան կապված է որոշակի սոցիալական գաղափարի և հավատքի ձևավորման, ինչպես նաև դրա հնարավոր իրականացման հետ: Յուրաքանչյուր գաղափարախոսություն ձևավո-րում է որոշակի գաղափարների և արժեքների իրականացման նկատ-մամբ հավատ: Սակայն, երբ շեշտը դրվում է միայն այդ հավատի վրա, գաղափարախոսությունը կանգնում է իր սկզբունքները դոգմաների վերածելու վտանգի առջև: Ուստի գաղափարախոսության կանխա-տեսումը կարող է գիտական բնույթ կրել միայն այն դեպքում, երբ նա հետևողականորեն միավորվում է գիտության և սոցիալ-քաղաքական գործնականի հետ:

Քաղաքական գաղափարախոսության ձևավորման ճանապարհի բնորոշման ընթացքում ընդգծվում են այդ գործընթացի 4 հիմնական մոդելներ:

1. Կոնդենսավորման. Այս մոդելը գործում է այն դեպքում, երբ զանգվածային գիտակցության «գոլորշիացումների» յուրահատուկ կոնդենսավորման պատճառով գաղափարախոսական պատկերացում-ները վերաճում են տեսական գաղափարախոսական կառուցվածքների:

2. Ինտեգրատիվ. Դրան հատուկ են գոյություն ունեցող գաղա-փարաքաղաքական հոսանքների տարբեր գաղափարների և պատկե-րացումների սինթեզը, ինտեգրացիան, կոնվերգենցիան կամ գաղափարախոսական դրույթների նոր մեկնաբանությունը (նեոկոնսերվատիզմ, նեոլիբերալիզմ և այլն):

3. Դիվերգենտ. Այս դեպքում նոր գաղափարախոսության ձևա-վորումը տեղի է ունենում արդեն գոյություն ունեցող գաղափարախոսության դրույթների միջև ճեղքվածքի առաջացման, դրա մաս-նատման հետևանքով:

4. Ռեվիտալիզացիայի. Դրան բնորոշ է վերադարձը նախկին գաղափարներին, որոնք ներկայացվում են թարմացված տեսքով (կոնսերվատիզմի, մարքսիզմի ակունքներին վերադառնալու փորձերը և այլն):

Նշված մոդելների առանձնացումը պայմանական է, քանի որ գաղափարախոսությունների առաջացման կամ վերափոխման իրական գործընթացները ավելի բարդ են: Այդ մոդելները հաճախ գուցորդվում կամ խաչաձևվում են և չեն հանդիպում մաքուր տեսքով: Միևնույն ժամանակ, դրանց ինացությունը կարող է նպաստել որոշ գաղափարական հոսանքների առաջացման մեխանիզմների վերլուծությանը:

## 2. Գաղափարախոսություն և քաղաքականություն

Քաղաքական գաղափարախոսությունը ավարտուն տեսական հա-մակարգերի, կոնցեպցիաների, հայացքների ամբողջություն է, որն արտացոլում է սոցիալական խմբերի շահերը, միմյանց միջև հարա-բերություններն ու վերաբերմունքը հասարակության տարբեր քաղա-քական կառույցների նկատմամբ: Գաղափարախոսության կազմում ընդգրկված են որոշակի սոցիալական ընդհանրության պատմական փորձի հիման վրա առաջացած գաղափարները, որոնք յուրովի են արտացոլում իրականությունը: Այդ գաղափարները գուցակցվում են ինտելեկտուալ միջավայրում: Առաջ են գալիս ինտելեկտուալ շար-ժումները, որոնք կամ ներազդում են ամբողջ հասարակական գի-տակցության վրա, կամ էլ վերաճում են զանգվածային քաղաքական շարժումների: Ձևավորելով հասարակական գիտակցության քաղաքա-կանացված հատվածամասը գաղափարախոսությունն իր արտահայ-տությունն է գտնում քաղաքական ծրագրերում, մանիֆեստներում, հրոշ-չակագրերում, կարգախոսներում և այլն:

Քաղաքական գաղափարախոսության առաջացումը տեղի է ունեցել պետության կազմավորմանը գուցահեռ: Այդ ժամանակներից գաղա-փարախոսությունն ու քաղաքականությունը, ինչպես և տեսությունն ու գործնականը, գիտակցությունն ու գործողությունները գտնվում են մշտական փոխհարաբերակցության մեջ:

Գաղափարախոսությունը որոշում է սոցիալական կամ էթնիկական ընդհանրությունների քաղա-քական շահերի տեսական պաշտպանվածության մեխանիզմը:

Գաղա-փարախոսությունը քաղաքական գործունեության հոգևոր և ինտելեկ-տուալ հիմքն է: Դրանց փոխներգործությունը պայմանավորվում է հետևյալ պարագաներով.

1. Քաղաքականության մեջ ընդգրկված ուժերին գաղափարախոսու-թյունը պարզաբանում է աշխարհում տիրող ընդհանուր սոցիալական և քաղաքական իրավիճակը: Բնորոշում է գործողությունների հիմքում ընկած արժեքները և մատնանշում դրանց իրականացման հնարավոր ճանապարհները: Քաղաքական գաղափարախոսությունները, շատ դեպքերում, տրամադրում են նաև գործողությունների ընդհանուր հրա-հանգները:

Քաղաքական շարժումները տարբեր եղանակներով են օգ-տագործում իրենց կողմից մշակված և ընդունված գաղափարախո-սական դրույթները: Օրինակ, նացիզմը հիմնականում ժխտում էր մշտական և անփոփոխ սկզբունքները, փոխարինելով դրանք առաջ-նորդի կամքի դրսևորումներով: Որոշ դեպքերում, ռեֆորմիստական կողմնորոշում ունեցող կուսակցությունները ևս, ելնելով պրագմատիկ նպատակահարմարությունից, կարող են հետին պլան մղել իրենց գաղափարական սկզբունքները: Սակայն, ընդհանուր առմամբ, յուրա-քանչյուր քաղաքական շարժում ի վերջո հավատարիմ է մնում իր հիմնական գաղափարախոսական սկզբունքներին, որոնք որոշակի բովանդակություն են հաղորդում շարժմանը:

2. Գաղափարախոսությունը հանդես է գալիս որպես քաղաքական շարժումը կազմակերպող և միավորող ուժ: Խոշոր շարժման կապող օղակն է այն համոզմունքը, որ դրանում ընդգրկված են միևնույն մտածողություն ունեցող մարդիկ: Դեմոկրատական շարժումներին և կուսակցություններին հատուկ բազմակարծիքությանը գուցահեռ այս-տեղ գոյություն ունեն նաև համընդհանուր ճանաչում ստացած սկզբունքներ ևս, և հակադրվել դրանց նշանակում է հայտնվել տվյալ քաղաքական շարժման շրջանակներից դուրս:

3. Քաղաքական գաղափարախոսությունը իրենից ներկայացնում է հույզալին բովանդակություն ունեցող խորհրդանիշների ամբողջություն: Դրանք, որոշ չափով, նպաստում են խմբերի և անհատների գործո-դությունների ակտիվացմանը: Պատմությանը հայտնի են բազմաթիվ օրինակներ, երբ վերջին երեք հարյուրամյակների ընթացքում ազգային գաղափարախոսությունների կողմից շեշտադրվող հայրենիքի գաղա-փարը դրդել է մարդկանց ինքնագոհաբերության: Զիչ են այն օրի-նակները, երբ մարդիկ պարտքի, կամ անգամ պատվի զգացումով են դիմում նման սխրանքների:

Յուրաքանչյուր գաղափարախոսություն, ինչպես տեսանք, գտնվում է իրականությունից որոշակի հեռավորության վրա և ընդգրկում է այնպիսի գաղափարներ, որոնք մարդկանց առաջարկվում են հավատքի տեսքով: Ասվածը նվազագույն չափով վերաբերվում է պաշտոնական գաղափարախոսությանը, որը պետական քաղաքականությունն ուղղում է առավել իրական ճանապարհով: Դրա հետ մեկտեղ, պաշտոնական գաղափարախոսությունը ձգտում է, հիմնականում, վառ գույներով նկարագրել իրականությունը: Հակառակ կողմնորոշում ունեն ընդ-դիմադիր ուժերի գաղափարախոսությունները, որոնք, հաճախ, առաջ քաշելով ուտոպիական գաղափարներ ավելին են պահանջում իշ-խանություններից, քան նրանք կարող են տալ: Շատ դեպքերում ընդդիմադիր ուժերն աշխատում են կողմնակիցներ ձեռք բերել գեղեցիկ և հրապուրիչ կարգախոսների օգնությամբ:

Գաղափարախոսության ինտեգրացումը զանգվածային քաղաքա-կան գիտակցության հետ և վերաճումը համոզմունքների, տեղի է ունենում քաղաքականության սուբյեկտների սոցիալ-քաղաքական գոր-ծունեության ընթացքում:

Գործնականը որոշակիորեն շտկում է համապատասխան գաղա-փարախոսությունը: Սոցիալական միջավայրը նկատելի հետք է թողնում քաղաքական գաղափարախոսների մտածելակերպի վրա: Քանի որ գաղափարա-խոսությունը հոգևոր երևույթ է, անհրաժեշտություն է առաջանում գնա-հատել այն «ճշմարտացի» կամ «կեղծ»

ինացաբանական կատեգորիա-ներով: Որոշ գիտնականներ գաղափարախոսական սկզբունքների ճշմարտացիության չափանիշ են համարում քաղաքական պրակտիկան, մյուսները՝ ավելի լայն հասկացությունը՝ «սոցիալ-տնտեսական» իրա-կանությունը»<sup>4</sup>:

Առաջինների տրամաբանությունն հետևյալն է. եթե գործնականում մենք չենք հասնում անհրաժեշտ արդյունքի, ապա դրանում մեղավոր են գաղափարախոսական սկզբունքները, որոնք պետք է արդեն հիմնովին փոխվեն: Դրա հետ մեկտեղ չի բացառվում այն հանգամանքը, որ այդ սկզբունքները ժամանակին սինթեզվել են հենց քաղաքական պրակ-տիկայից: Չնայած դրան, սկզբնական գործնականը հայտարարվում է հնացած, կամ էլ ժամանակին չհասկացված:

Երկրորդ մոտեցման հեղինակները գաղափարախոսական սկզբ-բունքները դիտում են ոչ միայն որպես գործնական քաղաքական հետազոտության արդյունք, այլ ավելի շատ, ընդհանրապես, սոցիա-տնտեսական իրականության ուսումնասիրության արդյունք:

Նշված դեպքում գործնական քաղաքականը համարվում է սոցիալ-տնտեսական իրականության ածանցյալ: Այն դեպքում, երբ հստակ երևում են քաղաքական գործնականի բացասական արդյունքները, գաղափարա-խոսությունը պետք է կրկին անդրադառնա տվյալ հասարակության սոցիալ-տնտեսական իրականության հետազոտմանը և անհրաժեշ-տության դեպքում փոփոխությունների ենթարկի իր սկզբունքները: Դրանք վերանայված ձևով փոխանցվում են քաղաքական գործնա-կանին և ուղեցույց ծառայում դրա համար:

Ընդունելով գաղափարախոսության ազդեցությունը քաղաքակա-նության վրա, չպետք է ժխտել նաև քաղաքականության որոշակի ինքնուրույնությունը: Սոցիալ-քաղաքական

գործնականի մասին իրա-կան պատկերացումներ ունեցող քաղաքական գործիչը պարզ գի-տակցում է, որ որոշ պարագաներում բավարար չէ ղեկավարվել միայն գաղափարախոսական սկզբունքներով, այլ նաև անհրաժեշտ է հաշվի առնել փաստացի իրավիճակը: Պատմությանը հայտնի են բազմաթիվ օրինակներ, երբ սոցիալական հավասարության հասարակության ձևա-վորման կողմնակիցները հաճախ օգտագործում և կատարելագործում էին ըստ աշխատանքի արդյունքների նյութական բարիքների բաշխման համակարգը: Նրանք պնդում էին, որ նման քայլերով ապահովվում է վերջնական նպատակի իրականացման համար անհրաժեշտ տնտեսա-կան զարգացման բարձր աստիճանը: Ժամանակակից քաղաքական պատմության փորձը ցույց է տալիս, որ շատ քաղաքական գործիչներ կարողանում են հմտորեն զուգակցել հավատարմությունը գաղափար-րական սկզբունքներին, առանձին պրոբլեմների հաղթահարման ընթաց-քում դրսևորվող ճկունության և կոնկրետության հետ:

Ժամանակակից աշխարհում, որոշակի իմաստով, տեղի է ունենում քաղաքական գաղափարայնացման գլոբալացում: Քաղաքական գաղա-փարների շուկան այսօր հագեցված է ամենատարբեր գաղափարախո-սություններով: Բովանդակության առումով կղերական քաղաքական գաղափարները գոյակցում են ռացիոնալիստական պատկերացումների հետ, իսկ քաղաքական մոգությունը՝ Արևմուտքի պրագմատիկ քաղա-քական դոկտրինաների հետ: Տարածքաժամանակային տեսանկյունից Արևելքի քաղաքական գաղափարները համեմատվում են անտիկ քաղաքական փորձի հետ և այլն: Քաղաքական գաղափարների ար-տադրության գլոբալացման պայմաններում դժվարանում է քաղաքական գիտելիքների ունիվերսալ համակարգի ձևավորման գործը: Դրանով է բացատրվում քաղաքագիտության ճյուղային մասնագիտացման խորա-ցումը: Այդ գործընթացն իր ազդեցությունն է ունեցել բոլոր քաղաքական գաղափարախոսությունների վրա: Տարբեր գաղափարախոսական արժեքներով և նպատակներով ղեկավարվող քաղաքականության սուբ-յեկտները ձևավորում են, այսպես կոչված, կոմունիկատիվ տարա-ծությունը: Այստեղ անընդմեջ փոխանակվում են տարբեր մոտեցում-ները, գնահատականներն ու եզրահանգումները:

Վերջին ժամանակներում, ինչպես նշել ենք առաջին գլխում, հաճախ առաջադրվում է այն թեզն, ըստ որի, մոտենում է «գաղափարա-խոսության վախճանը»: Այսպես, արևմտյան երկրներում գրեթե ամե-նուրեք հաստատված պրագմատիզմը, մարդու իրավունքների ապահո-վության բարձր աստիճանը, ժողովրդավարության տիրապետությունը, կարծես, բացառում են որևիցե գաղափարախոսության առկայությունը:

Նախկին սոցիալիստական, շուկայական հարաբերություններին անցնող, երկրներում ժամանակավորապես առաջացած գաղափարա-խոսական վակուումը, թվում էր, ևս պետք է նպաստեր դրան: Միայն որոշ զարգացող երկրներում կարելի էր նկատել այն շարժումները, որոնք կրում էին հստակ գաղափարախոսական երանգ: Սակայն, ինչպես նշում է Է. Շիլսը, ներկայիս հակասություններով ու ճգնաժամերով լի աշխարհում գաղափարախոսությունը ոչ միայն չի կորցնում իր ար-դիականությունը, այլ շատերին օգնում է հաղթահարել այդ երևույթ-ները<sup>5</sup>:

Գաղափարախոսության դերը բավականին մեծ է նախկին ԽՍՀՄ-ի տարածքում առաջացած անկախ հանրապետություններում, այդ թվում նաև Հայաստանում: Այստեղ նախկին մեկ գաղափարախոսությունը փոխարինվում է նորերով: Այդ գործընթացը տեղի է ունենում քաղա-քական համոզմունքների, աշխարհայացքային հիմքերի և այլ արժեք-ների վերափոխման պայմաններում:

Գաղափարախոսական համակարգի յուրաքանչյուր ճշտում կամ վերափոխում հանգեցնում է զանգվածների վերակողմնորոշման ան-հրաժեշտությանը: Այդ հանգամանքը ստիպում է ավելի զգույշ և հաշվենկատ վարվել գաղափարախոսական սկզբունքների հետ, առավել ևս, դրանց խարխլվելուց հետո:

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԳ

### ԼԻԲԵՐԱԼԻԶՄ

Լիբերալիզմն (ազատականություն) առնչվում է ժամանակակից հասարակական-քաղաքական տերմինաբանության համար սովորա-կան դարձած այնպիսի հասկացությունների հետ, ինչպիսիք են անհատի արժեքավորման գաղափարը, մասնավոր սեփականության՝ որպես անհատական ազատության նյութական հիմքի մասին գաղափարը, իշխանության ճյուղերի տարանջատման համակարգը, իրավական պետության գաղափարը, մարդու իրավունքների և ազատությունների երաշխավորությունը, ազատ շուկայի, մրցակցության, ձեռներեցության և հավասար հնարավորությունների սկզբունքները և այլն:

Լիբերալիզմը շրջապատող աշխարհի նկատմամբ հայացքների և կոնցեպցիաների ամբողջական համակարգ է, գաղափարաքաղաքա-կան կողմնորոշումների և գիտակցության տիպ, որը ոչ միշտ է, որ զուգորդվում է կոնկրետ քաղաքական կուսակցությունների կամ քա-ղաքական ուղղությունների հետ: Լիբերալիզմը հանդես է գալիս միա-ժամանակ, որպես տեսություն, դոկտրինա, ծրագիր և քաղաքական գործնական: Նա բավականին ճկուն և դինամիկ համակարգ է, որն ընդունակ է կատարելագործվել հասարակական կյանքի փոփոխու-թյուններին զուգահեռ: Սակայն լիբերալիզմն ունի ընդհանուր արմատ-ներ և գաղափարների, սկզբունքների, կոնցեպցիաների որոշակի ան-փոփոխ համակարգ:

Լիբերալիզմ հասկացությունն օգտագործվում է նեղ և լայն իմաստ-ներով: Լայն, փիլիսոփայական իմաստով, նշանակում է հասարակա-կան կյանքի կազմակերպման նկատմամբ այնպիսի կողմնորոշում, որը կառուցված է անհատի քաղաքական և տնտեսական իրավունքների ճանաչման վրա, որոնք որոշակիորեն սահմանափակվում են օրենքով: Այդ իմաստով լիբերալիզմը դարձել է Արևմուտքի քաղաքական կուլ-տուրայի տիրապետող տիպ:

Նեղ իմաստով լիբերալիզմը հասարակական-քաղաքական շարժում է, լիբերալ կուսակցությունների գաղափարախոսությունն ու քաղաքա-կանությունը, որոնք ուղղված են շուկայական տնտեսության մեխա-նիզմների և ազատ մրցակցության պահպանմանը, պետության կար-գավորիչ գործունեության սահմանափակմանը, չափավոր սոցիալական բարեփոխումների անցկացմանը և այլն:

#### 1. Լիբերալիզմի ակունքները

«Լիբերալիզմ» հասկացությունը եվրոպական հասարակական-քաղաքական գրականության մեջ սկսեց օգտագործվել 19-րդ դարի սկզբից: Այդ տերմինն առաջին անգամ օգտագործվեց 1811 թ. Իս-պանիայում, երբ մի խումբ քաղաքական գործիչներ բնութագրեցին իրենց կողմից մշակված սահմանադրությունը որպես լիբերալ: Դրանից հետո «լիբերալներ» անվանվեցին կորտեսների (իսպանական նախա-խորհրդարանի) մի խումբ ազգայնական պատգամավորներ: Ավելի ուշ այդ տերմինը շրջանառության մեջ մտավ Անգլիայի, Ֆրանսիայի և եվրոպական այլ երկրների հասարակական կյանքում: «Լիբերալիզմ» տերմինը առաջացել է լատիներեն «Liberalis» բառից, որը նշանակում է «ազատ», «ազատության հետ առնչվող»: Հին հռո-մեական դիցարանում Լիբերոս աստվածը համապատասխանում է հին հունական Դիոնիսիոս աստծուն, որը ներքին էներգիայի և կենսական ուժերի առատության, դրանց լիակատար ազատ արձակման մարմնա-վորումն է: Պատահական չէ, որ լիբերալիզմի բոլոր բնորոշումներն ընդգրկում են ավանդույթներով չսահմանափակված անհատի ազա-տության գաղափարները: Լիբերալիզմի նման մեկնաբանության ակունքները գալիս են պատմության խորքերից: Օրինակ, հետազոտող Սալվադորին լիբերալիզմի ակունքները տեսնում է արդեն

Արխատտեղի «Պոլիտիկա» աշխատության մեջ, որտեղ բարձրացվում է «դեմոկրատիային հարող սահմանադրական կառավարության» մասին հարցը:

Լիբերալ աշխարհայացքն իր արմատներով հասնում է Վերածննդի, Ռեֆորմացիայի դարաշրջաններին, նյութական գիտական հեղափոխությանը: Նրա ձևավորման վրա մեծ ազդեցություն ունեցան ամե-նատարբեր մտածողներ, ինչպիսիք են Լոքը, Մոնթեսկյոն, Կանտը, Սմիթը, Գումբոլտը, Ջեֆերսոնը, Մեդիսոնը, Դե Թոքվիլը և այլոք: Այդ գործում մեծ ներդրում ունեն եվրոպական և ամերիկյան լուսավորության ներկայացուցիչները, ֆրանսիական ֆիզիոկրատները, գերմանական դասական փիլիսոփայության և եվրոպական դասական քաղաքատնտեսության ներկայացուցիչները:

Այդ տարբեր մտածողների հայացքների ընդհանրությունը կայանում է նրանում, որ դրանցից յուրաքանչյուրն արտահայտվում էր նախկինում արմատավորված, բայց արդեն հնացած արժեքների և մոտեցումների վերանայման, իրենց արդյունավետությունը կորցրած հասարակական-քաղաքական և պետական ինստիտուտների վերակառուցման օգտին և այլն:

Լիբերալիզմի փիլիսոփայաաշխարհայացքային հիմնական դրույթ-ները ձևավորվել են հակաֆեոդալական պայքարի ընթացքում, որոնք ուղղված էին խավերի միջև եղած սահմանների վերացմանը, իշխանությունների կամայականությունների և եկեղեցու հեղինակության դեմ: Դրանք օրգանապես կապված էին 17-18-րդ դդ. Եվրոպայում կապի-տալիզմի զարգացման հետ: Սկզբնական շրջանում լիբերալիզմը հանդես էր գալիս որպես միապետության դեմ ուղղված «երրորդ խավի» պայքարի միջոց: Օրինակ, անգլիական տորիները (թագավորական ուժեղ իշխանության և կաթոլիկության կողմնակիցները) «լիբերալներ» էին անվանում իրենց քաղաքական հակառակորդներին՝ վիգերին, որոնք պաշտպանում էին, այսպես կոչված, «նոր մարդկանց» (առևտրա-կաններ, վաշխառուներ, ձեռնարկատերեր) շահերը: Նոր ձևավորված դասակարգը, հատկապես Եվրոպայի հակաֆեոդալական հեղափոխություններից հետո, պայքար մղեց իշխանության համար: Այդ դա-սակարգին անհրաժեշտ էին տնտեսական ազատությունը, սոցիալական այն ինստիտուտների գոյությունը, որոնցում կրնդգրկվեին իրենց ներկայացուցիչները և որոնք զերծ կպահեին նորաստեղծ դասակարգը միապետերի, ազնվականության և կղերականների կամայականություններից և կապահովեին իրենց անկախությունը:

Լիբերալիզմի առաջացմանը նպաստեց նաև Ռեֆորմացիայի ժա-մանակաշրջանը և դրա հետ արմատավորվող բողոքականության բա-րոյականությունը (էթիկան): Վերջինի դրույթներն առավել ցայտուն դրսևորվեցին կալվինիզմի մեջ: Դրանց իմաստը հետևյալն է՝ Աստծո կողմից ընտրյալները կոչված են իշխելու (նույնիսկ անողոքաբար), մյուսների նկատմամբ կենսական հաջողության չափանիշը կուտակված կապիտալն է և դրա միջոցով ձեռք բերված իշխանությունը, որին հաս-նելու համար ընդունելի են բոլոր միջոցները: Դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ նոր դարաշրջանի մարդիկ կարողացան սառ-նասրտորեն աղքատացնել արևմտաեվրոպական որոշ երկրների գյու-դացիությանը, վերջինս վերածելով սովորական աշխատուժի (օրինակ, գյուղացիության վտարումը Անգլիայում զբաղեցրած հողերից 17-րդ դարում):

Մակայն այս ամենը չէր նշանակում, որ նյութական բարեկեցության հաստատման ճանապարհին պետք է կիրառվեն բացարձակապես բարոյագորկ մեթոդներ:

Բողոքականության բարոյականությունն ընդգրկում էր նաև ամենօրյա համառ

աշխատանքն ու համարյա ասքեթական ապրելակերպը: «Նոր մարդկանց» մոտ այն ձևավորում էր այնպիսի գծեր, ինչպիսիք են աշխատասիրությունը, նպատակաուղղվա-ծությունը, համառությունը, կամքի ուժն ու ինքնատիրապետումը:

Լիբերալիզմի առաջացումը Ռեֆորմացիայի հետ էր կապում Ա. Կամյուն. «Կարելի է ասել, որ Ռեֆորմացիան նախապատրաստեց կրոնական յակոբինությունը և, որոշ իմաստով, սկսեց այն, ինչը հետագայում կավարտի 1789 թիվը»<sup>1</sup>:

Կապիտալիզմի ձևավորման կրոնաբարոյական և հոգեբանական հիմքերն ուսումնասիրության արժանացան նաև Մ. Վեբերի, Վ. Զոն-բարթի, Ա. Թոյնբիի աշխատություններում:



Անգլիական բուրժուական հեղափոխության, 1688 թ. Պանծալի հեղափոխության, ԱՄՆ-ի անկախության համար մղվող պատերազմի մասնակիցները ղեկավարվում էին այն գաղափարներով, որոնցից շատերը, հետագայում, կազմեցին լիբերալ աշխարհայացքի բաղկա-ցուցիչ մասը:

Այնուհանդերձ, լիբերալիզմի ձևավորման շրջադարձային կետն է համարվում ֆրանսիական Մեծ հեղափոխությունը: Մասնավորապես, դրա կարևոր փաստաթղթերից մեկը՝ «Մարդու և քաղաքացու իրա-վունքների հռչակագիրը» (1789 թ.), լեգիտիմիզացիայի ենթարկեց դասական լիբերալիզմի գաղափարները:

Լիբերալ սկզբունքները որոշ չափով արտահայտվեցին 1830 թ. հուլիսյան հեղափոխությունից հետո Ֆրանսիայում հաստատված սահ-մանափակ սահմանադրական հասարակարգում, ինչպես նաև 1870 թվականի Երրորդ հանրապետությունում: Լիբերալները շոշափելի հա-ջողությունների հասան Շվեյցարիայում, Հոլանդիայում և Սկանդի-նավյան երկրներում: Նրանք որոշակի դեր խաղացին նաև Իտալիայի և Գերմանիայի պետական համակարգերի ձևավորման գործում: Լիբերալ գաղափարների յուրահատուկ փորձադաշտ հանդիսացան Մեծ Բրի-տանիան և ԱՄՆ-ն: Ռուսաստանում մի շարք պատճառներով լիբերալ գաղափարախոսությունն արմատավորվեց միայն 19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբին (Գրանովսկի, Ստրուվե, Չիչերին, Միլյուկով):

Հայ իրականության մեջ լիբերալ-բուրժուական հոսանքը ձևավորվել է 19-րդ դ. 50-60-ական թթ.: Հայ լիբերալները հանդես էին գալիս կղերաֆեոդալական հոսանքի դեմ՝ հայ հասարակական կյանքի բուր-ժուականացման նշանաբանով, հին կարգերը խաղաղ ճանապարհով վերափոխելու, եվրոպական առաջադիմական ուղու վրա դնելու համար: Նրանք կողմնակից էին հայ ժողովրդի ազգային ազատագրությանն ու առաջադիմությանը, բայց ոչ թե հեղափոխությանը, այլ բարեփոխում-ներով: Հայ լիբերալները մեծ տեղ էին տալիս նաև ազգային լուսա-վորության, դպրոցի, լեզվի, գրականության ու գիտության զարգացմանը: Լիբերալիզմի աչքի ընկնող ներկայացուցիչներից էին Նազարյանը, Ռուսինյանը, Արծրունին, Օտյանը և ուրիշներ: Լիբերալիզմը ձևավորվել, ամրապնդվել և զարգացել է տարբեր պատմասոցիալական և կուլտուր-ազգային պայմաններում: Որպես կանոն առանձնացվում են պատմականորեն ձևավորված երկու լիբե-րալ ավանդություններ՝ անգլոսաքսոնական և մայրցամաքային-եվրո-պական:

Անգլոսաքսոնական ավանդությունը 19-րդ դ. առաջ էր քաշում ազատ առևտրի, ինտերնացիոնալիզմի, սահմանադրական նորմերի զարգաց-ման և ղեմնկրատական արժեքների ամրապնդման գաղափարները: Զաղաքական դաշտում այդ ավանդության կարևորագույն սկզբունք-ների և արժեքների հիմնական կրողն էր Մեծ Բրիտանիայի լիբերալ կուսակցությունը, որը 19-րդ դ. երկրորդ կեսին դարձավ երկրի երկու ամենաազդեցիկ կուսակցություններից մեկը: Լիբերալների քաղաքա-կան պայքարի շնորհիվ ընդունվեցին 1867 և 1884 թթ. ընտրական օրենքները:

Նրանց անվան հետ է կապված հատկապես 1918 թ. համընդհանուր ընտրական իրավունքի մասին օրենքը: Լիբերալ կուսակցությունը սկսեց զիջել իր դիրքերն այն ժամանակ, երբ քաղաքական ասպարեզ դուրս եկավ լեյբորիստական կուսակցությունը, որն իր կողմը քաշեց լիբե-րալների հենարան հանդիսացող բանվոր դասակարգին: 1940-1945 թթ. լիբերալները վերջին անգամ մասնակցեցին կռալիցիոն կառավարու-թյան ձևավորմանը:

Մայրցամաքային-եվրոպական ավանդությունն իր հիմնական շեշտը դնում էր ազգային համախմբման գործընթացների զարգացման, տրն-տեսական, քաղաքական և ինտելեկտուալ ավտորիտարիզմի բոլոր ձևերի վերացման վրա: Պատմական պայմանների բազմազանության հետևանքով լիբերալիզմը տարբեր երկրներում յուրահատուկ բովանդա-կություն ընդունեց: Աստիճանաբար այդ հոսանքում առանձնացան երկու մրցակից ուղղություններ՝ չափավորներ և պրոգրեսիստներ: Վեր-ջիններն, իրենց հերթին, ևս ներկայացնում էին տարբեր գաղափարա-խոսական պլատֆորմներով (սկսած լիբերալներից, վերջացրած ռադի-կալներով):

Լիբերալիզմի բազմազանությունը բացատրվում է այն հանգաման-քով, որ տարբեր երկրներում տնտեսական ազատությունների և սահմանադրական բարեփոխումների ապահովման խնդիրները հանդես էին գալիս սրության տարբեր աստիճաններով: Դրան նպաստող լրացուցիչ գործոն հանդիսացավ ազգային վերածննդի և միավորման պրոբլեմը: Իտալիայում և Գերմանիայում լիբերալիզմը դարձավ ազգային միասնության հաստատման կարևորագույն գործոններից մեկը:

## 2. Գասական լիբերալիզմ

Լիբերալ աշխարհայացքի նախադրյալն է մարդու անհատականու-թյան ընդգծումը, նրա ինքնահաստատման բնական իրավունքի մասին պատկերացումը: Պատահական չէ, որ լիբերալիզմի արժեքների և գա-ղափարների համակարգը սկզբնական փուլում ընդգրկում էր անհա-տական ազատության և անձի արժանապատվության գաղափարները:

Անհատականության գաղափարը զարգանում էր անհատի ազա-տության, կարծիքների և համոզմունքների պլյուրալիզմի և այլ հումա-նիստական, մարդասիրական գաղափարների հետ զուգահեռ: Դա-սական լիբերալիզմի հիմնաքարերից է 17-րդ դարի խոշորագույն փիլիսոփա Ջ. Լոքի կողմից մշակված «բնական իրավունքների» տեսությունը, ըստ որի առանձին վերցրած անհատը հակադրվում է պետությանն ու հասարակությանը: Լոքի համոզմամբ, մարդը պետք է ինքնուրույն տնօրինի իր սեփական բախտը:

Այնուհայտ է, որ դասական լիբերալիզմի ներկայացուցիչների կողմից «ազատություն» հասկացությունը դիտվում էր բացասական առումով (ազատ լինել քաղաքական, կրոնական և սոցիալական վերահսկողու-թյունից): Նման մոտեցումը հստակ երևում է Թ. Հոբսի հայտնի ար-տահայտությունից. «Մարդկանց ազատությունը կախված է օրենքների լռությունից»<sup>2</sup>: Ուստի, «Պայքար մարդու իրավունքների համար» կարգախոսը, հիմնականում, ուղղված էր պետության դեմ: Ազատության համար մղվող պայքարը նշանակում էր մարդու ինտելեկտուալ, ֆիզի-կական և տնտեսական ազատության արտաքին սահմանափակումների վերացում: Այդ պատճառով դասական լիբերալիզմը հանդես էր գալիս որոշակի խավերի արտոնությունների և ժառանգական իշխանության բոլոր ձևերի դեմ:

Կառավարության առաջնային պարտականությունը լիբերալները համարում էին նեղ իրավաբանական, բացարձակ հումանիտար ֆունկցիան՝ մարդու իրավունքների պաշտպանությունը: Պետության հիմնա-կան պարտականությունը՝ ընդհանուր կազմակերպական ստեղծարար գործունեությունը, համարվում էր հասարակության բնականոն զար-գացման նկատմամբ բռնության գործադրում: Այստեղից է բխում լիբերալիզմի տնտեսական կոնցեպցիան, որը հենվում է պետության որևիցե միջամտությունից զուրկ ազատ, մասնավոր ձեռներեցության վրա:

Լիբերալիզմի հիմնական գաղափարը՝ անհատականության դրսևո-րումը, ընկած է յուրաքանչյուր մարդու կյանքի, ազատության և մաս-նավոր սեփականության իրավունքների հիմքում, հավասարեցնում է «ազատություն» և «մասնավոր սեփականություն» հասկացությունները: Դրանք հզոր խթան հանդիսացան արտադրողական ուժերի, հասարա-կության զարգացման և քաղաքական դեմոկրատիայի հաստատման համար: Օրինակ, Գումբոլդտը մասնավոր սեփականությունը դիտում էր որպես ազատության երաշխիք<sup>3</sup>:

Անհատական ազատության գաղափարի հաստատմանը զուգահեռ առանձնահատուկ տեղ էր հատկացվում նաև անհատի գործերին պետության միջամտության շրջանակների որոշմանը: Այն ոլորտը, որը ենթակա չէ արտաքին միջամտության, դիտվում էր որպես բնական ազատության կիրառման և, հետևաբար, բնական իրավունքի ոլորտ:

Լիբերալների պնդումով մարդը գոյացել է հասարակությունից և պետությունից առաջ:

Մինչպետական ժամանակաշրջանում նա արդեն օժտված է եղել որոշ բնական իրավունքներով, որոնք պետք է համարել անձեռնմխելի:

Այդ դրույթից բխում են քաղաքատնտեսական, իրավական և պետական-քաղաքական կոնցեպցիաները, որոնք հասարակության բոլոր անդամների համար ստեղծում են

հավասար հնարավորություններ սեփական կարողությունները կիրառելու ուղղությամբ, ինչպես նաև նպատակների և շահերի իրականացման առումով հավասար իրավունքներ: Դրանից բխում են սոցիալական և տնտեսական ոլորտներում գործող ազատ մրցակցության և ազատ շուկայի սկզբունքները, Laissez faire, Laissez passer: Այդ կապակցությամբ, լիբերալիզմի կարևորագույն սկզբունքն է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում արմատավորված պլյու-րալիզմը. սոցիալական ոլորտում՝ դասակարգերի, շերտերի, շահագրգռված խմբերի բազմությունը, մշակութային ոլորտում՝ զանազան էթնիկական, տարածաշրջանային և այլ կուլտուրաների, զանգվածային լրատվամիջոցների, կրոնական ուղղությունների գոյությունը, քաղաքա-կան ոլորտում՝ կուսակցությունների, խմբավորումների, ակումբների և այլ կազմակերպությունների ազատ գործունեությունը:

Նշված մոտեցումները պայմանավորում են բոլորի հավասարությունը օրենքի առջև, իրավական պետության, ժողովրդավարության և պաշտամենտարիզմի գոյությունը, ինչպես նաև, այսպես կոչված, «նվազագույն պետության» ձևավորումը: Դասական լիբերալիզմի ներկայացուցիչների կարծիքով պետությունը պետք է իրականացնի միայն ամենաանհրաժեշտ ֆունկցիաները՝ հասարակական կարգ ու կանոնի ապահովումը և երկրի պաշտպանությունը արտաքին թշնա-միներից: Պետության և հասարակության փոխհարաբերության մեջ գերակայությունը տրվում էր վերջինին: Եթե հասարակությունը մըշ-տական մեծություն է, ապա պետությունը՝ անանցյալ:

Միևնույն ժամանակ, լիբերալիզմը չի կարելի համարել որպես անսահմանափակ, անարխիսիայի հասնող ազատության ջատագովո-թյուն: Անհատի ազատության մասին գաղափարի բաղկացուցիչ մասն է կազմում նաև հասարակության առջև յուրաքանչյուր մարդու պա-տասխանատվության սկզբունքը:

Լիբերալիզմի, հատկապես չափավոր թևի, ներկայացուցիչները ամբողջովին չէին հերքում պետության ֆունկցիաները հասարակական կյանքի բոլոր ասպարեզներում: Ի սկզբանե, նրանց կողմից ընդունված էր այն գաղափարն, ըստ որի պետության պարտականությունն է առանձին անհատի իրավունքների և ազատության պաշտպանությունը: Այդ դրույթը տարբեր մեկնաբանություններով առաջ են քաշել դեռևս Ա. Սմիթը և Ի. Կանտը: Հատկանշական է, որ լիբերալիզմի հիմնադիրները սոցիալապես անապահով խավերի պաշտպանությունը համարում էին պետության կարևոր պարտականություններից մեկը: Դրա ապահովման նպա-տակով, Կանտն անգամ, առաջարկում էր հատուկ հարկեր սահմանել հարուստների համար:

Լիբերալիզմի փիլիսոփայական հիմքում ընկած է դեռևս եվրոպական վերածննդից եկող աթեիստական ավանդույթը, որը հետին պլան է մղում Աստծուն, հայտարարելով մարդուն «բնության թագավոր»: Այդ դրույթի կիրաման արգելակումը անհնարին է դարձնում անհատի ազատության դրսևորումը: Դրա հիմքում ընկած է լիբերալիզմի այն պնդումը, ըստ որի մարդը իրավունք ունի և ընդունակ է կառավարել պատմական գործընթացը:

Սակայն Աստծո տեղը դատարկ չի մնում: Լիբերալ գաղափա-րախոսությունն այն հատկացնում է օրենքին: Աթեիզմն օրինաչափորեն մոտեցնում է հասարակությունն այնպիսի իրավիճակի, երբ բարոյա-կանությունը, հանդիսանալով հոգևոր երևույթ, չի կարողանում շտկել մարդու վարքագիծը: Ստեղծվում են քառսի և անարխիսիայի համար անհրաժեշտ նախադրյալներ: Միջլիբերալ պետականության տիպերի հիմքում ընկած բարոյական կարգավորիչների դերն, այդ պայման-ներում, ստանձնում է օրենքը:

Իրավական պետությունը որոշակի շրջանակների մեջ է դնում մարդկանց գործունեությունը:

Լիբերալիզմն ու դեմոկրատիան, պայմանավորելով մեկը մյուսին, միևնույն ժամանակ տարբերվում են միմյանցից: Դեմոկրատիան իշխանության իրականացման ձև է, և մեծամասնության իշխանության օրինականացման մասին ուսմունք: Լիբերալիզմն, իր հերթին, որոշում է իշխանության սահմանները:

Համաձայն լիբերալ ավանդության, դեմոկրատիան, շատ անգամ, համեմատվում է օրենքի առջև բոլոր քաղաքացիների ձևական հա-վասարության հետ: Այդ պատճառով դասական լիբերալիզմը դեռևս ի հայտ չի բերում ազատության և հավասարության միջև գոյություն

ունեցող հակասությունները: Անհատականությունն, այս դեպքում, դիտվում է որպես անհատների ինքնաարտահայտության դրսևորում ընդհանուր քաղաքացիական նպատակների իրականացման ուղղու-թյամբ: Առանձին քաղաքացու անհատականության զարգացումը, տվյալ դեպքում, չի հակասում մյուսների նման ձգտումներին:

### 3. Արժեքների վերականգնումն ու նոր լիբերալիզմի ձևավորումը. Նեոլիբերալիզմ

19-րդ դ. վերջի և 20-րդ դ. սկզբի լիբերալ ուղղության ներկայա-ցուցիչների աշխատությունները, հիմնականում, ուղղված էին դասական ժառանգության հարմարեցմանը մշտապես փոփոխվող պայմաններին: Արդեն 19-րդ դ. երկրորդ կեսին կապիտալիզմը ցույց տվեց իր խոցելի կողմերը՝ զանգվածային գործազրկություն, չքավորություն, անգրագի-տություն և սոցիալական օտարացում: Ազատ մրցակցության սկզբ-բունքների կենսագործումը, որոնք կոչված էին շուկայից դուրս մղել թույլերին, հանգեցրեց արտադրության համակենտրոնացմանն ու խոշոր արդյունաբերողների տիրապետությանը: Եթե ֆեոդալիզմի դեմ պայ-քարում և կապիտալիստական հարաբերությունների ծավալման պայ-մաններում ազատ շուկայի և «սահմանափակ պետության» մասին գաղափարները առաջադիմական էին, ապա ազատ շուկայական հարաբերությունների արմատավորումից հետո դրանց բովանդակու-թյունը համապատասխանում էր մրցակցության անսահմանափակ ազատության հաստատման գաղափարին: Լիբերալիզմի հիմնադրույթ-ներն իրենց վրա ստանձնեցին բնակչության արտոնյալ խավերի շահերի պաշտպանության ֆունկցիաները: Պարզ դարձավ, որ շուկայի անսահ-մանափակ ազատությունն ամենևին չի ապահովում, ինչպես նա-խատեսվում էր, սոցիալական ներդաշնակությունն ու արդարությունը:

Այսպես 19-րդ դարում առաջացավ լիբերալիզմի առաջին ճգնաժամը: «Բարեփոխումների կուսակցությունը» վերափոխվեց «ստատուս-քվոյի կուսակցության»: Հետին պլան մղվեցին ժամանակի ամենաազդեցիկ քաղաքական շարժման՝ բանվոր դասակարգի շահերը: Լիբերալիզմը դադարեց ընդգրկել իր մեջ այն ուժերին, որոնք հանդես էին գալիս ստատուս-քվոյի դեմ, և դրանով իսկ անցավ իր նախկին հակառա-կողմների կողմը: Սակայն, այս անգամ ևս, լիբերալիզմը կարողացավ հարմարվել ստեղծված իրավիճակին և արագորեն վերափոխվեց:

Պատահական չէ, որ լիբերալ գաղափարախոսության ներկայա-ցուցիչներից շատերը հանդես եկան դասական լիբերալիզմի հիմնական դրույթները վերանայելու առաջարկով: Նրանք կոչ էին անում սահ-մանափակել կորպորացիաների կամայականությունները և թեթևացնել բնակչության առավել թշվառ զանգվածների վիճակը: Այդ գործում աչքի ընկան անգլիական քաղաքագետներ Հոբսոնը, Գ-րինը, Հոբհաուզը, Գերմանիայում՝ բողոքական քահանա և հրապարակախոս Նաումանը, տնտեսագետներ՝ Բեյկեն, Օյքենը, Իտալիայում՝ Կրոչեն, ԱՄՆ-ում՝ Ուորդը, Քրոուլին, Բիրդը, Դ-յուին և ուրիշներ: Նրանք ձևակերպեցին լիբերալիզմի նոր սկզբունքները, որոնք էապես թարմացրին այդ հոսանքը, որն անվանվեց «նոր լիբերալիզմ», «սոցիալական լիբե-րալիզմ» կամ «լիբերալ ռեֆորմիզմ»:

Լիբերալիզմի ջատագովները ստիպված եղան այլ տեսանկյունից դիտել պետության գոյության իմաստը: Այն համարվեց սոցիալական կայունության գործոն:

Քաղաքականության ասպարեզում լիբերալիզմի նոր ուղղությունն իր արտացոլումը գտավ այնպիսի ռեֆորմիստական շարժումներում, ինչպիսիք էին պրոգրեսիզմը ԱՄՆ-ում, լոյդ-ջորջիզմը (լիբերալ կու-սակցությունից նշանակված վարչապետի անունով)՝ Անգլիայում, ջոլիտիզմը (լիբերալ վարչապետի անունով)՝ Իտալիայում և այլն: Սկզբնական լիբերալ արժեքների՝ մարդու ազատությունների և իրավունքների պաշտպանությունն ապահովվելու նպատակով լիբերալ կուսակցությունները գործնականում սկսեցին հոգալ պետության կար-գավորիչ ֆունկցիաների ընդլայնման մասին: Այսպես, ընդունելով պետության միջամտության ուժեղացմանը վերաբերող մի շարք որո-շումներ Մեծ Բրիտանիայի լիբերալ կառավարությունն արդեն 1892-1895

թթ. փաստորեն հրաժարվեց դասական լիբերալիզմի սկզբունք-ներից: Հետագայում նման քայլերի դիմեցին նաև այլ երկրների կառավարությունները: Դրանով իսկ մերժվեց պետության միայն բացա-սական դերը հասարակական կյանքում: Այդ մոտեցումը ստիպեց փոխել նաև «ազատություն» հասկացության մասին պատկերացումները: Դրանախկին, բացասական (նեգատիվ) պատկերացումները փոխարինվեցին դրական (պոզիտիվ) մեկնաբանություններով: Ըստ դրանց, մարդու լիարժեք ազատությունն ապահովվելու գործում բավարար չէ միայն գերծ պահել նրան արտաքին միջամտությունից և կամայականություններից: Անհրաժեշտ է ստեղծել բոլոր պայմանները անհատի իրավունքների դրսևորման համար, բարելավել նրա միջավայրը: Իսկ այդ ուղղությամբ, ըստ նոր մոտեցման, որոշակի դրական դեր կարող էր խաղալ նաև պետությունը, հանդիսանալով անհատի իրավունքների և ազատությունների ապահովության երաշխիք:

«Ազատություն» հասկացության պոզիտիվ մեկնաբանությունն ի հայտ բերեց իր և «հավասարություն» հասկացության միջև եղած հակա-սությունները, որոնք համարյա բացառվում էին դասական լիբերալիզմի կողմից: Այդ կապակցությամբ, լիբերալ-ռեֆորմիզմը ցանկանում է հաշտեցնել այդ երկու երևույթները: Նա ցանկանում է գտնել անհատի ազատության ընդլայնման այն չափը, որը չի խանգարում ազատ լինելու նաև մյուսներին, հետևաբար, հավասար պայմաններ է ստեղծում բոլոր քաղաքացիների համար: Դրանով իսկ, մարդու ազատությունն ան-միջապես կապվում է իրավահավասարության հետ:

Ըստ նոր լիբերալիզմի, անհատը չի կարող համարվել ազատ, եթե դրանով սահմանափակում է մյուսների ազատությունը<sup>4</sup>: Ելնելով այդ դրույթից, նոր լիբերալիզմը թեքվեց դեպի ժողովրդավարության և սոցիալական հավասարության գաղափարները, որոնք առաջադրվել էին մարքսիզմի և սոցիալ-դեմոկրատիայի միջոցով և ժամանակին արհամարհվում էին դասական լիբերալիզմի կողմից: Հիմք դրվեց «հավասար հնարավորությունների հասարակության» կոնցեպցիային, որը պետության վրա դրեց քաղաքացիների հավասար ելակետային հնարավորություններն ապահովելու պարտականությունը:

Շուտով հասավ լիբերալիզմի երկրորդ ճգնաժամը (Առաջին աշխարհամարտից հետո): Այդ ժամանակաշրջանում եվրոպական շատ պետություններ նախընտրեցին պետական շինարարության ոչ լիբերալ և հակալիբերալ սկզբունքները: Մոնոպոլիաների քաղաքական և ֆին-նանսական իշխանության ամրապնդման պայմաններում ազատ առև-տորի և հավասար հնարավորությունների լիբերալ սկզբունքներն օրեցօր ենթարկվում էին փոփոխության և սահմանափակվում, ինչը հանգեց-նում էր դրանց արժեքազրկմանը: Ճգնաժամից դուրս գալու նպատակով լիբերալիզմի կողմնակիցների մի մասը ձգտում էր մերձենալ սոցիալ-դեմոկրատիայի, իսկ մյուսը՝ խոշոր մոնոպոլիստական էլիտայի հետ: Լիբերալիզմի քաղաքական վերակենդանացումը տեղի ունեցավ նրան սոցիալական երանգներ տալու միջոցով: Այդ քայլը նպատակ էր հե-տապնդում շարժման մեջ ընդգրկել ոչ ունևոր խավերին ևս: Սոցիալ-լական ակտիվ քաղաքականության անցկացման անհրաժեշտությունն իր արտացոլումը գտավ լիբերալիզմի «սոցիալական պետության», «բարեկեցության պետության» և այլ կոնցեպցիաներում:

Այսպիսով, վերը նշված 2 ճգնաժամերի միջև ընկած ժամանա-կահատվածը կարելի է համարել լիբերալ-ռեֆորմիզմի ձևավորման փուլ, որը վերագնահատեց դասական լիբերալիզմի հիմնական սկզբունքները:

Նոր լիբերալիզմի ձևավորումն անշրջելի դարձավ 20-րդ դ. 30-ական թվականների տնտեսական մեծ ճգնաժամից հետո: Այդ ժամանա-կաշրջանում մեծ հեղինակություն ձեռք բերեցին տնտեսագետ Քեյնսի գաղափարները, որոնք կառուցված լինելով լիբերալիզմի հիմնական սկզբունքների վրա, ընդունում էին նաև տնտեսական և սոցիալական ոլորտներում պետության կարգավորիչ գործունեության անհրաժեշտությունը:

Ակնհայտ է, որ եթե նոր լիբերալիզմը չգնահատենք որպես հասա-րակական-քաղաքական մտքի նոր ուղղություն, ապա կարելի է պնդել, որ դա լիբերալիզմի արմատական

վերամշակման ենթարկված տար-բերակն է: Հատկանշական է, որ հումանիտար գիտությունների այն ներկայացուցիչները, որոնք հավատարիմ էին մնացել դասական լիբերալիզմի սկզբունքներին, կտրականապես մերժեցին դրանց նոր մեկնաբանությունը: Ավանդական լիբերալիզմին հարող Ֆ. ֆոն Հայեկը դա անգամ անվանեց «դեպի ստրկություն տանող ճանապարհ»: Սեփական հայացքների համակարգն իրենք անվանեցին «19-րդ դարի լիբերալիզմ», «դասական լիբերալիզմ» և վերջապես «նեոլիբերալիզմ»:

Արևմտյան Եվրոպայի երկրներից շատերում լիբերալ կուսակցու-թյունները զիջեցին իրենց դիրքերը և հայտնվեցին հասարակական-քաղաքական կյանքի ծայրամասերում: Այդ նահանջը սկսվել էր դեռևս 19-րդ դ. կեսերից: Այսպես, Գերմանիայի միավորման գործում, այն ինչը չհաջողվեց լիբերալներին, իրականացրեց կոշտ քաղաքականության կողմնակից, կանցլեր Օ. Բիսմարկը: Չնայած, որ Իտալիայում լիբերալ գաղափարները բավական ազդեցիկ էին, 20-րդ դ. 20-ական թթ. սկզբին լիբերալ կուսակցություն, որպես այդպիսին, գոյություն չուներ: Ավելին, Իտալիայի լիբերալները, հետագայում ընդունելով կարգ ու կանոնի հաստատման գործում ֆաշիզմի դրական դերը, մտան Բ. Մուսոլինիի կառավարության մեջ:

Լիբերալիզմի թուլացմանը նպաստեց նաև այն հանգամանքը, որ 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին տասնամյակներում գործնա-կանում արդեն կիրառվել էին լիբերալիզմի հիմնադրույթները: Շատերի մոտ դա ձևավորեց այն համոզմունքը, ըստ որի լիբերալների օրակարգն արդեն սպառվել էր և այդ քաղաքական ուժն այլևս անելիք չուներ: Հենց իրենք՝ լիբերալները, առաջնային խնդիր էին համարում ոչ թե սեփական գաղափարախոսության հետագա թարմացումը, այլ բոլոր ձեռքբերում-ների և նվաճումների պահպանումը: Համարյա բոլոր գոյություն ունեցող կոնսերվատիվ կուսակցություն-ներն ընդունեցին պետական-քաղաքական համակարգի այն բոլոր նորույթները, որոնք իրականացվել էին լիբերալների նախաձեռնու-թյամբ: Քաղաքական ասպարեզ դուրս եկան և գնալով հզորացան սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները: Այլ կերպ ասած, աջից լիբերալիզմի գաղափարները «խլեցին» կոնսերվատորները, իսկ ձախից սոցիալ-դեմոկրատիան: Դրանով իսկ լիբերալ կուսակցությունների էլեկտորալ հիմքը էռոզիայի ենթարկվեց:

Արդյունքում, Երկրորդ աշխարհամարտից հետո, սոցիալական բա-րեփոխումների անցկացման նախաձեռնողը Արևմտյան Եվրոպայում դարձավ սոցիալ-դեմոկրատիան: ԱՄՆ-ում այդ դերը ստանձնեց դե-մոկրատական կուսակցությունը, որը դեռևս Ռ-ուզվելտի «նոր կուրսի» ժամանակներից համարվում էր լիբերալիզմի և սոցիալ-ռեֆորմիզմի կողմնակիցը:

Երկրորդ աշխարհամարտից անմիջապես հետո լիբերալ կուսակցու-թյունները փորձեցին համախմբվել և կոորդինացնել իրենց գործունեու-թյունը: Այդ նպատակով 1947 թ. ապրիլին Օքսֆորդում հրավիրվեց լիբե-րալ ինտերնացիոնալի հիմնադիր համագումարը: Այդ կազմակերպու-թյան մեջ ընդգրկված էին աշխարհի 52 կուսակցություններ, որոնց կենտրոնը գտնվում էր Լոնդոնում:

Ժամանակակից լիբերալ կուսակցություններն իրենց կշռով և էու-թյամբ զգալիորեն տարբերվում են միմյանցից: Այսպես Ճապոնիայի և Ավստրալիայի լիբերալ կուսակցություններն առավելապես արտահայ-տում են կոնսերվատիվ ուժերի շահերը: Նրանք անգամ անդամակցում են զարգացած կապիտալիստական երկրների կոնսերվատիվ կուսակ-ցությունների յուրովի ինտերնացիոնալում՝ Միջազգային դեմոկրատա-կան միությունում: Լիբերալ հոսանքի չափավոր թևն են ներկայացնում Գերմանիայի ազատ դեմոկրատները, Մեծ Բրիտանիայի լիբերալ կու-սակցությունը, Ֆրանսիայի ռադիկալ (արմատական) սոցիալիստները: Յենտրիստական դիրքորոշում ունեն, օրինակ, Ֆրանսիայի Սերվան-Շրեյդերի և Ժիսկար դ' Էսթենի կուսակցությունները: Լիբերալիզմի ձախ թևը ներկայացված է առավելապես սկանդինավյան լիբերալ կուսակ-ցություններով:

Ինչպես երևում է ժամանակակից լիբերալիզմը միատարր չէ: Այստեղ կարելի է ընդգծել երեք հիմնական ուղղություններ՝ չափավոր, ձախ և պահպանողական: Չափավորներն

ընդունում են բոլոր այն փոփոխությունները, որոնց ենթարկվեց լիբերալիզմը հարմարվելով իրականությունը: Կապիտալիզմի քննադատությունը ձախ լիբերալ ուղղության ներկայացուցիչների կողմից մոտենում է սոցիալ-ռեֆորմիզմին:

Պահ-պանողական (կամ աջ լիբերալ) ուղղության կողմնակիցները ձգտում են դասական լիբերալիզմի ազատ մրցակցության սկզբունքները համա-կերպել պետության չափավոր, սահմանափակ միջամտության հետ: Անխախտ է մնում նրանց հավատը տարերային, ազատ շուկայի, որպես համընդհանուր դեղամիջոցի նկատմամբ:

Հատկանշական է ձախերի և աջերի վեճը պետական միջամտության չափի շուրջ: Ըստ ձախերի հայացքների, պետության ուշադրության կենտրոնում պետք է լինի բնակչության բացարձակ մեծամասնությունը, քանի որ, ի տարբերություն փոքրամասնություն կազմող ունևոր խավի, այն ամենօրյա հոգատարության կարիք ունի: Աջերը պնդում են, որ դրանով իսկ խրախուսվում է առանց ռիսկի դիմելու, ազատությունը մերժելու ցանկությամբ ապրող, պետության հաշվին գոյատևող մարդու կերպարը: Որպեսզի հասարակությունը հարստանա անկախ, հպարտ, նախաձեռնող և ձեռներեց մարդկանցով, ըստ աջ լիբերալների, պետու-թյունը պետք է ամեն կերպ աջակցի այդպիսի քաղաքացիների գործունեությանը: Միայն դրանց խրախուսումը կարող է կտրուկ բարձրացնել տնտեսական համակարգի արդյունավետությունը<sup>5</sup>:

Այս հարցում առավել հստակ դիրքորոշում ունեն ամերիկյան լիբերալները: Հանդես գալով պետական կարգավորման չափազանց կենտրոնացված ձևերի դեմ և առավելությունը տալով դրանց ճկու-նությանը, նրանք ցանկանում են ֆեդերալ կարգավորող մարմինները ոչ թե փոխարինել տարերայնորեն գործող տեղական մարմիններով, այլ իրականացնել աշխատանքի օպտիմալ բաժանումը դրանց միջև:

Վեճի առարկա է հանդիսանում նաև հասարակական-քաղաքական համակարգի արդարացիության մասին հարցը: Աջ լիբերալները գտնում են, որ կապիտալիստական քաղաքակրթության արդարացիության մա-սին գաղափարի ապացուցումը ամուր հիմքի վրա կղնի այդ հասա-րակարգը: Նրանք չեն ընդունում «ձախերի» այն պնդումները, որոնք արդարությունն անմիջապես կապում են նյութական պահանջմունքների բավարարման հետ: Աջ լիբերալների կարծիքով «ձախերի» գլխավոր սխալը կայանում է նրանում, որ նրանք շփոթում են մարդու հիմնական (ֆունդամենտալ) իրավունքները սոցիալական իրավունքների հետ, որոնք անմիջապես չեն բխում մարդու էությունից և երկրորդական են առաջինների համեմատ: Ըստ լիբերալների, սոցիալական իրավունք-ները միայն հենակներ են, որոնք որոշակի պայմաններ են ստեղծում քաղաքացիների գոյության համար: Դրանցից են, օրինակ, աշխատանքի, ծերության և այլ նպաստներ ստանալու իրավունքները և այլն:

Աջ լիբերալների մեծամասնությունը «սոցիալական արդարություն» և «հավասար հնարավորություններ» հասկացություններից առաջնու-թյունը տալիս է վերջինին: Իրենց կարծիքով, պետությունը պետք է ապահովի բոլոր քաղաքացիների հավասարությունը օրենքի առջև, քաղաքական կյանքում ու սոցիալ-տնտեսական ոլորտում նրանց մասնակցության հավասար իրավունքները: Ըստ իրենց, դա է իրական հավասարությունը: Ժամանակակից լիբերալիզմը հայտնվել է նոր ճգնաժամի մեջ: Այն կապված է ԳՏՀ-ի աճող ազդեցության, գլոբալ պրոբլեմների սրման, քաղաքակրթությունների միջև ծագող հակասությունների հետ: Դրանց հաղթահարման նպատակով այսօր մշակվում են սոցիալական գլո-բալիզմի, համաշխարհային քաղաքական կառավարվող լրատվական միջավայրի ձևավորման ուղղությամբ: Այս ամենը սկզբունքորեն հա-կասում է լիբերալիզմի հիմնական դրույթներին:

Թվում էր, թե նախկին ԽՍՀՄ հանրապետություններում և Արևելյան Եվրոպայի երկրներում պաշտոնական բնույթ ընդունած լիբերալ գաղափարախոսությունը նոր լիցք է հաղորդելու այդ հոսանքին: Սակայն «շուկային թերապիայի» լիբերալ քաղաքականությունն այդ տարածաշրջաններում ցույց տվեց իր սահմանափակվածությունը և պրոբլեմները միակողմանիորեն դիտարկելու հակվածությունը: Հարցա-կանի տակ դրվեց տնտեսական և այլ ոլորտներից պետության հե-ռացման անհրաժեշտությունը: Չարդարացված սոցիալական շերտավորումը,

բնակչության զգալի զանգվածների մարգինալացումը հասարակությունը կանգնեցրին ակտիվ սոցիալական քաղաքականության մը-շակման անհրաժեշտության առջև: Դրանից բացի սրվեցին ազգային ավանդույթների պահպանմանը վերաբերող խնդիրները: Ուժեղացավ հասարակական կողմնորոշումը պահպանողական արժեքների նկատմամբ: Գեռևս ամուր հիմքերի վրա էր գտնվում սոցիալիզմի գաղափարը:

Սակայն լիբերալ կուսակցությունների և գործիչների քաղաքական ակտիվության անկումը դեռևս չի նշանակում, որ վայրէջք է կատարում նաև լիբերալ գաղափարախոսությունը:

Լիբերալիզմի քաղաքական և սոցիալական փիլիսոփայության նկատմամբ հետաքրքրությունն աճում է հատկապես ակադեմիական և համալսարանական շրջաններում: Լիբերալիզմի, որպես քաղաքական հոսանքի, դերը գուցե և նվազել է, սակայն որպես աշխարհյացքային տեսական համակարգ այն շարունակում է զգալի ազդեցություն ունենալ մարդկային հասարակության վրա: Համակարգային վերլուծության ենթարկելով ներկա գործընթաց-ները կարելի է եզրակացնել, որ լիբերալիզմի, այսպես կոչված անկումը, դա պարզապես նրա ձևափոխումն է, համապատասխանեցումը նոր իրականությանը:

Արևմուտքի հասարակագետները ելնում են այն դրույթից, որ ներկայումս գոյություն ունեն տարբեր լիբերալիզմներ, այլ ոչ թե մեկը: Սակայն այդ բարդ խճանկարում հնարավոր է առանձնացնել երկու հիմնական բլոկները:

Առաջին բլոկը հարում է լիբերալ այն դրույթներին, որոնք ելակե-տային են համարում ազատության նեգատիվ մեկնաբանությունը, մինիմալ պետության և ազատ շուկայի կոնցեպցիաները: Այդ հոսանքը արևմտաեվրոպական երկրներում շատ անգամ անվանվում է «նեո-լիբերալիզմ» և համապատասխանում է ԱՄՆ-ի Չիկագոյի դպրոցին:

Ըստ էության դրանք տնտեսական պահպանողականներն են, որոնք որոշ փոփոխություններով կրկնում են դասական լիբերալիզմի դր-րույթները:

Երկրորդ բլոկը միջանկյալ տեղ է գրավում սոցիալ-դեմոկրատիայի և պահպանողականության միջև: Ընդ որում ձախից այն հարում է առաջինին, իսկ աջից՝ երկրորդին: Այս ուղղությունը, ըստ հասարակարգերի, արտացոլում է ժամանակակից լիբերալիզմի բուն էությունը: Տերմինաբանական աղավաղումներից խուսափելու համար այդ հո-սանքն անվանվում է «սոցիալական լիբերալիզմ» կամ «լիբերալ-դեֆորմիզմ»: Իր հերթին այդ գաղափարական հոսանքը տարբեր երկրներում դրսևորվում է տարբեր եղանակներով («աջ» կամ «ձախ» թեքումներով):



## ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

### ԿՈՆՍԵՐՎԱՏԻՉՄ

Հասարակական-քաղաքական կյանքի լիբերալ ավանդույթներին զուգահեռ գոյություն ունի նաև կոնսերվատիվ մոտեցում: Ընդհան-բապես «կոնսերվատիզմ»

(պահպանողականություն) հասկացությունը մեկնաբանվում է չորս տարբերակներով.

1. Որպես խառնվածքի տեսակ, որի տարրերն են սովորույթը, վախը և իներցիան:

2. Որոշակի իրավիճակներում դրսևորվող կոնսերվատիզմ: Դա սոցիալական վարքի մի մոդել է, որին հատուկ է հակազդեցությունը կամ դիմադրությունը սոցիալական, տնտեսական, կրոնական, քաղաքական, մշակութային և այլ ոլորտներում կատարվող փոփոխությունների:

3. Քաղաքական կոնսերվատիզմ, որն իրենից ներկայացնում է կուսակցությունների և շարժումների կողմից իրականացվող ավելի շատ պաշտպանական, քան հարձակողական բնույթի գործողություններ: Դրան հատուկ է ավանդականությունը:

4. Մտածողության կոնսերվատիզմ, որը հանդես է գալիս փիլի-սոփայության տեսքով և ուղղվում է գոյություն ունեցող կարգերի պահպանմանը:

Կոնսերվատիզմի պատմությունը սկսվում է 1789 թ. ֆրանսիական բուրժուական Մեծ հեղափոխությունից: Այդ ժամանակներից սկիզբ են առնում կոնսերվատիզմի երկու դասական ավանդությունները: Առա-ջինի հիմքը դրել են Ժ. դե Մեստրը (1753-1821) և Լ. դե Բոնալդը (1754-1840), իսկ երկրորդը կապված է անգլիացի Է. Բերքի (1729-1797) անվան հետ: Եթե անգլո-սաքսոնական երկրներում առավել տարածված է կոնսերվատիզմի բերքյան տարբերակը, ապա մայրցամաքային Եվրոպայի երկրներում՝ այդ երկու ավանդությունների գաղափարների, արժեքների և դրույթների յուրահատուկ ձուլվածքը:

#### 1. Կոնսերվատիզմի բովանդակությունը

«Կոնսերվատիզմ» հասկացությունը քաղաքական բառարանում առաջին անգամ օգտագործվեց որպես լուսավորության գաղափարների և 1789 թ. ֆրանսիական հեղափոխության նկատմամբ ֆեոդալների և ազնվականների կողմից դրսևորվող արձագանքի արտահայտություն: Առաջինը Է. Բերքն էր, որն իր հայացքները շարադրեց «Մտորումներ ֆրանսիական հեղափոխության մասին» աշխատությունում (1790 թ.): Մի քանի տարի անց նման արձագանքներ լսվեցին նաև Ֆրանսիայում (Ժ. դե Մեստր, Լ. դե Բոնալդ):

Առաջին անգամ «կոնսերվատիզմ» տերմինն օգտագործեց 18-րդ դ. վերջին-19-րդ դ. սկզբին ֆրանսիական գրող և քաղաքական գործիչ Ֆ. Շատոբրիանը: 1815 թվականից իր կողմից հրատարակվող ամսագիրը Շատոբրիանը կոչեց «Կոնսերվատոր» և, հարելով հետադիմական գաղափարների, կարևոր խնդիր համարեց Բուրբոնների դինաստիայի վերականգնումը:

Եվրոպական լուսավորության և ֆրանսիական հեղափոխության կողմից առաջ քաշվող անհատականության, առաջընթացի և ռացիո-նալիզմի գաղափարներին կոնսերվատիզմի հիմնադիրները հակադրե-ցին պետական իշխանության, մասնավորապես թագավորական իշխա-նության, աստվածային բնույթի մասին գաղափարը: Կրկին վերա-կանգնվեց այն մոտեցումը, ըստ որի մարդը անխզելի կապի մեջ է գտնվում անցյալի, դարավոր ավանդությունների հետ:

Օրինակ, պատմությունը Բերքը դիտում էր որպես քաղաքա-կրթության և սովորույթների միջոցով ստեղծված ավանդույթների ու բարոյական նորմերի ամբողջություն: Բերքը

հակադրվում էր թագա-վորական իշխանության տապալման գաղափարին, քանի որ դրա կենսագործումը նշանակում էր ավանդույթների վրա հիմնված, աստ-վածային բնույթ ունեցող համակարգի փլուզում:

Կոնսերվատիզմի կարևորագույն հասկացություններից է «բնական արիստոկրատիան», որի մեջ, ըստ Բերքի, ընդգրկվում են ոչ միայն ազնվականները, այլ նաև հարուստ գործարարները, կրթված անձինք, գիտնականները, դերասանները և այլն: Ընդհանրապես, կոնսերվատիզմի պնդումով հարստությունը պետք է արտոնյալ դիրք գրավի հասարակության մեջ, հակառակ դեպքում հնարավոր են հեղափոխա-կան «անհեթեթություններ»: Ըստ Բերքի, պետությունը ղեկավարելու իրավունքը պատկանում է ազնվականությանն, այլ ոչ թե «սափրիչ-ներին»: Մարդկանց մտավոր և ֆիզիկական զարգացման աստիճան-ների բնական անհավասարությունը կոնսերվատիզմը համարում է քաղաքականության արքային: Հավասարությունն, այս դեպքում, դիտվում է որպես մեծատոհմիկների և ունևոր խավերի թշնամի: Այդ ժա-մանակաշրջանին է վերաբերվում նաև պետության օրգանական տեսության մշակումը: Համաձայն դրա, պետությունը համեմատվում է անհատներից անկախ գոյություն ունեցող և նրանց վրա իշխող էակի հետ: Հասարակության ու իշխանության առաջացումը կապելով Աստծո կամքի հետ Բոնալդը իշխանությունը դիտում էր որպես հասարակությունը պահպանող կենդանի էակ: Դրա կամքը համեմատվում էր օրենքի հետ, իսկ գործողությունները՝ կառավարության: Մարդն, ըստ Բոնալդի, ապրում է հասարակության համար, իսկ հասարակությունը ստեղծվում է ինքն իր համար:

Կոնսերվատիզմի փիլիսոփայության ելակետն է այն դրույթը, ըստ որի մարդու ճակատագրի վրա իր հետքն է թողել նրա առաջին մեղքը: Մարդը չի գիտակցում «զավի» և «վատի» միջև տարբերությունները: Նա ոչ միայն ընդունակ չի վերափոխել հասարակական կյանքն, այլ նաև չպետք է ձգտի դրան: Այդ ձգտումը կոնսերվատորները համարում են բռնության գործադրում հասարակական զարգացման բնական օրի-նաչափությունների նկատմամբ: 20-րդ դարի հայտնի կոնսերվատոր Ռ. Կերկը («Կոնսերվատիվ մտածողություն») գտնում էր, որ մարդու էությանը պատճառած նման վնասվածքների հետևանքով հնարավոր չէ աշխարհը վերափոխել նրա իսկ քաղաքական գործունեությամբ: Անհատն, ըստ կոնսերվատորների, ինքնուրույն ոչ մի արժեք չի ներ-կայացնում և ամբողջությամբ կախված է պահպանողական կարգ ու կանոնի օժանդակությունից: Կոնսերվատորների կարծիքով քաղաքա-կան սկզբունքները պետք է հարմարեցնել ազգային ավանդություն-ներին, սովորույթներին և հասարակական-քաղաքական ինստիտուտ-ների արդեն արմատավորված ձևերին: Բերքի խոսքերով հասարակու-թյան նպատակն է ոչ թե թվացող ազատությունների հորինումը, որը հանգեցնում է համընդհանուր անարխիայի, այլ արդեն գոյություն ունեցող, ավանդությունների վրա հիմնված ազատությունների պահպա-նումը: Կոնսերվատորների կարծիքով նախապատվությունը պետք է տալ ոչ թե անգամ կատարյալ թվացող տեսական սխեմաներին, այլ գոյություն ունեցող ինստիտուտներին: Նրանք գտնում էին, որ բնական և օրինական է համարվում միայն այն հասարակությունը, որը հիմնված է հստակ ձևավորված պաշտոնակարգության (հիերարխիա) վրա: Վերջինը կոչված է ապահովելու հասարակական օրգանիզմի ամբողջ-ջականությունն ու կենսունակությունը:

Կոնսերվատիզմի հիմնաքարերից է կրոնի քաղաքական դերի բարձրացման մասին գաղափարը՝ Ժ. դե Մեստրը և Լ. դե Բոնալդը, մերժելով հանրապետական կառավարման եղանակը և բարեփոխում-ները, միայն դրանում էին տեսնում հասարակության փրկության ճա-նապարհը: Քաղաքական և հոգևոր ոլորտների հավասարակշռության հաստատումը Մեստրը հնարավոր էր համարում միայն թեոկրատական մոտեցման կիրառման դեպքում: Բոնալդը, առաջնությունը չտալով ո՛չ աշխարհիկ, ո՛չ էլ հոգևոր իշխանությանը, առաջ քաշեց քաղաքական և կրոնական հասարակությունների դաշինքի ստեղծման գաղափարը:

Եթե լիբերալիզմն ու սոցիալիզմը ձևավորվել են որպես համապա-տասխանաբար բուրժուազիայի և բանվոր դասակարգի գաղափա-րաքաղաքական հոսանքներ, ապա կոնսերվատիզմն ավելի բարդ երևույթ է: Նա արտահայտում է այն դասակարգերի,

Ֆրակցիաների և սոցիալական խմբերի գաղափարներն ու կողմնորոշումները, որոնց համար պատմական և սոցիալ-տնտեսական զարգացման օբյեկտիվ միտումները որոշակի սպառնալիք են պարունակում: «Կոնսերվատիզմ» հասկացությունն ընդգրկում է հասարակության մեջ արմատավորված, ժամանակի փորձություններով անցած այն արժեքները, որոնք պայ-մանավորում են բնակչության զգալի հատվածների հոգեբանությունն ու մտածելակերպը: Կոնսերվատիվ արժեքներն ու նորմերը, հաճախ, իրենց համախոհներն են գտնում մարդկանց այն խմբերում, որոնց շահերին դրանք օբյեկտիվորեն հակասում են: Այսպես, կոնսերվատիզմին կարող են հարել ֆերմերների, խանութպանների, արհեստավորների և գյուղական, բնակչության այն ներկայացուցիչները, որոնք մտահոգված են անորոշ ապագայի հեռանկարով և չեն ցանկանում փոխել իրենց սոցիալական կարգավիճակը: Մեծ նշանակություն ունի նաև այն հանգամանքը, որ կոնսերվատիզմը, սովորաբար, հանդես է գալիս կրոնական, սոցիալական փիլիսոփայության տեսքով, որը զրկված է դասակարգային բնույթից: Կոնսերվատիզմի իմացաբանական նախադրյալն է այն հանգամանքը, որ հասարակական-քաղաքական գործընթացն ունի երկակի բնույթ: Դրա հիմքում, մի կողմից, ընկած է էվոլյուցիան՝ հնի հետ կապերի խզումը և նորի ստեղծումը, իսկ մյուս կողմից նախկին համակարգի կենսունակ տարրերի փոխանցումը նորին: Պատմական փորձը ցույց է տալիս, որ անգամ արմատական սոցիալական հեղափոխությունները (ֆրանսիական և ռուսական) պահպանեցին ազգային ավանդությունների, սովորույթների զգալի մասը, որը կազմում էր ազգային գիտակցության հիմքը: Ինչպես գրում էր անգլիացի ազգագրագետ Գելները. «19-րդ և 20-րդ դարերի մարդը ոչ թե ուղղակի ինդուստրիալիզացվեց, այլ ինդուստրիալիզացվեց որպես գերմանացի, ռուս կամ ճապոնացի...»2: Պատմությունը դա արդեն գոյացածի և դրան զուգահեռ առաջացող տարրերի միասնությունն է: Կոնսերվատորները այդ երկու գործըն-թացներից նախապատվությունը տալիս են առաջինին: Ընդունելով իրականությունը, կոնսերվատիզմն իր հիմնական շեշտը դնում է ավանդական կանոնների, նորմերի, սոցիալական և քաղաքական կառուցվածքների և ինստիտուտների պահպանման անհրաժեշտության վրա: Կոնսերվատորների ավանդական վերաբերմունքը դրր-սևորվեց նաև բարեփոխումների անցկացման հարցում: Դրա համա-ձայն բոլոր բարեփոխումներն ու փոփոխությունները չպետք է խախտեն բնականոն ընթացքը: Այդ կապակցությամբ, բարեփոխումները կոնսեր-վատիզմը բաժանում է 2 խմբի՝

1. Ավանդական իրավունքների և սկզբունքների վերականգնմանն ուղղված բարեփոխումներ:

2. Հեղափոխության կանխմանն ուղղված բարեփոխումներ:

Ընդ որում, հաճախ առաձևացվում են «բարեփոխում» և «վերա-փոխություն»

հասկացությունները: Վերափոխումն, ըստ կոնսերվատոր-ների, ձևափոխում է օբյեկտի էությունը, իսկ բարեփոխումը, համար-վելով ստիպված միջոց, չի դիպչում օբյեկտի արմատներին:

Դրա հետ մեկտեղ, հանդես գալով ստատուս-քվոյի պաշտպանի դերում, կոնսերվատիզմը պետք է հաշվի առներ նաև իրական կյանքում տեղի ունեցող փոփոխությունները և հարմարավեր դրանց: Նա չէր կարող մերժել առանց բացառության հասարակական բոլոր տեղա-շարժերը:

Բարեփոխումները կոնսերվատիզմը գնահատում է որպես «անխու-սափելի չարիքներ», որոնք անհրաժեշտ է անցկացնել աստիճանաբար և «վերկից», առանց շտապողականության, այլ ոչ թե «ամբոխի մե-թոդներով»՝ «ներքևից»:

19-րդ դ. երկրորդ կեսից կոնսերվատիզմի զարգացման հիմնական միտումը բնորոշվում է բուրժուազիայի և ազնվականության միջև կնքված դաշինքով: Այդ շրջանում կոնսերվատորները գործում էին հիմնականում արքունիքում, բանակում և բյուրոկրատիայի միջավայ-րում: Դրա հետ մեկտեղ առաջ է գալիս երիտասարդ կոնսերվատորների մի խումբ, որը ձգտում է ընդլայնել այդ գաղափարախոսության սո-ցիալական հիմքը, տարածելով այն գյուղացիների, արհեստավորների և առևտրականների միջավայրում: Սոցիալական ուղղվածությամբ աչքի են ընկնում

1841-1846 թթ. Անգլիայի կոնսերվատիվ կառավարության ղեկավար Ռ. Փիլի, Գերմանիայի կանցլեր Օթթո ֆոն Բիսմարկի, Դիզբալու (լորդ Բիքոնսֆիլդ) բարեփոխումները: Նրանք համարում էին, որ կոնսերվատորներն ավելի հեշտությամբ կարող են հաղթահարել սոցիալական պրոբլեմները, քան լիբերալները: Սակայն սոցիալական քաղաքականությունն իրենց կողմից դիտվում էր ոչ թե որպես սոցիալական սպառնալիքի համակարգի ստեղծում, այլ պետության բարեգործություն: Այս ժամանակաշրջանում որոշ գաղափարների ընդունումով (ազատ շուկայական հարաբերություններ, ներկայացուցչական համակարգի զարգացում, իշխանության մարմինների ընտրություն, պառլամենտարիզմ, քաղաքական և գաղափարախոսական պլյուրալիզմ, անհատականության զարգացում և այլն) կոնսերվատիվ-մը ընդհուպ մոտեցավ դասական լիբերալիզմին:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո կոնսերվատիզմի միջազգային կենտրոնը Եվրոպայից տեղափոխվեց ԱՄՆ: Կոնսերվատիզմի զարգացման խնդիրն այստեղ իր վրա վերցրեց երիտասարդ մտավորականների մի խումբ, որը պատկանում էր ակադեմիական միջավայրին և գտնվում էր սերտ կապերի մեջ գործարար աշխարհի ու քաղաքական ոլորտի գործիչների հետ: Այս խմբի մեջ էին մտնում պատմաբան և գրականագետ Պ. Վիրելը, ԱՄՆ ապագա պետքար-տուղար Հ. Քլինգերը, հայտնի քաղաքական գործիչ Ռ. Բաթլերը և ուրիշներ:

Կանգնելով համաշխարհային կարմիր հեղափոխության վտանգի առջև, ամերիկյան կոնսերվատորները կրկին վեր հանեցին Է. Բերքի ժառանգությունը: Բավականին տարածված դարձավ այն դրույթը, ըստ որի, համաշխարհային հեղափոխության վտանգը պետք է հաղթահարել ոչ թե դիմելով ավելի ձախ քայլերի, կամ ծայրահեղ աջ հակազդեցության, այլ պահպանելով և ամրապնդելով արևմտյան հասարակությունների ազատ հաստատությունները: Ըստ այդ գաղափարի կողմնակիցների, համաշխարհային հեղափոխությունից դուրս մնացած երկրները ազատությունը պահպանելու ճանապարհով միայն կարող են մրցակցել ստեղծված ամբողջատիրական ռեժիմների հետ և թուլացնել դրանք<sup>3</sup>:

Կոմունիզմի տարածման վտանգի առջև, Բերքի կոնսերվատիզմը լի-նելով ավելի ճկուն, հնարավորություն տվեց որոշակի շփման եզրեր գտնել լիբերալիզմի հետ: Դրանով հիմք դրվեց բուրժուական այդ երկու գաղափարախոսությունների հետագա համաձայնությանը: Այս շրջանում է, որ կոնսերվատորներն ընդունեցին կապիտալիստական վերար-տադրության գործընթացում պետության կարգավորիչ դերի անհրաժեշտությունը, կոնկրետ պայմաններից ելնելով արդյունաբերության որոշ ճյուղերի ազգայնացման հնարավորությունը, սոցիալական սպասարկման ոլորտի ընդլայնման կարևորությունը, ինչպես նաև ցանկացան արդեն բանվոր դասակարգի միջոցով ընդլայնել պահպանողական կուսակցությունների սոցիալական հիմքը:

2. Ժամանակակից կոնսերվատիզմի հիմնական մոտեցումները

20-րդ դարի 70-ական թվականներին կոնսերվատիզմը հաշտվողա-կան քաղաքականությունից անցավ հարձակողականի: Աճեց ավան-դական կողմնորոշում ունեցող աջ կոնսերվատիզմի դերը: Արևմտյան գաղափարախոսության թեքումը դեպի աջ տեղի ունեցավ ձախերի՝ կոմունիստների, սոցիալ-դեմոկրատների և ձախ լիբերալների գաղա-փարախոսության ճգնաժամի պայմաններում: Դրա հիմնական պատ-ճառը 1973-1974 թթ. տնտեսական ճգնաժամն էր, որը պատրանքի վե-րածեց տնտեսական գործընթացների կարգավորման հնարավորության գաղափարը:

Այդ ժամանակաշրջանում Եվրոպայի մի շարք երկրներում առա-ջացան կոնսերվատիվ կուսակցություններ («առաջադիմական», «ժո-ղովրդական», «դեմոկրատական» և այլ անվանումներով): Այն, որ բնակչության լայն զանգվածներն ընդունում են կոնսերվատիզմի գաղափարներն ու սկզբունքները, Ռ. Ռեյգանի հաղթանակներն էին (1980 և 1984 թթ.) ԱՄՆ նախագահական ընտրություններում, Անգլիայի կոնսերվատիվ կուսակցության ղեկավար Մ. Թեթչերի կառավարության երկարատև իշխանությունը, խորհրդարանական և

տեղական իշխանության մարմինների ընտրությունների արդյունքները ԳՖՀ-ում, Իտալիայում, Ֆրանսիայում:

Կոնսերվատիվների դիրքերի ամրապնդումը միջազգային ասպարեզում ակտիվացրեց դրա համախմբման ձգտումները: Այսպես, 1983 թ. ստեղծվեց Միջազգային դեմոկրատական միությունը, որը միավորեց Արևմտյան Եվրոպայի կոնսերվատիվ կուսակցությունները, ԱՄՆ՝ Հանրապետական և Ճապոնիայի՝ լիբերալ-դեմոկրատական:

Կոնսերվատիվների կարևորագույն տարրերից մեկը համարվում է բոլոր տեսակի գաղափարախոսությունների և տեսությունների մեր-ժամը: Մատնանշելով կոնսերվատորների այդ մոտեցումները հասարակագետները նկատի ունեն ոչ թե այն հանգամանքը, որ նրանք ընդհանրապես զուրկ են գաղափարներից, այլ այն, որ կոնսերվատորները աբստրակտ սխեմաներին նախընտրում են պրագմատիզմը և կոմպրոմիսը: Նրանք դեմ են բոլոր տեսակի գաղափարախոսությունների բացարձակականացմանը, հատկապես դրանց կիրառմանը գործնականում: Իրոք, պատմությունը հագեցված է բազմաթիվ օրինակներով, երբ կատարյալ թվացող տեսությունների կենսագործումը հանգեցրեց բարբարոսությունների (ինկվիզիցիա, համակենտրոնացման ճամբարների տարածում և այլն): Անգլիացի քաղաքագետ Լ. Ալիսոնը նշում է, որ կոնսերվատորներն, անշուշտ, հարելով որոշակի կոնցեպցիաների և գաղափարների, չեն բացարձակականացնում դրանք և առօրյա պրոբ-լեմների հաղթահարման ուղիները փնտրում են գործնականում<sup>4</sup>:

Կոնսերվատիվների գաղափարախոսական վերազինումն իրականացվեց 20-րդ դ. 70-80-ական թվականներին, երբ հստակեցվեցին նրա հիմնական սկզբունքներն ու դրույթները:

Կոնսերվատիվների գաղափարայնացումը կայանում է նրանում, որ նա հանդես է գալիս ազատ շուկայական հարաբերությունների, անհատականության, ազատ մրցակցության սկզբունքների պաշտպանության օգտին, պետական որևիցե միջամտության, սոցիալական բարեփոխումների, ընդհանուր բարեկեցության պետության ստեղծման գաղափարի դեմ և այլն:

Կոնսերվատիվների կարևորագույն դրույթները ձևավորվում և զարգանում էին ընդդիմադիր գաղափարաքաղաքական հոսանքների փոփոխությունների հետ զուգահեռ, հանդիսանալով, հիմնականում, որպես դրանց պատասխան քայլեր: Լիբերալիզմի, բուրժուական և սոցիալական ռեֆորմիզմի տարբեր ձևերի, ինչպես նաև ճախ ռադիկալիզմի հետ համեմատած, կոնսերվատիվները կրում էր երկրորդական բնույթ: Այդ պատճառով, կոնսերվատիվների գաղափարախոսական և սոցիալ-փիլի-սոփայական կառուցվածքները, հաճախ հարում են պրագմատիզմի և էկլեկտիզմի: Դրանով է բացատրվում կոնսերվատիվների հակասակարկությունն ու տարբերակների բազմազանությունը, որոնք կարող են հանգեցնել դրա բաղադրիչ տարրերի բախմանը: Հետաքրքրական է այն, որ ժամանակակից կոնսերվատիվների կայացուցիչները հաճախ հանդես են գալիս, որպես փոփոխությունների ջատագովներ: Այդ կապակցությամբ, կոնսերվատորները ցույց տվեցին ստեղծված պայմաններին համակերպվելու իրենց ունակությունները: Նրանք ժամանակին նկատեցին բնակչության լայն զանգվածների տրամադրությունները կապված տնտեսության լճացման, գործազրկության և ինֆլյացիայի հաղթահարման, պետական միջոցների հաշ-վենկատ օգտագործման, սոցիալական կյանքի այլ բացասական երևույթների վերացման հետ: Անգլիայի, ԱՄՆ-ի, ԳՖՀ-ի և Ֆրանսիայի կոնսերվատիվ ուժերի ներկայացուցիչների հաջողությունները մեծապես պայմանավորված էին այն հանգամանքով, որ նրանք ճիշտ ժամանակին առաջարկեցին իրենց ընտրողներին վերափոխումների սպասվող քաղաքականությունը: Կոնսերվատիվ կուսակցություններից շատերի նախընտրական պլատֆորմների հիմքում ընկան լուրջ փոփոխությունների վերաբերյալ խոստումները: Այսպես, 1979 թ. ընտրությունների ընթացքում Մ. Թետչերը խոստանում էր ամբողջովին հրաժարվել կյանքի բոլոր ոլորտներում իրականացվող պետության գերիշխանությունից: 1980 թ. ընտրություններին Ռ. Ռեյգանի կողմից առաջադրված ծրագրում մատնանշվում էր «Ամերիկայի նոր ուղին» և այլն:

Ժամանակակից կոնսերվատիզմի, հատկապես նրա աջ թևի, բնորոշ գծերից է հավատարմությունը կրոնական ավանդականությանը: Արդի հասարակության բացասական երևույթների հիմնական պատճառը նրա կողմից ավանդական արժեքների անտեսումն էր: Դրանցից կարևորագույնը կրոնական արժեքն էր: Կոնսերվատիզմի ներկայացուցիչների պնդումով դրա թերագնահատումը ստիպեց հրաժարվել մարդու «սկզբնական մեղքի» կոնցեպցիայից և դիտել նրան որպես «բոլոր երևույթների չափանիշ», ընդգծել մարդու բարի բնույթը: Քանի որ, ըստ կոնսերվատորների, միայն ֆիզիկական և զգացմունքային աշխարհը համարվեց միակ իրականը, սկսվեց կրոնի անկումը և, դրան զուգահեռ, մատերիալիզմի և ռացիոնալիզմի ազդեցության աճը: Ելնելով այդ դրույթից կոնսերվատորները շեշտը դնում են մարդկանց ինքնա-վստահության կորուստի, ավանդական արժեքների, օրենքի, կարգ ու կանոնի, կարգապահության, հայրենասիրության անկման վրա: Հանդես գալով ավանդականության վերականգնման օգտին կոնսերվատորներն այդ գործընթացի միջանկյալ ինստիտուտներ են համարում ընտանիքը, համայնքը, եկեղեցին և այլն:

Սակայն ավանդական արժեքները ժամանակակից կոնսերվատիզմի կողմից տարբեր երկրներում մեկնաբանվում են տարբեր եղանակներով: Այսպես, ԱՄՆ-ի կոնսերվատորների մեծամասնությունն իրեն համարում է բողոքական ֆունդամենտալիզմի և կրոնական ֆանատիզմի կողմնակից, թշնամանքով է ընդունում այլախոհությունը և այլն: Որոշ արև-մըտավորական երկրների կոնսերվատորներ հարում են այլ դիր-քորոշման: Օրինակ, Գերմանիայի և Ֆրանսիայի շատ կոնսերվատորներ իրենց խնդիրը համարում են հնագույն Եվրոպայի ոգու վերածնունդը, որում միահյուսվել էին հունական, լատինական, կել-տական, գերմանական և սլավոնական մշակույթները: Վերադարձը հնին դիտվում է որպես հեթանոսական Եվրոպայի արժեքների վե-րակենդանացում: Նրանց կարծիքով քրիստոնեական մոնոթեիզմը հավասարեցնում է բոլոր հավատացյալներին, հեղափոխական երանգ-ներ տալիս եվրոպական գիտակցությանը և առաջ քաշում է գալի-տարիզմի, ինչպես նաև ամբողջատիրական գաղափարները: Հեթանոսությունը գայթակղում է իր պոլիտեիզմով, որը, կոնսերվատորների կարծիքով, հիմք է հանդիսանում այլուրալիզմի համար: Ժամանակակից կոնսերվատիզմը մեծ տեղ է հատկացնում ազա-տության, հավասարության, իշխանության, պետության, դեմոկրատիայի և այլ պրոբլեմներին: Հատկանշական է, որ այդ պրոբլեմների մեկնաբանության ընթացքում կոնսերվատորներից շատերն իրենց համարում են մարդու իրավունքների և ժողովրդավարության հիմնական սկզբունքների պաշտպաններ:

Ի տարբերություն լիբերալների, որոնք մարդուն դիտում են որպես շղթայակապված, բայց ազատության արժանի էակ, կոնսերվատորները գտնում են, որ քաղաքացիական ազատությունները պետք է խարսխվեն հենց ավանդությունների և պատմական հաջորդականության շղթաների վրա: Կոնսերվատորների աչքերում պետությունը օրենքի և բարոյա-կանության պաշտպանն է: Առանց ուժեղ պետության հասարակությունը կարող է հայտնվել անարխիայի գրկում: Կոնսերվատորներին հատուկ է պոզիտիվ, շատ անգամ ավտորիտար, վերաբերմունքը պետությանը: Սակայն, ուժեղ պետությունը կարող է գործիք դառնալ անհատական ազատությունը ճնշելու համար: Այդ պատճառով կոնսերվատիզմի տեսաբանները ընդգծում են ավելի փոքր չափերի հասնող մարդկանց միավորումների, քան պետության, կարևորությունը: Նրանց կարծիքով հասարակական կազմակերպությունները, իհարկե, չպետք է աչքի ընկնեն բարձր քաղաքական ակտիվությամբ, դրանով իսկ հակադրվեն կուսակցություններին և խորհրդարանին: Սակայն անհրաժեշտ է ընդլայնել այդ կազմակերպությունների լիազորությունները իրենց գոր-ծունեության ոլորտներում: Որպես հետևանք, տվյալ բնագավառները հնարավոր կլինի գերծ պահել պետության միջամտությունից:

Ըստ կոնսերվատորների, մարդու իրավունքները կրում են միա-ժամանակ բնական և սոցիալական բնույթ: Բնական՝ որովհետև մարդը ստեղծված է Աստծո կողմից որպես բնության կարևորագույն տարրերից մեկը և սոցիալական՝ որովհետև իր իրավունքները մարդը կարող է օգտագործել միայն կազմակերպված հասարակության շրջանակներում:

Այն դեպքում, երբ կոնսերվատորները կանգնում են անհատ կամ հասարակություն երկրնորանքի առաջ, նրանք նախապատվությունը տալիս են երկրորդին: Մարդու իրավունքները կոնսերվատորները ձգտում են փոխարինել կոլեկտիվի իրավունքներով: Նրանց կարծիքով լիարժեք իրավունքներով օժտված են ժողովուրդը, ազգը, հասարակությունն ու պետությունը: Ինչ վերաբերվում է առանձին անհատին, ապա նրա իրավունքները երաշխավորված են այնքանով, որքանով որ նա պատկանում է այս կամ այն պատմական, էթնիկական, մշակութային ոլորտին:

### 3. Ժամանակակից կոնսերվատիզմի հոսանքները

Ժամանակակից կոնսերվատիզմի բոլոր տարբերակները ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակների վրա միավորված են գաղափարների, սկզբունքների և կոնցեպցիաների որոշակի համա-կարգի շուրջ: Դրանց միաժամանակ համեմատությունն ի հայտ է բերում յուրաքանչյուրին հատուկ երանգները, որոնք հիմք են հանդիսանում կոնսերվատիզմի մեջ տարբեր հոսանքները առանձնացնելուն: Ընդ-հանուր առմամբ կոնսերվատիզմի մեջ կարելի է առանձնացնել նեո-կոնսերվատորներին, նոր աջերին և լիբերտարիստներին, ավանդա-կաններին: Ընդ որում, տնտեսության բնագավառում պետության կարգավորիչ դերի վերաբերյալ և մի քանի այլ հարցերի շուրջ ար-տահայտվող գաղափարներով նոր աջերը, լիբերտարիստները և նեո-կոնսերվատորների որոշ ներկայացուցիչներ այնքան են տարբերվում մյուսներից, որ գիտնականները, դրանց բոլորին, սովորաբար, միավորում են արմատական կոչվող հոսանքի մեջ:

#### ա) Ավանդական կոնսերվատիզմ

Կոնսերվատիզմի հոսանքներից պատմականորեն առաջինը ձևավորվել է ավանդական թերմումը: Դրա ակունքներն արտահայտված են Բեթթի, Մեսթրի և Բոնալդի կողմից առաջ քաշված դրույթներում: Այդ հոսանքը շեշտը դնում է դասական շուկայական տնտեսության, որոշ դեպքերում անգամ ֆեոդալիզմի սոցիալական կացութաձևերի և բարոյական ավանդությունների պահպանման վրա: Ավանդությունը հավերժ է և բանականությանը և գերադասվում դրանից: Ավանդական կոնսերվատիզմի ներկայացուցիչները ավանդությունը կապում են կրոնի հետ: Հավատարմությունը կրոնական դրույթներին նրանց կողմից դրվում է որպես ավանդականության ապահովման կարևորագույն միջոցներից մեկը: Կրոնի միջոցով ավանդականները ցանկանում են համերաշխություն հաստատել հասարակության բոլոր խմբերի միջև:

Սոցիալ-տնտեսական պրոբլեմները շատ անգամ նրանք աշխատում են տեղափոխել կրոնաբարոյական հարթության վրա: Այսպես, 20-րդ դարի 80-ական թվականների ավանդական կոնսերվատիզմի հայտնի ներ-կայացուցիչ Ռ. Կերկի կարծիքով տնտեսությունը վերափոխվում է քաղաքականության, քաղաքականությունը՝ բարոյականության և էթիկայի, իսկ վերջինները՝ կրոնի:

Ավանդական կոնսերվատիզմի իր արտահայտությունն է գտել անգլիական տորիզմի աջ թևում, Ֆրանսիայում՝ գոլիզմի մեջ, Գերմանիա-յում աջ կոնսերվատորների և սոցիալ-կոնսերվատորների միջավայ-րում: Ի տարբերություն նոր աջերի և նեոկոնսերվատորների ավանդականները շեշտը դնում են ոչ թե հասարակական կյանքում պե-տության միջամտության չափը որոշելու վրա, այլ պետականության դրսևորման կարևոր չափանիշ համարում խիստ կարգապահության և իշխանության հեղինակության արմատավորումը: Իրոք, կարգապահ-հույսան, կարգ ու կանոնի բացակայության պայմաններում խիստ անկում է ապրում պետական ինստիտուտների արդյունավետությունն ու կենսունակությունը: Նման կարծիքի են, օրինակ, անգլիական, ավանդական-կոնսերվատորները: Իշխանությունը նրանք համարում են բոլոր ազատությունների նախադրյալը և առաջնակարգ տեղ են տալիս կարգ ու կանոնի հաստատմանը, կարգապահությանն ու իշխանության հեղինակությանը: Ժամանակակից «արտադրողական հասարակություն»-ը նրանք դիտում են որպես համընդհանուր հնազանդու-թյան հասարակություն, որտեղ ռեալ ազատություններն ապահովվում են միայն ուժեղ պետության առկայությամբ:

Ավանդական կոնսերվատիզմի կոնցեպցիաները հանգում են մարդկանց կամքից անկախ գոյություն ունեցող բնական օրենքի նկատմամբ հավատի և այն համոզմունքի, ըստ որի մարդկային հասարակությունն իրենից ներկայացնում է «հոգևոր միություն», այն-պիսին, ինչպիսին է եկեղեցին: Այդ պատճառով հասարակության կենսունակությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է ապահովել պատմականորեն ձևավորված ավանդույթների հաջորդականությունը: Հասարակության ձևավոխումները չպետք է ընթանան արհեստական ճանապարհով, քանի որ դրանք իրականացվում են բնական եղանակով: Այսպիսով, ավանդականությունը կարելի է բնութագրել որպես զգացմունքային մակարդակի վրա դրսևորվող կոնսերվատիզմ, որը հիմնականում ազդում է զանգվածների տրամադրությունների վրա: Այդ պատճառով ինչպես ԱՄՆ-ում, այնպես էլ Եվրոպայում ավանդա-կանությանը հարող վառ քաղաքական գործիչներ համարյա չկան:

բ) Լիբերտարիզմ

Կոնսերվատիզմի լիբերտարիստական հոսանքն, ըստ դրա ներկա-յացուցիչների, որպես միակ ճշմարիտը, դասական լիբերտարիզմի 18-19-րդ դարերի ավանդության ժառանգումն է: Այդ տեսանկյունից, լիբերտարիզմը, մի կողմից, ընդօրինակում և շարունակում է ազա-տության ձգտումը, իսկ մյուս կողմից, բացառում սոցիալիստական գա-ղափարների տարածումը: Դրա առաջացումը կապվում է, հետ-պատերազմյան տնտեսական աճին զուգահեռ, սոցիալիստական գա-ղափարների նկատմամբ առաջացող հիասթափության հետ: Լիբեր-տարիզմի առաջավոր ներկայացուցիչներ Ֆ. Խայեկը, Մ. Ֆրիդմանը, Ջ. Գիլդերը, Ի. Քրիսթոլը, Ջ. Բոուլսը, Լ. Բաուերը պնդում են, որ ազատ ձեռներեցության, անհատական և ընտանեկան պատասխանատ-վության էռոզիան հանգեցնում է լճացման և չքավորության, որ այդ կապակցությամբ անհրաժեշտ է այնպիսի լիբերտարիստական ավան-դությունների վերածնունդը, ինչպիսիք են անհատականության դրսե-վորումն ու ազատ շուկայական տնտեսության գոյությունը: Լիբեր-տարիստական կոնսերվատիզմի կողմնակիցները դիտվում են որպես «Նոր լուսավորություն» ժամանակակից ինտելեկտուալ շարժման ներ-կայացուցիչներ: Այդ շարժումը շարունակում է «Շոտլանդական լու-սավորության» ավանդությունները: Վերջինի ներկայացուցիչներից էին Դ. Յումը, Ա. Սմիթը, Ա. Ֆերգյուսոնը, Ջ. Միլլարը, Ու. Ռոբերտսոնը: Լուսավորչական այդ հոսանքի ելակետային դրույթն էր «առևտրային հասարակության» գոյությունը: Սոցիալական կապերի տարածված մոդելն այստեղ համարվում է ազատ հասարակական պայմանագրի կիրառման արդյունքում հաստատված «տեր-աշխատող» կարգ: Այդ շարժումն իր էությամբ հեղափոխական չէր: Ցամաքային Եվրոպայում տարածում գտավ Լուսավորչության հակառակ հոսանքը, որի կողմ-նակիցները սոցիալական բոլոր փոփոխությունների հիմքում դիտում էին մարդկային բանականությունը: Այդ մոտեցումը հանգեցնում էր հե-ղափոխության, սոցիալիզմի և մարքսիզմի:

Լիբերտարիստները հանդես եկան որպես ազատ ձեռներեցության, կարգ ու կանոնի, օրինականության ավանդական սկզբունքների ջա-տագովներ: Նրանք դուրս եկան լիբերալ-ռեֆորմիզմի «համընդհանուր բարեկեցության պետության» կոնցեպցիայի դեմ, համարելով այն դեպի սոցիալիզմ տանող ճանապարհ: Լիբերտարիստների կարծիքով ժա-մանակակից չարիքների առաջացման պատճառը բնական, Աստծո կողմից շնորհված ազատ շուկայական սկզբունքների անտեսումն է պետության կողմից: Հակադրվելով լիբերալ-ռեֆորմիզմի այն դրույթին, ըստ որի ներկա հասարակարգում անհրաժեշտություն է դարձել տըն-տեսության պլանավորումը կամ կարգավորումը, լիբերալիստները պնդում են, որ տնտեսության նկատմամբ իրականացվող բռնությունը, պետական սեկտորի ընդլայնումը, արդյունաբերական առանձին ճյու-ղերի ծրագրավորումը և այլ նման երևույթներ խախտում են մարդկային կյանքի կարգավորման ամենաբնական ձևը: Մարդու իրավունքների վերաբերյալ լիբերտարիստական մոտեցումն առավել ամբողջական տեսքով ներկայացված է Ջ. Լոքի փիլիսոփա-յաքաղաքական ուսմունքում: Նրա կողմից առաջքաշված անհատական անվտանգության, սեփականության պաշտպանության և այլ իրավունք-ներ լիբերտարիստները համարում են անխախտելի և անսասան: Ընդգծվում է բնական իրավունքների «նեգատիվ» բնույթը: Նրանց կար-ծիքով մարքսիզմը և սոցիալ-դեմոկրատիան խեղաթյուրել են մարդու իրավունքների իրական



կոնցեպցիան: Վերջինները մարդկանց գի-տակցության մեջ, արմատավորեցին այսպես կոչված, «պոզիտիվ» իրավունքները՝ աշխատանքի, հանգստի, արդար աշխատավարձ ստա-նալու, տանիք ունենալու իրավունքները և այլն: Սոցիալական հավասարության մարքսիստական պատկերացումը, ըստ լիբերտարիստների, զրկեց այդ հասկացությունը իրական հումանիստական իմաստից, որովհետև հայտարարեց ոչ թե «հավասար հնարավորությունների» այլ «պայմանների հավասարության» սկզբունքի գերակայությունը: Դրանով իսկ հարված հասցվեց մասնավոր սեփականության ան-ձեռնմխելիության գաղափարին: Այս հարցում լիբերտարիստների մոտեցումները համընկնում են նեոլիբերալների և, ընդհանրապես, աջ լիբերալիզմի ներկայացուցիչների հայացքներին:

Լիբերտարիստներն ամենուրեք հանդես են գալիս պետության մի-նիմալ սոցիալական քաղաքականության օգտին, ինչն, իրենց կարծի-քով, հնարավորություն է տալիս միայն թուլացնել վտանգավոր սո-ցիալական լարվածությունը: Նրանք կոչ են անում կառավարություն-ներին իրենց ծրագրերի իրականացման գործում ղեկավարվել միայն շուկայի պահանջներով: Կարիքավորների օգնության ծրագրերի իրականացման պատասխանատվությունը նրանք դնում են տեղական մարմինների և հասարակական ինստիտուտների վրա (ընտանիքի, դպրոցի, եկեղեցու, կամավոր հատկացումներ կատարող կազմակեր-պությունների ու անհատների):

Լիբերտարիզմի հիմքում ընկած է այն գաղափարն, ըստ որի մարդը որպես իր կյանքը միանձնյա կարգավորող սուբյեկտ ազատ է իր գործողություններում: Նրա ազատությունը պետք է սահմանափակվի միայն այն դեպքում, երբ նա միջամտում է մյուսների անձնական կյանքին: Լիբերտարիստները հասարակությունը դիտում են որպես ինքնավար անհատներից կազմված պարզ մեխանիզմ: Այդ պատճառով նրանք կատարյալ են համարում միայն ատոմիստական հասարակու-թյունը, որը հակադրվում է պետությանը: Իր ծայրահեղ դրսևորումներով լիբերտարիզմը հաճախ հանդես է գալիս անարխո-սինդիկալիզմի, անարխո-կապիտալիզմի օգտին, որը բացառում է անգամ պետության գոյությունը:

Լիբերտարիզմը նմանեցնելով դասական լիբերալիզմին, չի կարելի հավասարության նշան դնել այդ երկու հոսանքների միջև: Դրանց քաղաքական գաղափարների սոցիալական բովանդակությունները ար-մատապես տարբերվում են միմյանցից: Առաջ քաշելով անհատականու-թյան և ազատ շուկայական հարաբերությունների պահպանման գաղափարները լիբերտարիստները, միևնույն ժամանակ, հանդես են գալիս սոցիալական հիերարխիայի (ստորակարգության) անհրաժեշ-տության օգտին: Նրանց կարծիքով հասարակության մեջ միակ հնարավոր հավասարությունը «բարոյական հավասարությունն» է, իսկ ժողովրդի ավանդույթների նկատմամբ հավատն ու հարգանքը՝ ար-դյունավետ քաղաքականության կարևորագույն լծակները: Եթե դասա-կան լիբերալիզմի պայքարը մարդու իրավունքների և ազատությունների համար նշանակում էր դրանցով ապահովել «երրորդ խավին», ապա լիբերտարիստների կողմից առաջ քաշվող նման գաղափարները պաշտպանում են արդեն իսկ զոյացած մասնավոր շահերն ու ար-տոնությունները դեմոկրատական բարեփոխումներ անցկացնելու վե-րաբերյալ ներքևից եկող պահանջներից:

գ) Նեոկոնսերվատիզմ

Նեոկոնսերվատիզմը (լիբերալ-կոնսերվատիզմը) համեմատաբար նոր հոսանք է կոնսերվատիզմի մեջ: Դրա առաջացման համար օբյեկտիվ հիմք ծառայեց 1973-1974 թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամը: Դա նաև յուրովի պատասխան էր Արևմտյան Եվրոպայում ծավալված զանգվածային երիտասարդական շարժումներին և Զեյնսի գաղափարների ազդեցության ընդլայնմանը:

Համաշխարհային ճգնաժամը մատնանշեց շուկայական համակար-գի նախկին բարեփոխումների անկատարությունն ու ավելի արմա-տական միջոցների կիրառման անհրաժեշտությունը: Դճնաժամը կաս-կածի տակ առավ այն դրույթներն, ըստ որոնց, ինչպես տնտեսությունը, այնպես էլ սոցիալական հարաբերություններն ու հասարակության հոգևոր ոլորտն իրենց մեջ պարունակում են ավտոմատ կերպով գործի

դրվող և կայունությունն ապահովող համապատասխան տարրեր: Ճգնաժամի հիմնական բովանդակությունը նեոկոնսերվատորները տե-սան պետության անկառավարելիության մեջ, որն առաջացել էր լիբե-րալիզմի գաղափարներից «հղփացած» քաղաքացիների անհնազանդության և իշխանությունների պասիվության պատճառով: Ընդհանրա-պես, կոնսերվատիզմը բավականին հաջող համապատասխանեցրեց իր ավանդական արժեքները հասարակության զարգացման հետինդուստ-րիալ փուլի պահանջներին: Մարդկանց կյանքի ոճերի բազմազանու-թյունը, տեխնիկական միջավայրից նրանց կախվածության խորացումը, կյանքի արագացված տեմպերը, հոգևոր և էկոլոգիական հավասարա-կըշռության խախտումը և այլ երևույթներ ապակողմնորոշիչ ճգնաժամ առաջացրին արևմտյան երկրների հասարակական կարծիքի մեջ, որը կասկածի տակ դրեց եվրոպական քաղաքակրթության առաջնային արժեքներից շատերը: Նման պայմաններում կոնսերվատիզմն առա-ջարկեց ընտանիքի և կրոնի, սոցիալական կայունության գերակայու-թյունը: Վերջինն, ըստ կոնսերվատորների, պետք է հենվի քաղաքացու և պետության փոխօգնության և բարոյական պատասխանատվության, պետական կարգ ու կանոնի, մարդու իրավունքների հարգանքի, ինչպես նաև դեմոկրատիայի չափի խորացման նկատմամբ դրսևորվող ան-վստահության վրա: Այդ սկզբունքները հստակ ուղղված էին հասա-րակության մեջ գուտ մարդկային գծերի և ունիվերսալ բարոյական նորմերի պահպանմանը, առանց որոնց հասարակության տնտեսական և տեխնիկական զարգացման ոչ մի աստիճան չի կարող լրացնել մարդկանց մոտ առաջացած հոգևոր վակուումը: Դրանց պահպանման համար հիմնական պատասխանատվության կրողն, ըստ նեոկոն-սերվատորների, համարվում է անհատը: Այդ գործում նա պետք է հույս դնի, առաջին հերթին, իր կարողությունների, այլ ոչ թե պետության օժանդակության վրա: Դա, անշուշտ, կնպաստի անհատի կենսունա-կության, ձեռներեցության և նախաձեռնության զարգացմանը: Այս մոդելն արմատապես տարբերվում է լիբերալ մոտեցումներից, ըստ որոնց անհատն ինքնուրույն պետք է գտնի կեցության իմաստը, պայմանագրային հարաբերությունների մեջ մտնի պետության հետ և այլն: Նեոկոնսերվատորների կարծիքով պետությունը պետք է հենվի բարոյական սկզբունքների և հասարակության միասնության պահպան-ման վրա, ապահովի կարգ ու կանոնի, օրինականության վրա հիմնված անհատի կենսական պայմանները՝ քաղաքական միավորումների ըս-տեղծման հնարավորությունը, քաղաքացիական հասարակության ինստիտուտների զարգացումը, հասարակության և բնության փոխհա-րաբերությունների ներդաշնակության պահպանումը և այլն: Չնայած, որ քաղաքացու և պետության փոխհարաբերությունների նման մոդելի կենսագործման առավել նախընտրելի պայման է համարվում ժողո-վրդավարությունը, այնուամենայնիվ նեոկոնսերվատիզմի տեսաբան-ներից շատերն (Դ. Բեյ, Ջ. Բժեզինսկի, Ն. Քրիստոլ և ուրիշներ) իրենց ուշադրությունը բևեռել էին քաղաքականության մեջ քաղաքացիների ներգրավվածության սահմանափակմանը, պետության սոցիալական «ծանրաբեռնվածության» վերացմանը, էլիտիզմի պաշտպանության մեխանիզմների կատարելագործմանը, կոնֆլիկտների կարգավորմանը վերաբերող հարցերի վրա: Ընդ որում, նեոկոնսերվատիզմի ամերիկյան տարբերակներում հիմնական շեշտը, որպես կանոն, դրվում էր պետա-կանության կատարելագործման ուղիների հայթայթման, իսկ արևմտա-եվրոպական հոսանքներում, հասարակության բարոյական ավան-դությունների զարգացման և անհատի սոցիալական ակտիվության խրախուսման վրա: Սակայն նեոկոնսերվատիզմի բոլոր դրսևորումների համար ընդհանուրն այն է, որ նա կարողանում է իրականության նկատմամբ ռացիոնալիստական մոտեցումը զուգակցել բարոյական սկզբունքների հետ, և առաջ է քաշում սոցիալապես պատասխանատու անհատի և քաղաքականապես կայուն պետության փոխհարաբերու-թյունների պարզ բանաձևը: Տնտեսական ոլորտում նեոկոնսերվատորները հանդես եկան որպես ազատ շուկայի և մրցակցության կողմնակիցներ, անհատական ձեռ-ներեցության և պետության միջամտության սահմանափակման օգտին: Նման գաղափարներն, իրենց բովանդակությամբ համարվում են մա-քուր լիբերալ: Այդ պատճառով որոշ տեսաբաններ ցավագին ընդունե-ցին մամուլի կողմից կոնսերվատորների շարքերին իրենց դասելու

փաստը: Այսպես, օրինակ, 1976 թ. Նոբելյան մրցանակի արժանացած Մ. Ֆրիդմանը, որի կողմից մշակված մոնետարիստական կուրսն ընկավ նեոկոնսերվատիզմի տնտեսական կոնցեպցիայի հիմքում, բազմիցս նշել է, որ ինքն իրեն երբեք կոնսերվատոր չի համարել և սեփական եզրահանգումները դիտում է որպես մաքուր լիբերալ: Հանդես գալով ազատ շուկայի օգտին նեոկոնսերվատորները կտրականապես դեմ են նման

հարաբերությունների փոխանցմանը քաղաքական ոլորտ: Այդ պատճառով նրանք դիտվում են որպես, մի կողմից լիբերալիզմի ժառանգորդներ, իսկ մյուս կողմից դրա հակառակորդներ: Տնտեսական և սոցիալական ոլորտներում պետության միջամտության մերժումը նեոկոնսերվատորների կողմից հիմնավորվում է ոչ լիբերալ մեթոդներով: Նրանց կարծիքով պետության նման միջամտությունը խախտում է հետևյալ ավանդական սկզբունքը՝ յուրաքանչյուր մարդ հույսը պետք է դնի սեփական կարողությունների վրա: Այդ միջամտությունը հյուծում է հասարակությունը, խաբխխում նրա ավանդական սոցիալական ինս-տիտուտները (ընտանիքը, համայնքը, եկեղեցին):

Գործնականում կոնսերվատորների քաղաքականությունն ուղղված է պետական ապարատի աշխատակիցների թվի կրճատմանը, կառավար-ման այն մեթոդների արմատավորմանը, որոնք իրենց արդյունավետու-թյունը ցույց են տվել մասնավոր սեկտորում, մանր բիզնեսի խրա-խուսմանը, բաժնետիրական ընկերությունների շահույթների բաշխման գործում ընդգրկված մարդկանց շրջանակի ընդլայնմանը, սեփականու-թյան ապապետականացմանը և այլն: Նեոկոնսերվատորներն աշ-խատում էին արտադրության մեջ արմատավորել աշխատանքի այն-պիսի եղանակներ, որոնք թուլացնում են աշխատավորի օտարացումը արտադրական միջոցներից և բարձրացնում նրանց աշխատանքի արդյունավետությունը (օրինակ, կոլեկտիվ կամ բրիգադային կապալը):

Նեոկոնսերվատորների քաղաքական հայացքների համակարգը հենվում է հետևյալ դրույթների վրա՝ անհատի ենթարկումը պետությանը, ազգի քաղաքական և հոգևոր ընդունակության ապահովումը, պատ-րաստականությունը հակառակորդի նկատմամբ դիմելու ամենաարմա-տական միջոցների կիրառմանը:

Նեոկոնսերվատորների տեսական համակարգում մեծ տեղ է գրա-վում իշխանության հիմնահարցը: Ըստ իրենց, իշխանությունը հարկա-վոր է կարգ ու կանոնի հաստատման համար: Դրա բացակայությունը կարող է հանգեցնել հասարակության փլուզմանը: Տվյալ դեպքում իշխանությունը առանձին անհատի կամ մարդկանց խմբի հնարա-վորությունն է արձագանքելու հասարակական տարբեր իրադրություն-ների և դրանց զարգացման վրա ներազդելու ունակությունը:

Նեոկոնսերվատիզմը յուրահատուկ մոտեցում է ցուցաբերում նաև իշխանությունների տարանջատման հարցին: Նեոկոնսերվատորների կարծիքով արդի առաջնային պրոբլեմներից է ոչ թե պետական իշխանության երեք ճյուղերի միջև օպտիմալ փոխհարաբերությունների հաստատումը, այլ իշխանության բաժանման խնդիրը, առանձին վերցրած, պետության, տնտեսության և զանգվածային լրատվության միջոցների միջև:

Հակառակ լիբերալիզմի, որը պետական իշխանությունը դուրս է բերում ժողովրդական ինքնիշխանությունից, կոնսերվատիզմն այն օրինականացնում է ավանդությունների օգնությամբ: Կոնսերվատոր-ները գտնում են, որ ՉԼՄ-ների կողմից հասարակական կարծիքը մանիպուլյացիայի ենթարկելու հնարավորության պայմաններում չի կարելի բացարձակականացնել մեծամասնության կամքը: Լիբերալների «ներկայացուցչական դեմոկրատիային», որը որոշակի պատմական պայմաններում հանդիսացավ որպես ձախերի նոր քաղաքական կուլտուրայի արտահայտություն, նեոկոնսերվատորները հակադրեցին «էլիտաների դեմոկրատական տիրապետության կոնցեպցիան»: Այն պայմաններում, երբ, իրենց կարծիքով, պահանջվում է ակտիվ և պարզ քաղաքականության իրականացում, միայն էլիտար կամ սահմանափակ դեմոկրատիան կարող է առավել արդյունավետ կարգավորել հասա-րակական կյանքը:

Նեոկոնսերվատիզմի տեսաբանները «էլիտա» հասկացությունը դի-տում են որպես «բարձր որակավորում ունեցող փոքրամասնություն» և ամենևին էլ պարտադիր չեն համարում, որ

այն իր մեջ ընդգրկի միայն իշխող դասակարգի վերնախավը: Էլիտան, ըստ իրենց, ձևավորվում է առանձին անհատների բացառիկ ունակությունների («անհատական խարիզմայի») դրսևորման հետևանքով: Ուստի, էլիտան իր մեջ ընդգրկում է տվյալ հասարակության առավել առողջ ուժերին, որոնք նպաստում են տնտեսապես իշխող դասակարգի քաղաքական դիրքերի ամրապնդմանը:

Ըստ նեոկոնսերվատորների, հասարակության մեջ միակ ստեղծա-րար դեր խաղացող էլիտան որոշակի ուղղություն է տալիս նաև ընդհանրապես պատմության զարգացմանը: Ժողովուրդների պատմու-թյունը նեոկոնսերվատորները դիտում են որպես էլիտաների պատ-մություն: Նրանք պնդում են, որ հասարակ ժողովուրդն ընդունակ չի ներագրելու հասարակության կառավարման գործընթացի վրա: Ջանգ-վածներն, ըստ իրենց, երբեք չեն իրականացնում իշխանությունը, նրանք ընդունակ են միայն ուժ գործադրելու:

«Էլիտաների դեմոկրատական տիրապետության» տեսությունը վերանայում է նաև լիբերալիզմի հավասարության սկզբունքը: Նեո-կոնսերվատորներն այն դիտում են որպես անհեթեթություն: Նրանք պնդում են, որ սոցիալական անհավասարությունը, ինչպես նաև մարդկության պատմությունը նույնպես հին ու անփոփոխ է: Ըստ նրանց, հավասարության կիրառման բոլոր փորձերը ամբողջատիրության առաջացման վտանգ են պարունակում: Ժողովրդավարության ընդարձակումը, նեոպահպանողականների կարծիքով, հանգեցնում է դարերի ընթացքում հղկված կապիտալիս-տական ինստիտուտների

սպակայունացմանը: Ժողովրդավարության անարդյունավետության հիմնական պատճառը նրանք համարում են անհատի պասիվությունն ու անիրազեկությունը: Հասարակության բոլոր անդամների ընդգրկվածությունը որոշումների ընդունման գործընթացում համարվում է ոչ միայն ուտոպիական, այլ նաև վնասակար:

Իր պատմության ընթացքում կոնսերվատիզմը ցուցաբերում էր կատարելագործվելու ունակություն: Լիբերալիզմի հետ մրցակցության ընթացքում նա ընդօրինակեց վերջինի առավել հաջող քաղաքական քայլերը: Առաջին հերթին դա վերաբերում է պետության միջամտության սահմանափակմանը և ազատության գաղափարի լայն կիրառմանը: Դրանով իսկ, նեոկոնսերվատիզմն իր գաղափարախոսական դրույթ-ներով մոտեցավ դասական լիբերալիզմին: Ըստ անգլիական պատ-մաբան և լրագրող Պ. Քոլիի, «բուն դասական լիբերալիզմի գաղափա-րախոսության կրողն են այսօր հանդիսանում պահպանողական կուսակցությունները, որոնք բարձրացրին «Նոր լիբերալների» կողմից ժամանակին դեմ նետված ազատության դրոշմը»<sup>5</sup>:

## ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

### ՍՈՑԻԱԼԻԶՄ

Ընդլսնուր առնամբ, սոցիալիզմը (ընկերավարությունը) թերագնա-հատում է անհատների տնտեսական ազատության, ինչպես նաև մրցակցության նշանակությունը: Նա լիովին չի ընդունում այն դրույթը, ըստ որի աշխատանքի վարձատրության անհավասարությունը հան-դիսանում է մարդու և հասարակության նյութական բարեկեցության աճի նախադրյալ: Դրանց փոխարինող մեխանիզմներ են համարվում եկա-մուտների վերաբաշխումը, տնտեսական և սոցիալական գործընթաց-ների քաղաքական կարգավորումը, սոցիալական հավասարության ու արդարության նորմերի և սկզբունքների մշակումը պետության կողմից: Այլ կերպ ասած, սոցիալիստական ուսմունքը հիմնականում շեշտը դնում է ո՛չ թե անհատի, այլ պետության վրա, սոցիալական գործընթացների ո՛չ թե էվոլյուցիոն բնույթի, այլ դրանք նպատակաուղղված կարգավորելու անհրաժեշտության վրա, ո՛չ թե տնտեսության, այլ քաղաքականության վրա: Իհարկե, սոցիալիստական ուղղության տարբեր տեսությունները տարբեր մոտեցումներ են ցուցաբերում այդ դրույթներին:

#### 1. Սոցիալիստական գաղափարների պատմական զարգացումը

Սոցիալիզմը (լատիներեն *socialis* նշանակում է հասարակական) որպես քաղաքական գաղափարախոսություն պատմականորեն կապ-ված է սոցիալական արդարության և համերաշխության հասարակու-թյուն ստեղծելու, անհատի սոցիալական պաշտպանվածությունն ապա-հովելու մարդկանց դարավոր իդեերի հետ: Սոցիալական արհա-վիրքները սոցիալիզմը հակված է կապելու արտադրամիջոցների նկատմամբ սեփականատիրական հարաբերությունների հետ, քաղա-քական փոփոխությունները սոցիալական ոլորտի վերափոխման հետ: Դեռևս Հին աշխարհի մտածողները առաջ էին քաշել մի շարք տար-բերակներ ապագա «ոսկե դարի» մասին, որը պետք է զուրկ լիներ անհավասարությունից, շահագործումից և սեփականատիրական հա-րաբերություններից: Բանավեճեր էին ընթանում գույքային անհավա-սարության պրոբլեմի և հասարակության «բնական իրավունքի», պոլիսային դեմոկրատիայի և «բարիքների արդար բաշխման» սկզբ-բունքի շուրջ: Նմանատիպ մոտեցում էր նկատվում նաև վաղ շրջանի քրիստոնեության մեջ: Նրա տեսական համակարգը հագեցված էր հա-մամարդկային հավասարության, եղբայրության և սպառողական կոմունիզմի գաղափարներով: Սոցիալ-ուտոպիական պատճառաբա-նություններն առավել ակտիվ զարգացան ավելի ուշ՝ վալդենսների, տաբորիտների, լոլլարդների, անաբապտիստների, պավլիկյանների և այլ աղանդավորական շարժումների գաղափարներում: Սոցիալական անհավասարության և շահագործման հիմնական աղբյուրը դրանք համարում էին եկեղեցու և իշխող դասակարգերի ուրացումը վաղ քրիստոնեական գաղափարներին և սկզբունքներին: Վերակենդա-նացվում էին ինքնակառավարվող համայնքներից քաղկացած հասա-րակարգի մասին պատկերացումները: Նման համայնքների ստեղծման փորձը որոշ աղանդներում զուգորդվում էին համատեղ արտադրություն կազմակերպելու ձգտումներով:

Վերջին միտումն առավել ուժեղացավ Թ. Մորի («Ուտոպիա») և Թ. Կամպանելլայի («Արևի քաղաք») կոմունիստական ուտոպիաներում: Այդ մտածողների ուսմունքներում հիմնավորվում էր գույքային ընդ-հանրության սկզբունքի անցումը հասարակական արտադրություն կազմակերպելու սկզբունքին, ինքնամփոփ համայնքի մասին գաղա-փարի վերածումը խոշոր քաղաքական միավորի՝ քաղաքի կամ քա-ղաքների դաշնության ստեղծման գաղափարի: Այդ տեսական կոն-ցեպցիաներում մեծ տեղ էր տրվում պետությանը, որը պետք է կարգավորեր տնտեսական և մշակութային կյանքը, ջանքեր գործադրեր արդար հասարակարգի ստեղծման ուղղությամբ:

Նոր պատմության ժամանակաշրջանում սոցիալիզմը հետզհետե հրաժարվում է կրոնական թաղանթից և հարում լուսավորության գաղափարներին: Դ. Ուինստենլին ապագա արդար հասարակությունը դիտում էր ռացիոնալիստական տեսանկյունից, Ժ. Մեյենն ձևակերպեց մատերիալիզմի և աթեիզմի ծրագիրը, վերհանեց համայնքային նա-հապետական կոմունիզմի նախագծերը, Մորելլին ու Մաբլին կոմունիզմը հիմնավորեցին բնական իրավունքի տեսության դիրքերից: Ապագա հասարակարգի կառուցման սկզբունքների մշակումը նշված հեղինակ-ների կողմից դեռևս ռոմանտիկ բնույթ էր կրում: Այդ սկզբունքներն առավել գործնական բովանդակություն ձեռք բերեցին ֆրանսիական Մեծ հեղափոխության տարիներին Բաբյոֆի և նրա կողմնակիցների ծրագրում («Հավասարների դավադրություն»), որտեղ հիմնավորվեց հեղափոխական դիկտատուրայի՝ որպես կոմունիստական վերափո-խումների, միակ ճշմարիտ եղանակի վերաբերյալ գաղափարը:

Սոցիալիստական գաղափարներն իրենց դասական ձևն ընդունեցին կապիտալիզմի հաստատմանը զուգահեռ: Նոր հասարակության վաղ շրջանին հատուկ հակասությունները դարձան սուր սոցիալական քննադատության օբյեկտներ: Կլոդ Անրի դե Սեն-Սիմոնը, Շարլ Ֆուրյեն, Ռոբերտ Օուենը սոցիալիստական հասարակարգի ձևավորման գործում առաջնային համարեցին արտադրատնտեսական ոլորտի վերափոխ-ման խնդիրը: Նրանք առաջին պլան մղեցին հասարակական խոշոր արտադրության կազմակերպման հարցը, որը պլանաչափ եղանակով պետք է կիրառի գիտության և տեխնիկայի նվաճումները: Այդ տե-սաբանները հանդես եկան վաղ սոցիալիզմին հատուկ հավասարեցման և համընդհանուր ասքեթականության պատկերացումների դեմ և հիմնավորեցին «ըստ կարողությունների բաշխման» սկզբունքը: Նրանք առաջ քաշեցին նաև սոցիալիզմի հետագա զարգացման համար շատ կարևոր գաղափարներ՝ մտավոր և ֆիզիկական աշխատանքի, քաղաքի և գյուղի միջև եղած հակադրությունների վերացման անհրաժեշ-տությունը, մարդկանց կառավարմանը վերաբերող պետության ֆունկցիայի վերափոխումը արտադրության կառավարման ֆունկցիայի և այլն:

Պահպանելով գաղափարական կապը 18-րդ դարի ռացիոնալիզմի հետ ուտոպիական սոցիալիզմն իր մեջ ընդգրկեց նաև մի շարք կրոնական պատկերացումներ ևս (Սեն-Սիմոնի «նոր քրիստոնեո-թյունը», Օուենի «սոցիալիստական կրոնի» վրա հիմնված «նոր բարոյական աշխարհը» և այլն): Պատահական չէ, որ 19-րդ դ. առաջին կեսի սոցիալիստներից շատերի համար բնորոշ էր տարբեր դասա-կարգերի համերաշխության առանձին կոմունաների՝ որպես հասարա-կական կյանքի ձևափոխման միջոցների ստեղծման գաղափարների մշակումը:

Այդ ժամանակաշրջանի սոցիալիստական տեսությունը սկսում է ճյուղավորվել: Այսպես, օրինակ, առաջանում են հոսանքներ, որոնք մի կողմից, հասարակության խաղաղ վերափոխման առավել արդյունա-վետ ուղին համարում են դասակարգերի տնտեսական համագործակ-ցությունը, հիմնված արտադրական (Բյուշե, Լ. Բլան, Պեկկեր, Լերու) կամ համարժեք ապրանքափոխանակման (Գրեյ, Պրուդոն) ասոցիա-ցիաների վրա: Մյուս կողմից, զարգանում է դրան հակառակ հոսանքը՝ նեոբաբուլիստական կոմունիզմը, որը նոր լիցք է հաղորդում հասա-րակությունը անհապաղ կոմունիստական վերափոխման ենթարկելու (հեղաշրջման և հեղափոխական դիկտատուրայի հաստատման միջոց-ով) և «հանրային սեփականությունը հետևողականորեն արմատա-վորելու» մասին գաղափարին (Դեգամի, Ժ.-Ժ. Պիյո, Օ. Բլանկի): 19-րդ դ. կեսերից այդ

հոսանքները հետզհետե գիջում են իրենց տեղը Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «գիտական սոցիալիզմին»:

Մարքսիզմի հիմնական դրույթն այն է, որ սոցիալիզմն ամենևին ազատության և արդարության արատրակտ սկզբունքների իրականացումը չէ, այլ պատմական զարգացման և դասակարգային պայքարի օրինաչափ արդյունքը: Ըստ այդ գաղափարախոսության կապիտալիզմի արտադրական հարաբերությունները, սկզբում նպաստելով արտադրողական ուժերի զարգացմանը, հետագայում խոչընդոտ են հանդիսանում դրանց համար: Դա նշանակում է, որ կապիտալիզմի ճանապարհով ընթացող առավել զարգացած երկրները կանգնում են հասարակարգի փոփոխության անհրաժեշտության առջև: Նոր հասարակարգի հիմնական նյութատեխնիկական նախադրյալը՝ աշխատանքի ընդհանրացման գործընթացների զարգացումը, ըստ մարքսիզմի, առաջանում են հենց կապիտալիզմի օրոք: Քանի որ կապիտալը հազիվ թե խաղաղ ճանապարհով հանձնի իշխանությունը, կապիտալիստական հարաբերություններն, ըստ Մարքսի, պետք է վերացվեն հեղափոխական ճանապարհով: Գլխավոր հեղափոխական սուբյեկտ է հանդիսանում սեփականագուրկ բանվոր դասակարգը, որն աճել և ամրապնդվել է կապիտալիստական հասարակարգում: Մարքսիստների պնդումով պրոլետարիատն իր բնույթով ապագային է և ընդունակ է միավորելու սոցիալական բողոքի նշան կրող աշխարհի բոլոր ուժերին: Հենվելով գիտատեխնիկական առաջընթացի հնարավորությունների, արտադրու-թյան և բաշխման հանրային բովանդակության, ինչպես նաև հեղափոխությունից հետո հասարակության բոլոր խավերի շահերն ար-տահայտող պետության կազմակերպման գործունեության վրա, հեղափոխական իշխանությունն աստիճանաբար հասարակությունը մոտեցնում է կոմունիզմին: Վերջինում յուրաքանչյուրի ազատ զարգացումը պայման է հանդիսանում հասարակության բոլոր անդամների ազատ զարգացման համար, վերանում են սոցիալական անհավասարությունը, և դասակարգերի միջև էական տարբերությունները: Այդ գործընթացներն ի վերջո հանգեցնում են պետության վերացմանը:

Բնութագրելով նշված հեղափոխական իշխանությունը Մարքսն ու Էնգելսը օգտագործեցին պրոլետարիատի դիկտատուրա հասկացու-թյունը, որը հետագայում տառացիորեն հասկացվեց որոշ կոմունիստա-կան կուսակցությունների կողմից: Մարքսիզմն էականորեն տարբերվում է նախորդ ավանդություն-ներից: Առաջին անգամ սոցիալիստական գաղափարների հիման վրա ձևավորվեց հզոր քաղաքական շարժում, որն իր մեջ ընդգրկեց մի-լիոնավոր համախոհների: Սկսած Մարքսից սոցիալիզմի մասին հնարավոր եղավ խոսել ոչ միայն որպես քաղաքական դոկտրինայի, այլ նաև որպես սոցիալական և քաղաքական գործնականի մասին (սկզբում հեղափոխական շարժման, իսկ ավելի ուշ հասարակական կացութաձևի տեսքով):

Այսպես, Մարքսի և Էնգելսի կողմից 1864 թ. ստեղծված I Ինտեր-նացիոնալը, տարածելով մարքսիզմի դրույթները առաջավոր բանվոր-ների միջավայրում, նպաստեց մասսայական սոցիալիստական բան-վորական կուսակցությունների առաջացմանը Եվրոպայի շատ եր-կրրներում: 1889 թ. ստեղծված II Ինտերնացիոնալն արդեն ոչ թե բան-վորների միջազգային ընկերակցություն էր, այլ ամուր սոցիալիստական կուսակցությունների միջազգային միավորում: Այդ ժամանակաշրջա-նում մարքսիստական բանվորական շարժումը դեռևս միասնական էր, իսկ դրա մեջ ընդգծված ուժերը դեռևս կիսում էին մարքսիզմի հիմնական դրույթները հասարակության հեղափոխական վերափոխության վերա-բերյալ:

Մարքսիզմը բազմաբնույթ և հակասական տեսություն է: Պատահա-կան չէ, որ հետագայում դրա հիմքի վրա զարգացան որակապես տարբեր տեսական հոսանքներ: Մարքսի ուսմունքի որոշ տարրերը արդի քաղաքական կյանքում պահպանում են իրենց նշանակությունը: Օրի-նակ, պոստիմպրիստիալիզմի ներկայացուցիչները Մարքսին դասում են իրենց տեսության հիմնադիրների շարքում: Հայտնի ամերիկյան տրն-տեսագետ Ջ. Կ. Գելբրայտը գրում էր. «Մարքսին ես այնպիսի խոշոր գործիչ եմ համարում, որ չեմ ցանկանում նրան ամբողջովին հանձնել սոցիալիստներին և կոմունիստներին»: Միևնույն ժամանակ մարքսիզմն իսկզբանե կրում էր հասարակական

գարգացման օրգանական ամ-բողջականության փլուզման մասին գաղափարները, որոնք խիստ քննադատության ենթարկվեցին կոնսերվատորների կողմից: Դրա հետ մեկտեղ, մարքսիզմը հակված էր թերագնահատելու անհատի դերը պատմության մեջ: Այս տեսանկյունից նա արդեն մեղադրանքի ար-ժանացավ լիբերալների կողմից: Էնգելսի մահից հետո II Ինտերնացիոնալում խորացան տարա-ձայնությունները մարքսիզմի հիմնադրույթների շուրջ: 20-րդ դարի սկզբում միջիմպերիալիստական հակասությունների ուժեղացման պայմաններում և հատկապես Առաջին աշխարհամարտի տարիներին նախկինում միասնական սոցիալական շարժումը ջլատվեց: Լենինյան ՌՄԳԲԿ-ն անցավ միջազգային բանվորական շարժման ձախ ինտեր-նացիոնալիստական ուժերի համախմբմանը: Հոկտեմբերյան (1917 թ.) հեղափոխության հաղթանակից հետո այդ ուժերը դուրս եկան սո-ցիալ-դեմոկրատական կուսակցություններից և ստեղծեցին սեփական քաղաքական կուսակցություններ, որոնք ավելի ուշ միավորվեցին III Կոմունիստական Ինտերնացիոնալի շրջանակներում: Աջ սոցիալիստա-կան և սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները ևս մի շարք ժա-մանակավոր միավորումներ ստեղծելուց հետո (Բերնի ինտերնացիոնալը 1919-1923 թթ., Վիեննայի ինտերնացիոնալը 1921-1923 թթ.) վերջնա-կանապես վերականգնեցին իրենց միասնությունը սոցիալիստական բանվորական ինտերնացիոնալի շրջանակներում (1923), որը Երկրորդ աշխարհամարտից հետո վերանվանվեց սոցիալիստական ինտերնա-ցիոնալի:

## 2. Կոմունիզմ

Մարքսն իր ուսմունքը ստեղծեց գարգացած եվրոպական երկրների բանվոր դասակարգի համար: Էնգելսի հետ նա տեսականորեն հիմ-նավորեց սոցիալիզմը, որի կենսագործումը կապվեց պատմականորեն ավելի հեռավոր «համընդհանուր լիության» հասարակության ձևա-վորման գործընթացի հետ:

Վ. Լենինը տեղայնացրեց մարքսիզմը Ռուսաստանում, և մշակելով սոցիալիստական հեղափոխության մասին ուսմունք, տեսականորեն հիմնավորեց «բուրժուական պետական մեքենայի ոչնչացման» ու «պրոլետարիատի դիկտատուրայի» մասին դրույթները: Հիմնավորելով սոցիալիստական հեղափոխության իրականացման հնարավորությունը ոչ գարգացած երկրներում Լենինն ու իր կողմնակիցները հարեցին «գիտական սոցիալիզմի» ֆունդամենտալիստական թևին: Նրանց կար-ծիքով հեղափոխական ճանապարհով ստեղծված բանվոր դասակարգի դիկտատուրայի պետությունը նոր հասարակարգ ստեղծելու նպա-տակով պետք է դիմի խիստ ուժային միջոցների: Նման քաղաքա-կանությունն, ըստ Լենինի, ընդունակ էին իրականացնել միայն «նոր տիպի» կուսակցությունները, որոնք հետագայում կոչվեցին «կոմու-նիստական» (ըստ իրենց առջև դրված կոնկրետ նպատակի՝ շու-տափույթ կառուցել կոմունիստական հասարակարգը): Լենինը նոր լիցք հաղորդեց մարքսիզմի հիմնադրույթներին, շեշտը դնելով քաղաքական և գաղափարախոսական հակառակորդների դեմ մղվող պայքարի վրա: Սակայն դա չիսանգարեց նրան կրիտիկական պայմաններում ուժ գտնել իր մեջ հաղթահարելու դասակարգային նախապաշարմունքները և անցնել ավելի իրատեսական գաղափարա-խոսական սկզբունքների կիրառմանը (ՆԷՊ): Բոլշևիկյան գաղափար-ների ընդունումը Ռուսաստանի բնակչության կողմից պայմանավորված էր այստեղ տիրող հեղափոխական էնտուզիազմով, ինչպես նաև քաղաքական ավանդությունների որոշ առանձնահատկություններով (ուժեղ պետության դերը, հասարակության մեջ բարոյական, այլ ոչ թե իրավական գիտակցության առաջնությունը, տնտեսական կյանքում կոլեկտիվիստական սկզբունքների տիրապետությունը և այլն): Արդեն իսկ Լենինի օրոք նպատակաուղղված աշխատանք էր իրականացվում մարքսիզմը պաշտոնական գաղափարախոսություն դարձնելու համար: Ի դեպ, ժողովրդական զանգվածների համար այն ավելի պարզ դարձնելու նպատակով մարքսիզմն այդ ընթացքում գռեհկացվեց, ընդգծվեցին բոլոր իրավիճակների համար ընդունելի



գաղափարական սխեմաներն ու կանոնները: Այդ գաղափարախոսությունն անվանվեց մարքսիզմ-լենինիզմ:

Մարքսիզմի տեսությունը տեսական բնագավառից գործնականի վերածվեց արևելյան տիպի հասարակություններում, որտեղ չքավոր-ները, ցածր եկամուտ ստացող աշխատավորները ճնշող մեծամասնություն էին կազմում: Սեփականության վերաբաշխման, բուրժուական դասակարգի վերացման և համաժողովրդական պետության ստեղծման մասին կոմունիստական գաղափարներն այստեղ հրապուրեցին մի-լիոնավոր մարդկանց: Նշված երկրների բնակչության մեծամասնությունը չունեի Մարքսի նկարագրած հասարակության կառուցման համար պահանջվող քաղաքական կուլտուրայի համապատասխան մակարդակը:

Դրա հետ մեկտեղ, մարքսիզմը տարածում գտավ նաև որոշ զարգացած երկրներում:

Այսպես, եթե եվրոպական երկրներից շատերում մարքսիստական կուսակցությունները շատ թույլ էին, ապա 1919-1933 թթ. Գերմանիայում, 1945-ից հետո՝ Ֆրանսիայում, Իտալիայում և Ֆինլանդիայում դրանք որոշ հեղինակություն էին ձեռք բերել:

Գերմանիայում մարքսիստական գաղափարները որոշակի տարածում գտան քաղաքական լարվածության և տնտեսության մեջ գոյություն ունեցող հակասությունների սրման հետևանքով: Դա առաջ բերեց աշխատավորության լայն զանգվածների դժգոհությունը: Մարքսիզմի դրույթները շատ հրապուրիչ թվացին դրանց զգալի մասի համար: Ինչ վերաբերվում է մարքսիստական որոշ կուսակցությունների ամրա-պնդմանը Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, ապա դրա հիմնական պատճառներն են կոմունիստական ԽՍՀՄ-ի վճռորոշ դերը ֆաշիզմի ջախջախման գործում, եվրոպական ժողովուրդների զգալի կորուստները (թե մարդկային և թե նյութական), եվրոպական տրև-տեսության շուտափույթ վերականգնման անհրաժեշտությունը: Սակայն թվարկված ոչ մի երկրում մարքսիզմը այնուամենայնիվ չկարողացավ հաղթանակել:

Միջազգային կոմունիստական շարժումը ծնունդ առավ 1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, իսկ 1919-1943 թթ. ընթացքում հիմնականում զարգանում էր կոմունիստական կուսակցությունները միավորող Կոմունիստական Ինտերնացիոնալի շրջանակներում: Երկ-րորդ համաշխարհային պատերազմից հետո կոմկուսների միջև կայան հրականացվում էր կոմունիստական և բանվորական կուսակցություն-ների միջազգային խորհրդակցությունների (1957, 1969), ինչպես նաև Եվրոպայի, Լատինական Ամերիկայի, Աֆրիկայի և Ասիայի մայրցամաքային խորհրդակցությունների միջոցով: Մարքս-լենինյան ուսմունքով ղեկավարվող միջազգային կոմունիստական շարժումը 20-րդ դ. 80-ական թթ. իրենից հզոր քաղաքական ուժ էր ներկայանում: Այն ընդգրկում էր 90 մլն. մարդ, որից 86 մլն. գտնվում էր աշխարհի 15 սոցիալիստական երկրներում (միայն 47 մլն. Չինաստանում): 80 ոչ սոցիալիստական երկրների կոմունիստների թիվը կազմում էր մոտ 4 մլն.: Առավել մասսայականություն էին վայելում Իտալիայի, Ֆրանսիայի, Իսպանիայի, Պորտուգալիայի, Ֆինլանդիայի, Հունաստանի, Չիլիի կոմունիստական կուսակցությունները:

Լենինյան ֆունդամենտալիզմը կյանքի կոչեց ստալինյան բռնա-պետությունը:

Ստալինյան տեսաբանները առաջ քաշեցին այն գաղափարը, համաձայն որի սոցիալիզմի կառուցմանը զուգահեռ, սրվում է նաև դասակարգային պայքարը: Դրանով իսկ քաղաքականապես հիմնավորվեցին պետության կողմից իրականացվող բնակչության ոչնչացումն ու զանգվածային ահաբեկչությունները:

Սոցիալիստական գաղափարների կենսագործման փորձը հետպա-տերազմյան Չինաստանում առաջադրեց սոցիալիզմի մեկ այլ տա-րատեսակ՝ մաոիզմը (Չինաստանի Կոմկուսի գլխավոր քարտուղար Մաո Յզե Դունի անունով): Այս ուղղությունն ընդօրինակեց ներքին ու արտաքին թշնամիների դեմ պայքարելու անհրաժեշտության մասին ստալինյան գաղափարը: Սակայն սոցիալիզմի կառուցման գործում մաոիզմը պատմական կարևորագույն ուժ էր դիտում գյուղացիությունը, որը պետք է «վերադաստիարակեր» հասարակության բոլոր շերտերին հեղափոխական ոգով: Մաոիզմը տարածում գտավ Հնդկաստանում, Աֆրիկայում և Լատինական Ամերիկայում:

Սոցիալիստական շինարարության մեկ այլ հոսանք առաջացավ Հարավսլավիայում: Այն կոչվեց տիտոիզմ (Ի. Տիտոն սկզբում Հարավսլավիայի կոմկուսի գլխավոր քարտուղարն էր, իսկ հետո Հարավսլավական Հանրապետության նախագահը): Տիտոիզմը հնա-րավոր համարեց իրականացնել սոցիալիզմի կառուցման ծրագրերն առանց խորհրդային զորքերի ներկայության (ի տարբերություն Արևելյան Եվրոպայի երկրների): Բացի դրանից այս հոսանքն ընդունում էր սոցիալիստական շինարարության ընթացքում առաջացող ներքին կոնֆլիկտների և հակասությունների գոյությունը, գլխավոր ներքին թշնամու՝ բյուրոկրատիայի, դեմ պայքարելու անհրաժեշտությունը, ձգտում էր սահմանափակել կոմկուսի դերը հասարակության մեջ և պահպանել շուկայական հարաբերությունները:

### 3. Սոցիալ-դեմոկրատիզմ

Սոցիալ-դեմոկրատիայի պատմությունը սերտորեն կապված է բանվորական շարժման պատմության հետ: Այն առաջացավ որպես կապիտալիզմի այլընտրանք: Սկզբում այդ գաղափարական հոսանքն ընդունում էր կապիտալիզմի վերացման և հասարակության արմատա-կան վերափոխման, պրոլետարիատի դիկտատուրայի, արտադրամիջոցների հանրայնացման, համընդհանուր հավասարության մասին մարքսիստական գաղափարները: Նրա որոշ ներկայացուցիչներ ընդունում էին նաև մարքսիստների կողմից առաջարկվող կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու հեղափոխական ճանապարհը: Սակայն իրա-կան կյանքում սոցիալ-դեմոկրատիան հետ կանգնեց այդ դրույթներից և ընդունեց բուրժուական հասարակական-քաղաքական ինստիտուտների գոյության անհրաժեշտությունը: Սոցիալ-դեմոկրատական կուսակցու-թյունները դարձան պառլամենտական և մեծ գործ կատարեցին բանվոր դասակարգին իշխող համակարգի մեջ ընդգրկելու ուղղությամբ: Այս առումով սոցիալ-դեմոկրատիայի ամբողջ հետագա պատմությունը կարելի է դիտել, որպես մարքսիզմից հեռանալու ժամանակաշրջան: 19-րդ դ. երկրորդ կեսի և 20-րդ դ. սկզբի տնտեսական և քաղաքական պայքարը ցույց տվեց, որ բանվոր դասակարգի պահանջներից շատերը կարող են իրագործվել խաղաղ միջոցներով՝ հասարակության բարե-փոխմանը զուգահեռ: Այդ պատճառով նշված ժամանակաշրջանում սոցիալիստական և սոցիալ-դեմոկրատական կուսակցություններից շա-տերի քաղաքական ծրագրերը մեղմացվեցին: Դրանք այլևս չէր կարելի անվանել, բառի բուն իմաստով, հեղափոխական: Այդ միտումը հատ-կապես ուժեղացավ 1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, որն ամբողջ աշխարհին ցույց տվեց հասարակության վերափոխման հեղափոխական ճանապարհի վնասակարությունը: Դրանով պայմանա-վորվեց համաշխարհային բանվոր դասակարգի ջլատումը, որն արտա-հայտեց բանվորների տարբեր մոտեցումները մարքսիզմի դասակար-գային պայքարի, հեղափոխության և պրոլետարիատի դիկտատուրայի վերաբերյալ գաղափարների: Հետագայում III Ինտերնացիոնալի ստեղծումը ձևավորեց դրա կազմակերպչական ջլատումը:

Կանխագուշակելով ավտորիտար սոցիալիզմի առաջացման հնա-րավորությունը հեղափոխական ճանապարհով գնացած երկրներում սոցիալ-դեմոկրատիայի ռեֆորմիստական թևի առաջնորդներն իրենց նպատակը համարեցին դեմոկրատական սոցիալիզմի կառուցումը:

«Դեմոկրատական սոցիալիզմ» հասկացությունն առաջին անգամ օգտագործվեց 1888 թ. սոցիալ-դեմոկրատական ռեֆորմիզմը բնորոշելու նպատակով: Ավելի ուշ այն օգտագործեցին Է. Բերնշտեյնը և Կ. Կաուցկին: Դեմոկրատական սոցիալիզմի սկզբնական կոնցեպցիայի հիմքում ընկած էր Լ. ֆոն Շտայնի կողմից 19-րդ դ. կեսերին մշակված ծրագիրը, որը նախատեսում էր բանվոր դասակարգի տնտեսական, քաղաքական և հոգևոր ինտեգրացումը գոյություն ունեցող համակարգի մեջ: Այդ ավանդության կողմնակիցներին բնորոշ է կապիտալիստական հասարակության զարգացման գործում իրավական պետության դրա-կան ազդեցության ընդունումը: Բերնշտեյնի կողմից մշակված դեմոկրատական սոցիալիզմի կոն-ցեպցիան ընդգրկում է հետևյալ հիմնական գաղափարները: Առաջին հերթին Բերնշտեյնը մերժեց կապիտալիզմի

ճգնաժամի և ժողովրդական զանգվածների հետագա աղքատացման մասին Մարքսի ուսմունքը: Այդ պատճառով նա հիմք չէր տեսնում պրոլետարական հեղափոխության անցկացման համար: Չնայած, որ ֆեոդալիզմը վերացվեց բռնի ճա-նապարհով, ըստ Բերնշտեյնի, ժամանակակից լիբերալ ինստիտուտ-ները, ի տարբերություն ֆեոդալականի, այնքան ճկուն են, որ բանվոր դասակարգը ոչ թե պետք է պայքարի դրանց դեմ, այլ ամեն կերպ պետք է նպաստի դրանց զարգացմանն ու կատարելագործմանը: Այդ կա-պակցությամբ բանվոր դասակարգը պետք է հետևի բարենորոգումների կուրսին: Բերնշտեյնը գտնում էր, որ անհրաժեշտ է օգտագործել իշխանության նվաճման միայն օրինական միջոցները: Բուրժուազիան, ըստ նրա, պետք է համոզվի, որ սոցիալիստները չեն ցանկանում իշ-խանությունը գրավել բռնի ճանապարհով, ինչպես դա եղավ բուրժուա-կան հեղափոխությունների ընթացքում: Ուստի, Բերնշտեյնի կարծիքով, պետք է հրաժարվել պրոլետարիատի դիկտատուրայի գաղափարից, և ընդհանրապես, դասակարգային դիկտատուրան հատուկ է միայն ցածր կուլտուրային:

Սոցիալ-դեմոկրատիան Բերնշտեյնը դիտում էր որպես ավելի բարձր կուլտուրա պարունակող քաղաքական ուժ: Սոցիալիզմը նա համարում էր լիբերալիզմի օրինական ժառանգորդը: Խոսքը գնում է երկու հոսանքներին հատուկ այնպիսի սկզբունքային հարցերի մասին, ինչպիսիք են անհատի ազատությունը, նրա տնտեսական ինքնու-րույնությունը և պատասխանատվությունը հասարակության առջև:

Դեմոկրատական սոցիալիզմի հիմնադիրներից է նաև Կ. Կաուցկին: Նա հարեց Բերնշտեյնի այն գաղափարին, ըստ որի բանվոր դա-սակարգը դեռևս պատրաստ չէր իր ձեռքը վերցնել քաղաքական իշխանությունը: Մինչ այդ անհրաժեշտ է ձևավորել «դեմոկրատների ազգը»: Այդ առումով իրական դեմոկրատիայի զարգացման խնդիրը սոցիալ-դեմոկրատների կողմից դիտվեց որպես առաջնային: Կաուցկու խոսքերով դեմոկրատիայի խորացման պայմաններում պրոլետարիատը հնարավորություն է ստանում զարգացնել իր ունակությունները, որոնք անհրաժեշտ են լիովին ազատագրվելու համար: Նա գտնում էր, որ լիակատար դեմոկրատիան բուրժուազիայի գերիշխանության ձև չէ, քանի որ համընդհանուր ընտրական իրավունքը հաստատվեց ոչ թե կապիտալի, այլ բանվորների շնորհիվ: Այդպիսի դեմոկրատիան հա-մարվեց դեպի սոցիալիզմ տանող ճանապարհներից առավել նպա-տակահարմարը:

Զարգացնելով այդ մոտեցումը Բերնշտեյնը հանգեց այն գաղա-փարին, ըստ որի դեմոկրատիան պետք է դիտել ոչ միայն որպես միջոց, այլ նաև նպատակ: Դա ոչ միայն սոցիալիզմին հասնելու ճանապարհն է, այլ նաև սոցիալիզմի իրականացման ձևը:

Լիակատար քաղաքական հավասարության իրագործումը կարևոր երաշխիք է հանդիսանում հիմնական լիբերալ սկզբունքների կենսագործման համար:

Լիբերալ սկզբունքների նման սոցիալիստական մեկնաբանությամբ Բերնշտեյնն առանձնացրեց երեք հիմնական գաղափարներ՝ ազատու-թյուն, հավասարություն, համերաշխություն: Ընդ որում, նա առանձ-նահատուկ տեղ հատկացրեց բանվորների համերաշխությանը, առանց որի ազատությունն ու հավասարությունը աշխատավորության մեծա-մասնության համար կդառնան անհասանելի: Սոցիալ-դեմոկրատիայի առջև, ըստ Բերնշտեյնի, դրված է հետևյալ խնդիրը՝ ինչպես սոցիա-լիստական հասարակությունը դարձնել առավելագույն տնտեսական արդյունավետության և առավելագույն ազատ հասարակություն, միև-նույն ժամանակ չհրաժարվելով այդ հասարակության բոլոր անդամների հավասարության գաղափարից: Սոցիալ-դեմոկրատիայի ամբողջ հե-տագա պատմությունն, ըստ էության, նվիրված է այդ խնդրի հաղ-թահարման ճանապարհների հայթայթմանը:

Է. Բերնշտեյնին է պատկանում այն հայտնի արտահայտությունն, ըստ որի, սոցիալ-դեմոկրատիայի համար նպատակն, ինչպիսին էլ որ դա լինի, ոչինչ է, իսկ շարժումն՝ ամեն ինչ: Շարժման տակ նա հասկանում էր ինչպես ընդհանրապես սոցիալական առաջընթացն, այնպես էլ դրան օժանդակող քաղաքական և տնտեսական քարոզչությունը: Դրանով Բերնշտեյնը հիմնավորում էր հասարակական զարգացմանը նպաստող միջոցառումների կոնկրետության և դրանց հետզհետե իրականացման անհրաժեշտությունը: Պարզ է, որ նման մոտեցման դեպքում առաջ-նային համարվում է ոչ

թե արատրակտ հեռավոր նպատակը, այլ հասարակական առաջընթացը: Դրանից բխում է նաև այն, որ իրական կյանքում չի կարող լինել բացարձակ ազատություն, արդարություն և համերաշխություն: Այդ կապակցությամբ խոսքը պետք է գնա ոչ թե նման բացարձակ արժեքներին հասնելու, այլ իրական ազատության, արդարության և համերաշխության անընդհատ կատարելագործման մասին:

Ազատությունը սոցիալ-դեմոկրատիայի ներկայացուցիչները հասկանում են որպես յուրաքանչյուր մարդու ինքնորոշում: Բոլոր մարդկանց հավասար իրավունքներն անտեսող ազատությունն, ըստ իրենց, վե-րածվում է բռնության: Հավասարությունն իր հերթին իմաստավորում է ազատությունը, որը հավասար կերպով իրական է բոլորի համար: Ինչ վերաբերվում է արդարությանն, ապա այն պայմանավորում է ոչ միայն յուրաքանչյուր անհատի ինքնորոշման հավասար իրավունքները, այլ նաև ստիպում է նրան հաշվի նստել դիմացինի արժանապատվության և շահերի հետ: Այդ իրավունքների թերագնահատումը հանգեցնում է ամբողջատիրական տիպի հավասարեցման գաղափարին: Այլ կերպ ասած, ազատությունն ու հավասարությունը պայմանավորում են միմյանց: Այդ պայմանավորվածության արտահայտությունն է ար-դարությունը: Արդարությունը դա հավասար ազատությունն է բոլորի համար:

Սոցիալ-դեմոկրատների կարծիքով առանձին անհատի ազատու-թյունը կարող է իրագործվել միայն ազատ հասարակությունում, և հակառակը, անհնարին է ազատ հասարակության գոյությունն առանց առանձին անհատի ազատության: Ակնհայտ է, որ դեմոկրատական սոցիալիզմը պոզիտիվ տեսանկյունից է դիտում ազատություն հասկացությունը: Դա պայմանավորում է նաև վերաբերմունքը պետությանը: Ըստ սոցիալ-դեմոկրատների պետությունը կոչված է ակտիվ դեր խաղալու հասարակական կյանքում: Դրա դրսևորումներից են հա-մարվում ինչպես լայն սոցիալական ծրագրերի իրականացումը, այնպես էլ տնտեսության մի շարք ճյուղերի ազգայնացումը, բանվորների կենսամակարդակի բարձրացումը և այլն: Այդ կապակցությամբ սոցիալ-դեմոկրատները մեծ ավանդ ունեն «բարեկեցության պետու-թյան» կոնցեպցիայի ձևավորման գործում: Նրանք հնարավոր դարձրին նաև ժամանակակից ինդուստրիալ զարգացած աշխարհի հասարա-կական-քաղաքական համակարգում այդ կոնցեպցիայի դրույթների կիրառումը: Սոցիալ-դեմոկրատիայի հիմնադիրները կասկածի տակ առան նաև «Կոմունիստական Մանիֆեստում» արտահայտված Մարքսի այն գաղափարն, ըստ որի, պրոլետարիատը գրկված է հայրենիքից, վեր է կանգնած ազգային շահերից: Դրա վառ ապացույցն է սոցիալ-դեմոկրատական համարյա բոլոր կուսակցությունների վերաբերմունքը առաջին աշխարհամարտին: Այն իրավիճակում, երբ միջազգային բանվորական շարժման ռուսաստանյան թևի մի մասը (բոլշևիկները) հանդես եկավ իմպերիալիստների, այդ թվում նաև սեփական կառա-վարության պարտության օգտին, սոցիալ-դեմոկրատական այլ կուսակ-ցությունները ոչ միայն պաշտպանեցին իրենց երկրների կառավարու-թյուններին, այլ նաև ընդգրկվեցին դրանց կազմում: Այդ քայլով սոցիալ-դեմոկրատիան ցույց տվեց, որ նա դառնում է բուրժուական հասարակության լոյալ քաղաքական ուժերից մեկը, և այն, որ բանվոր դասակարգի և բուրժուազիայի մրցակցությունը միևնույն ժամանակ կարելի է համարել նաև ազգային պետության շրջանակներում ծա-վալվող համագործակցություն: Սոցիալ-դեմոկրատիայի զարգացման գործում իր ավանդն ունեն նաև ռուսական լեզալ մարքսիզմի ներկայացուցիչները: Մասնավոր-րապես Պ. Ստրուվեն կասկածի տակ առավ Մարքսի այն գաղափարն, ըստ որի, օրինաչափ էր համարվում սոցիալական շահագործման զարգացումը և բնակչության շարունակ թշվառացումը: Այս հանգա-մանքն, ըստ Մարքսի, պետք է հանգեցնեի հեղափոխության: Նման եզրակացության հիմքում Մարքսը դնում էր հեգելյան դիալեկտիկական մեթոդը: Ընդունելով Հեգելի դիալեկտիկական Ստրուվեն հանգում էր հակառակ գաղափարին: Նրա կարծիքով անընդմեջ փոփոխությունների մասին դրույթը հիմնավորում է ոչ թե հեղափոխականությունը, այլ տեսական հիմք է հանդիսանում էվոլյուցիոնիզմի համար: Այդ կա-պակցությամբ Ստրուվեն առաջ քաշեց «կապիտալիստական հասա-րակության սոցիալիզացման» մասին դրույթը<sup>2</sup>:

Հասարակությունը բարենորոգումների ճանապարհով զարգացնելու օգտին հանդես էին գալիս նաև ռուսաստանյան մենչևիկները, հատկապես Վ. Պլեխանովը: Առավել զգուշությամբ նրանք վերաբերվում էին բանվոր դասակարգի ակտիվությանը, գտնելով, որ նա դեռևս չի հասունացել իշխանավորի պարտականությունները ստանձնելու հա-մար: Մենչևիկները ողջունեցին 1917 թ. Փետրվարյան բուրժուադեմոկրատական հեղափոխությունը Ռուսաստանում: Նրանք գտնում էին, որ նոր, կապիտալիստական հասարակարգում Ռուսաստանի բանվոր դասակարգը պետք է նախ և առաջ քանակապես աճի, ամրապնդվի և ձեռք բերի անհրաժեշտ քաղաքական կուլտուրա: Այս ամենը պետք է պայմաններ ստեղծի խաղաղ ճանապարհով սոցիալիզմին անցնելու համար: Հեղափոխական շեղումներն այս ճանապարհից նրանք դիտում էին որպես բանվորների արմատական շահերի դավաճանություն: Այդ պատճառով նրանք չընդունեցին Հոկտեմբերյան հեղափոխությունը և խիստ քննադատության ենթարկեցին Վ. Լենինին: Ինչպես նշվել էր, բոլշևիկների կողմից III Կոմունիստական Ինտեր-նացիոնալի ստեղծումից հետո սոցիալ-դեմոկրատական այլ կուսակ-ցություններից շատերը միավորվեցին սոցիալիստական բանվորական Ինտերնացիոնալի շրջանակներում: Երկրորդ աշխարհամարտից հետո նա վերանվանվեց Սոցիալիստական Ինտերնացիոնալի (1951 թ.): Վերջինի հիմնական նպատակներն արտացոլվեցին Սոցիալիստների «Ֆրանկֆուրտյան հռչակագրում», որը հայտնի է «Դեմոկրատական սոցիալիզմ» անվան տակ: Այստեղ տեղ են գտել դեմոկրատական սոցիալիզմի հիմնական արժեքները: Բացի դրանից ծրագրում առաջ քաշվեց սոցիալ-դեմոկրատների կողմից սոցիալիստական նպատակի պլյուրալիստական հիմնավորման հնարավորության մասին դրույթը: Այս մոտեցումը վերջնականապես ձևավորվեց Ավստրիայի սոցիալիստական կուսակցության Վիեննայի (1958 թ.) և Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության Գոդեսբերգյան (1959 թ.) ծրագրերում: Դրա համաձայն սոցիալ-դեմոկրատները չէին ճանաչում որևիցե ընդ-հանուր գաղափարախոսության անհրաժեշտությունը: Նրանց կարծի-քով ձգտումը դեմոկրատական սոցիալիզմին յուրաքանչյուր կուսակ-ցության կողմից կարող է հիմնավորվել յուրովի՝ թեկուզ «Պլատոնի, Մարքսի, կամ անգամ Մուհամեդի գաղափարներով»:

Պատահական չէ, որ սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների քաղաքականության ընդհանուր ուղղությունը որոշվում է համեմատա-բար կարճաժամկետ ծրագրային փաստաթղթերով: Դրանք պարունակում են այն միջոցառումները, որոնք պետք է իրականացվեն հերթական ընտրություններում սոցիալ-դեմոկրատների հաղթանակից հետո: Այդ պատճառով նշված ծրագրերը բավականին կոնկրետ են: Դրանով է բացատրվում այն, որ սոցիալ-դեմոկրատների առաջնորդներից շատերը հեշտությամբ և պատրաստակամությամբ դիմում են տարբեր գի-ջումների և կոմպրոմիսների, ինչպես կուսակցությունների ներսում, այնպես էլ դրանցից դուրս: Ինչպես ցույց է տալիս եվրոպական կուսակցությունների փորձը նրանք կարող են համաձայնության գալ ինչպես լիբերալ, այնպես էլ պահպանողական կուսակցությունների հետ: Սոցիալ-դեմոկրատիայի աջ և ձախ թևերն այնքան տարբերվում են միմյանցից, որ դրանց կարելի է դասել անգամ տարբեր կուսակ-ցությունների մեջ:

Միևնույն ժամանակ նման պլյուրալիզմի դրսևորումն ընդլայնում է սոցիալ-դեմոկրատական և սոցիալիստական կուսակցությունների հա-մագործակցության հնարավորությունները: Այսպես, եթե մինչև 20-րդ դ. 70-ական թթ. Սոցիալիստները միավորում էր հիմնականում արևմտա-եվրոպական կուսակցությունները, ապա այժմ նա համախմբում է 120 երկրների 139 կուսակցություններ: Համաշխարհային սոցիալիզմի հա-մակարգի փլուզումից հետո որոշ կոմունիստական կուսակցություններ հայտարարեցին սոցիալ-դեմոկրատիայի դիրքերին անցնելու մասին: Սոցիալիստների ընդլայնմանը նպաստեցին նաև հետևյալ հանգամանքները: Առաջին, սոցիալ-դեմոկրատիան հրաժարվեց սառը պա-տերազմի և հակակոմունիզմի պաշտպանությունից: Երկրորդ, գաղութային համակարգի փլուզմանը զուգահեռ նա վերանայեց իր մոտեցումը էվոլյուցիային: Այժմ նա ընդունեց հեղափոխությունների որոշ տիպերի անհրաժեշտությունը (ինչպես ազգային-դեմոկրատական, այնպես էլ

դեմոկրատական): Մակայն անփոփոխ մնաց սոցիալ-դեմոկրատների վերաբերմունքը սոցիալիստական հեղափոխությունների նկատմամբ, հատկապես այն երկրներում, որտեղ իշխում են դեմոկրատական ազատությունները:

Սոցիալ-դեմոկրատական գաղափարախոսական հիմքը թելադրում է նաև իրեն համապատասխան կառուցվածքի գոյության անհրաժեշտությունը: Այսօր Սոցիալ-դեմոկրատները գուրկ է կառավարման կենտրոնական մարմնից: Կոնգրեսների որոշումները պարտադիր չեն կուսակցությունների համար: Բոլոր որոշումներն ընդունվում են կոնսենսուսի հիման վրա: Սոցիալ-դեմոկրատներից են եղել այնպիսի քաղաքական գործիչներ, ինչպիսիք են Վ. Բրանդտը, Ու. Պալմյոն, Բ. Կրայսկին, Ֆ. Միտերանը, Պ. Մոռուան և այլոք:

Սոցիալ-դեմոկրատական շարժման զարգացման գործում մեծ դեր խաղաց 1989 թ.

Ստոկհոլմում կայացած Սոցիալ-դեմոկրատների XVIII կոնգրեսը, որն ընդունեց «Սկզբունքների հռչակագիրը»:

Այս փաստաթուղթն, ըստ էության, Սոցիալ-դեմոկրատների նոր ծրագիրն է:

Դեմոկրատական սոցիալիզմն այստեղ բնորոշվում է որպես շարժում, ուղղված

ազատության, արդարության և համերաշխության հաստատմանը: Ըստ

սոցիալ-դեմոկրատների, լիբերալներն ու կոնսերվատորները առաջ են քաշում

ազա-տության արժեքը ի վնաս արդարության և համերաշխության, իսկ կոմունիստներն,

իրենց հերթին, արդարությունն ու համերաշխությունը չեն վնաս ազատության:

Սոցիալ-դեմոկրատիայի տնտեսական կոնցեպցիան ընդունում էր սեփականության

պլյուրալիզմը, ինչպես նաև ար-տադրության մեջ պլանավորման տարրերի

արմատավորման անհրաժեշտությունը:

Վերջին երկու տասնամյակներում սոցիալ-դեմոկրատական գաղափարախոսության մեջ

նկատվում են հետևյալ միտումները. շեշտադրվում է պետության պոզիտիվ դերի

վերագնահատման անհրաժեշտությունը, ընդգծվում է անհատական ազատության,

մասնավոր սեփականության և շուկայական տնտեսության գաղափարների

բացարձակությունը: Այս ամենը տեղի է ունենում լիբերալ դեմոկրատիայի

ինստիտուտների, արժեքների և նորմերի վճռական պաշտպանության հետ զուգահեռ:

Ավելին, 20-րդ դ. 70-80-ական թթ. ծավալված կոն-սերվատիվ ալիքի մթնոլորտում, որին

բնորոշ են ապակենտրոնացման, ապաստանականացման, պետության կարգավորիչ

գործունեության սահմանափակման և շուկայական հարաբերությունների խորացման

պահանջները, սոցիալ-դեմոկրատական շարժման մեջ ուժեղանում էին ազգայնացման,

հանրայնացման և սոցիալիզացիայի կարգախոսներից հրաժարվելու

տրամադրությունները: Այն սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները, որոնք եկել էին

իշխանության 80-90-ական թթ., ըստ էության իրականացրեցին նեոկոնսերվատորների

տնտեսական քաղաքականությունը:

Վերջին տարիներին սոցիալ-դեմոկրատիայի շարքերում տիրապետող է դառնում այն

գաղափարն, ըստ որի բարեկեցության պետությունն արդեն լուծել է իր առջև դրված

խնդիրները և այսօր պահանջվում է փոխարինել այն բարեկեցիկ հասարակության

գաղափարով: Ընդունվում է պետության ֆունկցիաների և արտոնությունների կրճատման

և դրանք տեղական իշխանություններին ու հասարակական ինստիտուտ-ներին շնորհելու

անհրաժեշտությունը: Պետությանը հատկացվում է ընդհանուր կարգավորման ֆունկցիան,

արտաքին և ներքին գլոբալ խնդիրների լուծման հնարավորությունը: Ինչ վերաբերում է

առողջա-պահությանը, կրթությանը, բնակտնտեսությանը, հանգստի կազմա-կերպմանը,

ապա այդ հարցերի լուծումը դրվում է տեղական մար-մինների վրա:

Ինչպես երևում է, ժամանակակից աշխարհում դժվար է ընդգծել տարբեր գաղափարական

հոսանքներին հարող կուսակցությունների միջև տարբերությունները: Շատ սկզբունքներ,

արժեքներ և նորմեր, որոնք ժամանակին կուսակցությունների միջև ծավալվող

բանավեճերի առարկա էին, այսօր համընդհանուր հավանության են արժանացել:

Վիճաբանության առարկա մնում է միայն դեմոկրատիայի սահմանների մասին հարցը:

Եթե կոնսերվատորներն ու լիբերալները դեմոկրատիան ընդունում են որպես քաղաքական

ֆենոմեն և գտնում են, որ մյուս ոլորտներում, մասնավորապես տնտեսությունում, այն

պետք է սահմանափակվի, ապա սոցիալ-դեմոկրատները համարում են, որ

դեմոկրատիան, ազատությունն ու հավասարությունը սուբստանցիոնալ բնույթ են կրում և չպետք է սահմանափակվեն որոշակի ոլորտներով:

## ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԳ

### ՖԱՇԻԶՄ

Եթե ինդուստրիալ հասարակության ձևավորման պրոբլեմները առաջին պլան էին մղել լիբերալիզմի և սոցիալիզմի միջև ծավալվող գաղափարական վիճաբանությունն, ապա համաշխարհային հասարակության ժամանակակից հոգևոր կյանքն առաջ է բերել հումանիզմի և դրան հակադիր գաղափարախոսությունների միջև ընթացող հակա-մարտություն: Վերջիններից է ֆաշիստական գաղափարախոսությունը: Ֆաշիզմի նկատմամբ մոտեցումները քաղաքագիտության մեջ տարբեր են: Մի շարք գիտնականներ ֆաշիզմը պատկերացնում են որպես քաղաքական գաղափարախոսությունների և ռեժիմների այն կոնկրետ տարատեսակները, որոնք ձևավորվել էին 20-րդ դարի 20-30-ական թթ. Իտալիայում և Գերմանիայում, Ֆրանկիստական Իսպանիայում, 30-40-ական թթ. Ճապոնիայում, Ա. Սալազարի օրոք Պորտուգալիայում, Պերոնի օրոք (1943-1955 թթ.) Արգենտինայում, 60-ական թթ. վերջում Հունաստանում, առանձին շրջաններում Ուգանդայում, Պա-րագվայում, Չիլիում և այլ երկրներում: Գիտնականների մեկ այլ խումբ ֆաշիզմը մեկնաբանում է որպես որոշակի բովանդակություն չունեցող գաղափարախոսություն, որը ձևավորվում է այնտեղ, որտեղ քաղաքա-կան ուժերի գործնական նկրտումներն առաջին պլան են մղում ժողովրդավարության սահմանափակման կամ ճնշման գաղափարները: Այս առումով հավասարության նշան է դրվում ֆաշիզմի և ամբողջատի-րական ռեժիմների միջև: Ֆաշիզմի գաղափարախոսությունն իր էությանը հակաժողովրդա-կան և հակամարքսիստական է, ռասիստական և շովինիստական: Պե-տությունն, ըստ ֆաշիզմի, ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգևոր առումներով պատասխանատու է անհատների ճակատագրի համար և անողորմաբար պետք է ճնշի ազգի միասնության դեմ ուղղված յուրա-քանչյուր ոտնձգություն: Ֆաշիզմը քարոզում է ավտորիտար կուսակ-ցության տիրապետությամբ արտահայտվող ուժեղ իշխանության ըս-տեղծումը: Վերջինը պետք է ապահովեր ամբողջ հասարակության և առանձին անհատների նկատմամբ վերահսկողությունը, առաջնորդի գոյության անվերապահորեն ընդունումը: 1. Ֆաշիզմի գաղափարական հիմքերը

Ֆաշիստական գաղափարախոսությունը ներկայանում է 2 մակար-դակներով՝ էլիտար և զանգվածային: Նման մոտեցումը ձևավորվեց հենց իրենց, ֆաշիստական

գաղափարախոսների կողմից, որոնց եզրահանգումների հիմքում կարելի է նկատել դեռևս 19-20-րդ դդ. առաջացած «Էլիտաների տեսությունը»:

Ընդունված է քաղաքական էլիտա համարել հասարակությունում փոքրամասնություն կազմող, հարաբերականորեն ինքնուրույն, ներ-քուստ տարբերակված՝ ոչ միատարր, արտոնյալ խումբը (խմբային միասնությունը), որն ի տարբերություն հասարակության մյուս խմբերի, ունի առաջնորդության համար անհրաժեշտ կրթական, հոգեբանական, սոցիալ-քաղաքական արժեքավորված բարձր հատկանիշներ և անմիջական մասնակցություն ունենալով պետական իշխանության կառավարման գործում առաջարկում, քննարկում, ընդունում, իրականացնում է որոշումներ և օրենքներ:

Քաղաքական էլիտայի ռազմավարական նշանակություն ունեցող գործունեության փորձը վկայում է նրա երկշերտության մասին (այն բաղկացած է

ինտելեկտուալ-ռազմավարական և վարչաքյուրոկրատա-կան կատարող խմբերից):

Էլիտա հասկացությունը սոցիոլոգիական հիմնավորում ստացավ Վ. Պարետոյի, Գ.

Մոսկայի և Ռ. Միխելսի աշխատություններում: Նրանց արտահայտած գաղափարների վրա ձևավորված «Էլիտաների տեսությունը» սերում էր վերածննդի դարաշրջանի հայտնի մտածող Ն. Մա-քիավելլո անունով կոչված մաքիավելլիզմի դպրոցից: Մաքիավելլիզմը ֆաշիստական գաղափարախոսության ձևավորման և կայացման հիմքերից մեկն է: Ն.

Մաքիավելլին (1469-1513 թթ.) Իտալիայի հայտնի քաղաքական մտածող էր, որի հիմնարար աշխատությունը «Միապետը» երկն էր:

Ըստ Մաքիավելլո, հասարակության զարգացման հիմքում ընկած է ոչ թե Աստծո կամքը, այլ՝ «նյութական շահը և ուժը»<sup>1</sup>: Մարդը տիեզերքի կենտրոնն է, չնայած դա շատ քչերին է հասու: Նրանց մեծամասնությունն իրենց բնույթով վախկոտ է, հիվանդ՝ մեծամտությամբ, միայն սեփական հոգսերն է հոգում: Մաքիավելլո կարծիքով, նման մարդիկ չեն կարող լինել լիդեր և կառավարել: Ինքնավստահություն, համար-ձակություն, խարդավանք՝ ահա այն արժեքները, որոնց միջոցով լիդերը կարող է դեկավարել պետությունը:

Մաքիավելլին հանդես եկավ երկպառակտությունից ազատ, ուժեղ, ազգային պետության օգտին: Այդ նպատակի իրականացման համար նա առաջադրեց հետևյալ կարգախոսը.

«Նպատակը արդարացնում է միջոցները»<sup>2</sup>: Միակ նպատակը, որն արդարացնում է բարոյականությունից ռոմանտիզմը՝ պետության ստեղծումն ու պահպանումն է: Ըստ նրա, ազգային պետությունը բացարձակ արժեք է, ուստի այն պետք է կառավարել ընտիր ձևով: Մաքիավելլո՝ էլիտային վերաբերող հայացքները հանրագումարելով՝ իտալացի քաղաքագետ և սոցիոլոգ Գ. Մոսկայի «Քաղաքագիտության հիմունքները» աշխատության մեջ հիմնավորելով քաղաքական էլիտայի ձևավորման և գոյության հիմնահարցը, որոշիչն այդ խնդրում համարեց «քաղաքական դասակարգի» կազմակերպչական, ինտելեկտուալ, բարոյական արժեքների գիտակցմամբ պայմանավորված գերազանցությունը, որի ռացիոնալ օգտագործմամբ էլ հենց նա կարող է կառավարել: Ըստ Գ. Մոսկայի, կառավարող «քաղաքական դասակարգի» կառուց-վածքը պայմանավորված է հասարակության զարգացման մակարդակով և ենթակա է հարատև փոփոխության:

Մոսկայի կարծիքով, քաղաքական դասակարգին պատկանելու համար անձը պետք է ունենա երեք հատկություն՝ ռազմական արիություն, հարստություն և քարոզ-չության ունակություն: Տիրապետելով այս հատկություններին անձը ռազմական, ֆինանսական և ինտելեկտուալ (հոգևոր) զարգացման հնարավորություն է ստանում:

«Էլիտաների տեսությունը» հանգամանալից ուսումնասիրել է Վ. Պարետոն իր

«Տրակտատ ընդհանուր սոցիոլոգիայի մասին» աշխատությունում:

Ըստ հեղինակի, աշխարհը կառավարել և կառավարում է հոգե-բանական և սոցիալական բարձր հատկանիշներով օժտված փոքրամասնությունը՝ էլիտան: Պարետոն էլիտան բաժանել է կառավարողների (ուղղակի և անուղղակի) և ընդդիմադիրների: Վերջիններն, ունենալով կառավարման համար անհրաժեշտ բոլոր հատկանիշները, տարաբնույթ պատճառներով չեն կարողացել մուտք ապահովել դեպի կառավարման համակարգ: Ըստ Պարետոյի, հասարակությունը զարգանում է էլիտա-ների այս երկու խմբերի միջև ծավալված մրցակցության շնորհիվ:



Ֆաշիստները այս տեսությունը հարմարեցրին իրենց հայացքներին: Առաջին հերթին դա վերաբերվում է քարոզչական համակարգի ստեղծմանը: Ըստ ֆաշիզմի գաղափարախոս Գ. Ռաուշինգի. «Ֆաշիստական գաղափարախոսությունը գոյություն ունի միայն զանգ-վածի համար, այն զանգվածին իշխելու միջոց էր: Այդ գաղափարա-խոսությունը ստեղծվում էր էլիտայի կողմից, որը կանգնած էր գաղափարախոսությունից բարձր»: Նա գաղափարախոսությունը օգտագործում էր նպատակահարմար ձևով՝ իր ձգտումները իրակա-նացնելու համար: Ֆաշիստական գաղափարախոսները գտնում էին, որ զանգվածային գաղափարախոսությունը բնորոշվում է տրամաբանա-կան եզրահանգումների բացակայությամբ կամ դրանց անհետևողա-կանությամբ: Զանգվածային գաղափարախոսության մեջ ռացիոնալ-լիզմի առկայությունը բացասական ազդեցություն կունենա հասարակական գիտակցության ձևավորման վրա:

Նրանք գտնում էին, որ ազգը կամ զանգվածը պետք է պահել «առողջ անգիտակցության» մեջ, օգտվելով կրոնական առասպելաբանական սկզբունքներից: Նա, ով կփորձի ազգը հանել այդ վիճակից, դիտվում էր որպես հանցագործ:

Ա. Հիտլերը նշում էր. «Հասարակության հետ հարկավոր է խոսել զգացմունքի և հավատալիքների լեզվով, այլ ոչ թե տրամաբանական դրույթներով»: Ճանաչողությունն, ըստ նրա, իշխանության համար հաստատուն հիմք չէ: Հաստատուն զգացմունք էր ատելությունը, իսկ հասարակությանն անհրաժեշտ է մի անհատ, որը կուղղորդի «ատելու-թյան» զարգացումը:

Ֆաշիստական գաղափարախոսության առանցքային դրույթներից է «ռասայական» կամ «ռասայական խտրականության» տեսությունը: Այն ձևավորվել է դեռևս 1855 թ.:

Ֆրանսիացի սոցիոլոգ Արթուր դե Գոբինոն իր «Մարդկային ռասաների անհավասարության մասին» աշխատության մեջ նշեց, որ արիական ռասայի կորիզը գերմանա-ցիներն են, որոնք ելնելով աշխարհագրական դիրքից՝ նվազագույն չափով են խառնված այլ ռասաների ներկայացուցիչներին: Գոբինոն առաջին անգամ առաջ քաշեց «մշակույթ ստեղծող», «մշակույթ կրող» և «մշակույթ ոչնչացնող» ազգերի մասին դրույթը: Սակայն, Գոբինոն իրեն համարելով նվիրված կաթոլիկ, չէր պահանջում ոչնչացնել «մշակույթ քայքայող» ռասաներին: Դրանք միաձուլելու, նոր ռասա «ընտրա-սերմելու» կոչ էին անում 19-րդ դ. երկրորդ կեսի ռասայական դպրոցի ներկայացուցիչներ Ժ. Վաշե դե լա Պուժը, Է. Դրյումոն և նրանց անգլիացի հաջորդներ Կիդը, Մամները և այլոք:

Գերմանական ռասիզմի և ռացիոնալիզմի վերաբերյալ հիմնարար աշխատությունների հեղինակ էր ազգությամբ անգլիացի Ս. Չեմբեռլենը, որն ամուսնանալով Վազների աղջկա հետ, հնարավորություն էր ստացել մուտք գործել գերմանական ինտելիգենցիայի միջավայր և ազդել հասարակության գաղափարական կերտման վրա: 1899 թ. լույս տեսավ Չեմբեռլենի «19-րդ դարի հիմքերը» աշխատությունը, որտեղ հեղինակը զարգացնում էր Ա. դե Գոբինոյի գաղափարները: Չեմբեռլենը դեմ էր քրիստոնեությունը, մասնավորապես՝ կաթոլիկությունը պետական կրոն հռչակելուն: Նա կաթոլիկությանը հակադրեց «գերմանական քրիստոնյայի» գաղափարը, որն «ազատված է հրեական ոգուց»: Այս դրույթները հիմք դարձան ֆաշիստական կրոնական նոր ուղղության ստեղծման համար, որը կոչվեց գերմանական քրիստոնեություն:

Չեմբեռլենի հայացքները որոշիչ դեր խաղացին ռացիոնալ-սոցիալիզմի տեսաբաններից մեկի՝ Ա. Ռոզեմբերգի աշխատությունների և գաղափարական ուղղվածության կերտման վրա (հիմնարար աշխատությունը կոչվում էր «20-րդ դարի առասպելը»):

Գերմանիայում Չեմբեռլենը մենակ չէր իր ռասայական տեսությամբ: Շուտով հրատարակվեցին մի շարք աշխատություններ, որոնցից ուշագրավ էր Լ. Վոլտմանի «Քաղաքական անտրոպոլոգիա» աշխատությունը, որը բնութագրվում էր սուր արտահայտված անտի-սեմիտիզմով: Սակայն, այն դասական տեսք ստացավ գերմանական «անտիսեմիտիզմի» կնքահայր Ե. Դյուրինգի մոտ:

Ռասայական տեսության հիմքում ընկած էր այն սկզբունքը, որ բնության մեջ գործում է «երկաթե օրենք»-ը, համաձայն որի, յուրա-քանչյուր կենդանու զուգավորումը պետք է տեղի ունենա միայն իր տեսակի հետ: Բացառիկ դեպքում միայն, ինչպես կյանքը

ազատա-գրկման մեջ, կարող է բերել տեսակների խառնման: Այս դեպքում բնությունը սկսում է «վրեժխնդիր լինել» և մաքրվել այդ խառնածին-ներից:

Զարգացման տարբեր մակարդակներում գտնվող կենդանի օրգա-նիզմների մետիսացման արդյունքում խառնածինն այդ մակարդակների միջև գրավում է միջանկյալ դիրք: «Բնությունը ձգտում է» ստեղծել կյանքի բարձրագույն ձևեր և, քանի որ մետիսացումը տեսակների խառնման արդյունք է, որի դեպքում տեսակի որակը իջնում է, ապա դրանով նա հակադրվում է բնության որակական զարգացմանը: Գոյության համար մղվող պայքարում իրականացվում է «բնական ընտրության» սկզբունքը, որը ֆաշիստական գաղափարախոսության տեսական հիմք հանդիսացող դրոյթներից մեկի՝ սոցիալ-դարվինիզմի հիմնադրույթներից էր: Սոցիալ-դարվինիզմը սոցիալական երևույթները դիտում է Դարվինի էկոլոգիայի մասին տեսության, մասնավորապես դրա «բնական ընտրության» և «գոյության համար պայքարի» կատե-գորիաների տեսանկյունից: Կենդանական աշխարհում ծավալվող գոյության պայքարը սոցիալ-դարվինիզմը տեղափոխում է մարդկային հասարակություն, որտեղ ապրելու և ստեղծագործելու իրավունք պետք է ստանան մարդկանց առավել կենսունակ տեսակները: Ֆաշիզմն իր գաղափարախոսությունը կառուցում էր ոմն առաս-պելական ժողովրդի՝ արիների սոցիալական և քաղաքական իրա-վունքների առաջնայնության գաղափարի վրա: Ելնելով այդ ժողովրդի արտոնյալ դիրքերից, հայտարարվեց «մշակույթ ստեղծող ռասաների» կենսունակության ապահովման մասին դրույթը (ըստ ֆաշիզմի, արի-ներին էին պատկանում գերմանացիները, անգլիացիները, Հյուսիսային Եվրոպայի որոշ ժողովուրդներ): Միևնույն ժամանակ ֆաշիստական գաղափարախոսները պահանջում էին «մշակույթին միայն օժանդակող» էթնոսների (սլավոններ, Արևելքի և Լատինական Ամերիկայի որոշ ժողովուրդներ, ճապոնացիներ և չինացիներ) կենսական տարածության սահմանափակումը: Ֆաշիզմը անողորմաբար էր տրամադրված «մշակույթը քայքայող» ժողովուրդների նկատմամբ (հրեաներ, նեգրեր, գնչուներ): Նա կոչ էր անում ընդհանրապես ոչնչացնել նշված ժողովուրդներին: Արտաքին քաղաքականության ասպարեզում ռասայական տիրապետության տեսությունը հիմնավորում էր ֆաշիզմի գավթոդական քաղաքականությունն ու մյուս ժողովուրդների ճորտացումը:

Մյուս կողմից, «Ռասայականության տեսության» մեջ նշվում էր, որ «մարդկանց ցածր ռասայի» գոյությունը հիմնարար պայման է բարձրագույն մշակույթի ստեղծման համար: Մարդկության առաջին մշակույթները ձևավորվել են «ցածր ռասաների» օգտագործման և շահագործման արդյունքում: Օրինակ՝ հնում ծանր և տքնաջան աշխատանքի համար օգտագործում էին պատերազմում գերի ընկածներին: Համանման կերպով, արիացին, որպես հաղթող, իրավունք ունի իր կամքին ենթարկել պարտված կամ «ցածր ռասայի» ազգերին և դե-կավարել նրանց «արիական ցանկությունների» համապատասխան:

«Ռասայականության տեսության» մեջ բացի էթնիկ ծագումից մեծ նշանակություն էր տրվում անձի ֆիզիկական հատկանիշներին՝ մազերի, աչքերի, մաշկի գույն, քթի ձև և այլն: Օրինակ՝ գլխի կլոր ձևը բնորոշ էր «ցածր» ռասայի ներկայացուցիչներին, իսկ ձգվածը՝ «բարձր» կամ «ընտրյալ» ռասայի ներկայացուցիչներին:

«Արիական ռասան» օժտված էր ֆիզիկական բոլոր դրական տվյալներով, հետևաբար, այն ազգերը, որոնք չունեին դրանք՝ դիտվում էին որպես «ոչ լիարժեք ազգ»:

Ֆաշիստական գաղափարախոսությունն արդարացնում է արիացի-ների տարածքային ոտնձգությունները այլ ժողովուրդների նկատմամբ, խրախուսվում է իմպերիալիզմը որպես գերբնակեցված երկրի համար «կենսական տարածության» նվաճման գործընթաց: Կայսերատիրական պլանների իրագործման խնդիրը դրվում է ուժեղ բանակի վրա, որը պետք է բնդունակ լինի ջնջելու հակառակորդին և գաղութացնելու զավթված հողերը (Մուսոլինիի Միջերկրածովյան կայսրությունը, Հիտլերի հազարամյա «մեծ ռայխը»): Գոյության համար մղվող պայքարում ֆաշիստական գաղափարա-խոսները նույնքան անողորմաբար են մոտենում նաև սեփական ժողովրդի՝ արիացիների թուլությունների դրսևորման նկատմամբ: Այսպես, օրինակ, 1942 թ. հունվարին, Մոսկվայի մոտ պարտություն կրելուց հետո, գերմանական ֆաշիստների առաջնորդ Ա. Հիտլերը

բարձրաձայն նշեց, որ եթե «գերմանական ժողովուրդը պատրաստ չէ մարտնչել սեփական գոյության համար, ապա նա պետք է վերանա»4:

Ֆաշիստական գաղափարախոսության ակունքներին է պատկանում նաև «կյանքի փիլիսոփայությունը», որը զարգացրել էին այնպիսի վառ փիլիսոփաներ, որպիսիք էին Մերեն Կյերկեգորը, Արթուր Շոպեն-հաուերը և Ֆրիդրիխ Նիցշեն:

Նիցշեի փիլիսոփայությունը հիմնավորում էր այն գաղափարն, ըստ որի կյանքի հիմքը կամքն է: Վերջինն ուղղված է իշխանության նվաճմանը: Դա է, ըստ Նիցշեի, կյանքի բովանդակությունը5:

Իշխանատենչական կամքին Նիցշեն տալիս է մի նշանակություն, որը դուրս է գալիս կյանքի սահմաններից: Այն դիտվում է որպես տիեզերական նախասկիզբ, համաշխարհային գործընթացի հիմքում ընկած շարժիչ ուժ: Ճանաչողությունը, որը մշակվել է էվոլյուցիայի ընթացքում, նախատեսված է ոչ թե բուն ճանաչողության, այլ կեն-սաբանորեն դիմանալու և իշխանության կամքն ամրապնդելու նպատակով իրերին տիրելու համար: Նիցշեի, հասարակության շարժիչ ուժը պայքարն է, պայքար՝ իշխանության, պայքար՝ պայքարի համար:

Խոսելով հասարակության մեջ սոցիալական հավասարության մասին, Նիցշեն այդ գաղափարին հակադրում է «բնական, ճակատագրա-կան» անհավասարության մասին դրույթը: Ըստ Նիցշեի, շահագործումը կյանքի գոյության անհրաժեշտ պայման է:

Ֆաշիստական գաղափարախոսության հիմնադրույթներից էր Ֆ. Նիցշեի «գերմարդու» գաղափարը: Նա գտնում էր, որ միայն հզոր անհատականություն-գերմարդը՝ որպես մարդկության բարձրագույն ներկայացուցիչ կարող է կերտել պատմությունը:

Մեծ այրերը, հանճարները պայթուցիկ նյութ են, որոնց մեջ ահռելի ուժ է կուտակվել: Եթե լարումը զանգվածի մեջ չափազանց մեծ է, ապա բավական է ամենապատահական գրգիռը հանճարին՝ կյանքի կոչելու մեծ ճակատագիրը: Մեծ մարդիկ անհրաժեշտ են և պահը, որում նրանք հայտնվում են՝ պատահական է: Նրանք միշտ ժամանակի տերն են, քանի որ ավելի ուժեղ են, ավելի՝ հին: Հանճարի և նրա ժամանակի միջև գոյություն ունի նույն հարաբերությունը, ինչ ուժեղի և թույլի, ծերի և երիտասարդի: Ընդ որում, ժամանակը միշտ ավելի թույլ է, քան հանճարը6: Ֆաշիստական գաղափարախոսության մեջ նիցշեյան «գերմարդը» փյուրերն է:

Շատ կարևոր է նաև ֆյուրերի անձի նկատմամբ հասարակական իդենտիֆիկացիայի (նույնացում) աստիճանը: Որքան թույլ է հասարակական անհատը, այնքան ավելի մեծ է նրա իդենտիֆիկացիայի աստիճանը կապված ֆյուրերի անձի հետ և այնքան ավելի մեծ՝ նրա պաշտպանության երեխայական պահանջը:

Մանր բուրժուազիայից դուրս եկած անհատն իրեն տեսնում է ֆյուրերի անձի մեջ: Իդենտիֆիկացիայի արդյունքում անհատն իրեն զգում է ազգային արժեքների ժառանգորդ և ազգի պաշտպան: Այս իդենտիֆիկացիան ներկայանում է հետևյալ կերպ. «ես եմ պետությունը, ես եմ ազգը, ես եմ առաջնորդը»: Այն ենթադրում է գաղափարախոսության տրանսֆորմացիա նյութական ուժի, որն էլ ներկայանում էր պետական քաղաքականության տեսքով:

Ֆաշիստական վարչակարգի հայտնի իրավաբան Գ. Ֆրակը նշում էր. «Մեր սահմանադրությունը ֆյուրերի կամքն է»7:

Ֆաշիստական գաղափարախոսության մեջ ֆյուրերը ներկայանում էր որպես անսեռ իդեալական գերմարդ, որի ցանկացած արտահայտություն օրենք է ազգի և ողջ աշխարհի համար: Ֆաշիստական Գեր-մանիայում սերը ֆյուրերի անձի նկատմամբ դիտվում էր որպես իրավական կատեգորիա: Այսինքն՝ նա, ով չի սիրում ֆյուրերին, օրենք է խախտում և պետք է պատժվի օրենքի ողջ խստությամբ:

Այսպիսով, ֆյուրերը ֆաշիստական գաղափարախոսության մեջ ներկայացվում էր որպես արարիչ:

Փիլիսոփայության մեջ խաղացած դերով Ֆ. Նիցշեն արժանանում է տարբեր, անգամ իրարամերժ, գնահատականների: Մի կողմից՝ որպես ֆաշիզմի կնքահայր, մյուս կողմից՝ որպես հումանիստ և ապագայի գուշակ: Բանն այն է, որ երրորդ ռալիսի գաղափարախոսները չընդունելով փիլիսոփայի սթափ և օբյեկտիվ շատ գաղափարներ,

միակողմանի էին դիտում նրա դրույթները: Ֆաշիզմի կողմից բարձր գնահատականի էր արժանացել Նիցշեի «իշխանության ձգտումը» հասկացությունը, որը համարվում էր ամբողջ աշխարհի զարգացման շարժիչ ուժ: Յուրովի էր ներկայացվում մեծ փիլիսոփայի «գերմարդու» կոնցեպցիան, որը չէր ենթարկվում բարիքի և չարիքի մասին օրենք-ներին: Վերջապես, Նիցշեի կողմից քրիստոնեության ակտիվ և ռազ-մատենչ մերժումը (սիրո և գթության գաղափարներով) նույնպես ընկավ ֆաշիզմի հիմքում: Պատահական չէ, որ ֆաշիստական պետական գաղափարախոսության կողմից Նիցշեն ընդունվում էր որպես ֆաշիզմի մարգարե:

Սակայն գերմանացի ոչ բոլոր տեսաբաններն էին, որ Նիցշեի անունը կապում էին երրորդ ռայխի հանցագործ ռեժիմի հետ: Ավելին, հայտնի փիլիսոփա-էկզիստենցիալիստներ Մարտին Հայդեգերը և Կարլ Յաս-պերսը որոշակի քայլերի դիմեցին այդ փիլիսոփայի անունը քննա-դատությունից զերծ պահելու համար: Նրանք մեղադրեցին Նիցշեի քննադատներին կողմնապահության մեջ: Այսպես, Հիտլերի համար շատ հրապուրիչ թվացող «գերմարդու» գաղափարը նրանք բացատրում էին որպես Նիցշեի փիլիսոփայական արձագանքն իր ժամանակակիցների հոգեբանական կերտվածքի վերաբերյալ: Բանն այն էր, որ վերջինները իրենց խղճուկ գոյությունը պաշտպանելու համար տարված լինելով նյութական կարիքներով՝ աչքի էին ընկնում հոգևոր աղքատությամբ, հետամնացությամբ և քաղքենիությամբ: Հայդեգերի ու Յասպերսի կար-ծիքով, ստեղծված պայմաններում միայն «Նոր մարդը» կարող էր դառ-նալ այդ ժամանակի ալլընտրանք8:

Եթե միայն լուրջ վերապահումներով կարելի է դիտել ֆաշիստական գաղափարների վրա «կյանքի փիլիսոփայության» ազդեցությունը, ապա ոչ մի կասկած չի հարուցում այդ հոսանքի երկրորդ սերնդի ներկայացուցիչների դերը ֆաշիզմի ձևավորման գործում: Դրանք էին Մելլեր վան դեր Բրուկը, Լյուդվիգ Քլագեսը, Էռնեստ Յունգերը և ուրիշներ: Առաջինը կանգնած էր «համապարփակ գորահավաքի և հա-մապարփակ պատերազմի» գաղափարի ակունքներում: Երկրորդը՝ պատմության մեջ մտավ որպես ռազմատենչ հակամտավորական, ինտելեկտի յուրաքանչյուր դրսևորման թշնամի: Երրորդն իր գաղա-փարներն ուղղեց պատերազմի և անհատ զինվորի փառաբանմանը: Ֆաշիզմի գաղափարական հիմքերը չեն սահմանափակվում միայն նշված տեսություններով: Դրանք կազմում են այն ընդհանուր հիմքը, որի վրա զարգացան ֆաշիզմի տարբեր տեսակները: Օրինակ իտալական ֆաշիզմի առաջացմանը մեծապես նպաստեց նախկին Հռոմեական կայսրության վերականգնման գաղափարը: Ինչ վերաբերում է գեր-մանական ֆաշիզմին, ապա դրա վրա մեծ ազդեցություն ունեցան պանգերմանիստական գաղափարները, պրուսական միլիտարիզմը: Ֆաշիզմի «կենսական պատմության» մասին գաղափարը ձևավորվեց գերմանացի գեոպոլիտիկների կողմից: Արդեն 1891 թ. ռուսյան սև մետալուրգիայի մագնատները Ալ. Գու-տենբերգի և գաղութարարչական քաղաքականության կողմնակից Կ. Պարերսի գլխավորությամբ ստեղծեցին մի կազմակերպություն, որը նպատակ էր հետապնդում Գերմանիայի տիրույթների ընդլայնմանը ողջ աշխարհում, հատկապես՝ Եվրոպայում: Այս կազմակերպությունը կոչ-վեց «Պանգերմանական միություն», որը սկզբում իր մեջ ներառում էր ուսանողների, լրագրողների, ուսուցիչների և այլոց, ովքեր կօգնեին քարոզել և տարածել նացիստական և ռասիստական գաղափարներ:

Պանգերմանիզմի հիմքում ընկած էր երեք հիմնական սկզբունք.

ա) մայրցամաքային Եվրոպայում Գերմանիայի հեգեմոնիայի հաստատում,

բ) գերմանախոս ազգերի միավորում,

գ) նոր գաղութների նվաճում և համաշխարհային գերիշխանության հաստատում:

Գերմանիայում ֆաշիստական գաղափարախոսության առաջաց-մանը նպաստեց նաև պրուսական միլիտարիզմը:

Պանգերմանիստները և միլիտարիստները նշում էին, որ հասարակ-կության ինքնագիտակցության զարգացման վրա մեծ ազդեցություն է ունեցել հատկապես Օտտո ֆոն Բիսմարկի կողմից Գերմանիայի միավորումը և գերմանական կայսրության ստեղծումը: Նրանք ող-ջունում էին Բիսմարկի արտաքին և ներքին քաղաքականությունը,

միաժամանակ մեղադրելով «երկաթե կանցլերին»՝ լիբերալիզմի և Գերմանիայում «առևտրական ոգի» տարածելու մեջ:

Պանգերմանիստները և միլիտարիստներն այդ ոգու ակունքը հա-մարում էին Անգլիան, իսկ հակապատկերը՝ Պրուսիան: Անգլիան դիտարկվում էր որպես լիբերալիզմի քառս, եասսիրության և անհա-տապաշտության խորհրդանիշ, իսկ Պրուսիան՝ կարգ ու կանոնի հայ-րենիք, քաղաքական գիտակցության զարգացման և ազգային ոգու բարձրացման երաշխիք: Պրուսիայի դրական որակական հատկանիշ-ները բնորոշվում են միլիտարիստական ավանդույթներով: Ինչպես նշում են գերմանական ֆաշիզմը ուսումնասիրողները, այն «մաքուր վիճա-կում», առանց միլիտարիզմի գոյություն չունի: Գերմանիան, որպես նացիոնալիստական պետություն, ձևավորվել է պրուսական թագավորության հիմքի վրա: Պրուսական ազնվականները, որոնք դաստիարակվել էին արևելյան գաղութատիրության ավանդույթ-ներով, Տևտոնական և Լիվոնական միաբանությունների ոգով, տար-բերվում էին «զինվորական ոգու» հավատքի և պաշտամունքի նկատ-մամբ հակվածությամբ:

Համաձայն սեփական բնորոշման, պրուսական միլիտարիզմը պայ-քարում էր, որպեսզի պրուսական պետությունը «արևի տակ տեղ ունենա» և դրանով արդարացնում յուր էքսպանսիոնիստական նկր-տումները:

Ֆաշիստական գաղափարախոսության կայացման գործում մեծ ներդրում ունեցան գերմանական գեոպոլիտիկները՝ Ֆ. Ռատցելի գլխավորությամբ: Նրա ուսումնասիրությունների հիմքում ընկած էր «պետության տարածքային չափերի մեծացման» դրույթը: Ռատցելն իր տեսությունը ապացուցում էր՝ նշելով, որ բնակչությունն անընդհատ աճում է, իսկ նրա գոյության համար անհրաժեշտ են նոր տարածքներ, հետևաբար բնակչության թվի աճն ուղղակիորեն ազդում է պետական սահմանների չափի վրա: Ռատցելի հայացքներին բնորոշ էր կոնսեր-վատիզմը և նացիոնալիզմը: Ռատցելը նշում էր, որ յուրաքանչյուր երկրի տարածք պետք է համապատասխանի իր մշակութային զարգացման մակարդակին: Մշակութային զարգացման ցածր մակարդակ ունեցող երկրները պետք է կազմեն փոքր տարածքային պետություններ, իսկ մշակութային զարգացման բարձր մակարդակ ունեցող երկրները՝ մեծ տարածքային պետություններ: Քանի որ երկրագնդի վրա հողային տարածքները սահմանափակ են, հետևաբար, ծագում է մեծ պետու-թյուններ կազմելու գաղափարը՝ ի հաշիվ փոքր պետությունների: Փաստորեն, գերմանական աշխարհաքաղաքական սկզբունքները պանգերմանիզմի դրույթների շարունակությունն էին, որոնք տարբեր-վում էին զուտ տեսական համակարգվածությամբ:

Ֆաշիստական գաղափարախոսության մեջ ներառվեցին նաև աշխարհաքաղաքական հետևյալ տեսությունները.

1. «Պետության կենսաբանական տեսություն»: Ըստ այս տեսության պետության զարգացումը տեղի է ունենում նույն սկզբունքների հիման վրա, որոնց միջոցով զարգանում է կենդանի օրգանիզմը:

Ըստ նշված տեսության, կան երիտասարդ, ուժեղ, եռանդուն պե-տություններ, որոնց քաղաքականությունը կախված է նրանց զար-գացման մակարդակից: Երիտասարդ պետություններին բնորոշ են սահմանների ընդլայնումը, հին պետություններին՝ տարածքների կո-րուստը: Քանի որ Գերմանիան ապրիորի (արտափորձական) համար-վում էր երիտասարդ պետություն, ապա նրա ցանկացած էքսպանսիա կարելի է արդարացնել որպես զարգացող պետության հիմնախնդիր:

2. «Բնական սահմանների տեսություն»:

Տեսությունը ձևավորվել է 19-րդ դարում և ենթադրում է, որ պե-տության սահմանները պետք է լինեն բնական՝ ծով, գետ, լեռ և այլն: Եթե «ռասայականության տեսությունը» կողմնակից է այն դրույթին, որ հարկավոր է միավորել բոլոր գերմանախոս ազգերը՝ նորվեգացիներ, դանիացիներ, հոլանդացիներ և այլոք, ապա «բնական սահմանների» տեսությունը ենթադրում է գերմանական սահմանների ընդլայնումը արևմուտքում՝ մինչև Ատլանտյան օվկիանոս, հարավում՝ Միջերկրա-կան ծով, հյուսիսում՝ Հյուսիսային ծով,

արևելքում՝ մինչև Բալթիկա (հետագայում առաջ եկավ տարածքներ ընդլայնելու խնդիրը ի հաշիվ Խորհրդային Միության):

### 3. «Կենսական ոլորտի տեսություն»:

Տեսության հիմքում ընկած է գեոպոլիտիկների այն հավաստիա-ցումը, որ բնակչության խտության և կենսական չափանիշների միջև կա փոխադարձ կապ: Ֆաշիստական գաղափարախոսության հիմնա-դրույթներից էր պայքարը՝ կենսական ոլորտի համար, որը միաժամանակ մարդկային քաղաքակրթության պատմության նպատակն ու պատճառն էր: Այս դրույթը հիմնավորվում է վիճակագրական հաշ-վարկներով, համաձայն որոնց, կան երկրներ, որոնք ունենալով ռե-սուրսներ՝ չեն կարողանում դրանք օգտագործել: Պետության բնակ-չության թվի աճը ստիպում է, որ նա ձեռնամուխ լինի տարածքային ընդլայնմանը:

Գերմանիան, Անգլիայի կամ Հոլանդիայի համեմատ, ավելի նոսր էր բնակեցված, իսկ արևելյան երկրների նկատմամբ՝ ավելի խիտ: Հե-տևաբար, դա գաղափարական համապատասխան հող էր ստեղծում էքսպանսիայի ծավալումը սկսել հենց արևելքի երկրներից՝ Լեհաստան, Չեխոսլովակիա և այլն:

Այսպիսով, կարելի է ընդհանրացնել, որ ֆաշիզմի դրսևորումները տարբեր երկրներում ընդհանուրի հետ մեկտեղ ունեցել են նաև պատ-մականորեն ձևավորված առանձնահատկություններ:

## 2. Ֆաշիզմի առաջացումը. Նեոֆաշիզմ

Ֆրանսիական քաղաքագետ Շանտալ Միյոն-Գելսոլի կարծիքով ֆաշիզմը ծագեց Առաջին աշխարհամարտից հետո Եվրոպայի բոլոր երկրներում և դրանից դուրս գոյացած «մառախուղի» միջից: Ֆաշիս-տական գաղափարախոսությունը յուրովի արձագանք էր հասարակու-թյան մեջ ծագած ճգնաժամի նկատմամբ: Տնտեսական և սոցիալական ճգնաժամը ծագեց գյուղերից քաղաքներ մարդկանց տեղափոխման պատճառով: Քաղաքական ճգնաժամն առաջացավ նոր դեմոկրա-տական ռեժիմների դեռևս թուլության, դրանց միջավայրում չարաշահ-հումների և կաշառակերության տարածման հետևանքով: Հոգևոր ճգնաժամը կապված էր արմատական գաղափարների տարածման, ինչպես նաև կրոնաբարոյական արժեքների ողողման հետ:

Մյուս կողմից վճռորոշ նշանակություն ունեցավ կոմունիստական շարժումը, որն արդեն հաղթանակել էր Ռուսաստանում և ստեղծվել էր ԽՍՀՄ-ը: Վերջին հանգամանքը ստիպեց մտահոգվել կապիտալիս-տական առավել հետադիմական ուժերին: Պատահական չէ, որ ֆա-շիզմի տարածմանը նպաստում էին խոշոր մոնոպոլիստական կապի-տալի ներկայացուցիչները: Նրանք ձգտում էին օգտագործել այդ գաղափարախոսությունը աշխատավորական զանգվածների հեղափո-խական ելույթները ճնշելու, գոյություն ունեցող հասարակարգը պահ-պանելու և միջազգային ասպարեզում զավթողական ձգտումները բավարարելու նպատակով:

Իր սոցիալական հիմքերը ընդլայնելու համար ֆաշիզմը լայնորեն օգտագործում էր դեմագոգիան, լրացնելով այն հակակապիտալիս-տական և կեղծ սոցիալիստական կարգախոսներով: Գրանով իսկ նա կարողանում էր իր կողմը քաշել աշխատավորության լայն զանգ-վածներին:

Ֆաշիզմ հասկացությունը ծագում է լատիներեն «fasio» բառից, նշանակում է խուրձ, միավորում: Առաջին «ֆաշիզ-մ»-ները ստեղծվել են 1919 թ. Իտալիայում Բ. Մուսոլինիի նախաձեռնությամբ, որն էլ հա-մարվում է իտալական ֆաշիզմի կնքահայրը:

Առաջին համաշխարհային պատերազմում պատմական իրա-դարձություններն այնպես դասավորվեցին, որ Իտալիան դուրս գալով Եռյակ միությունից 1915 թ. դաշնակցային պայմանագիր կնքեց Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի հետ՝ պատերազմ հայտարարելով Ավստրո-Հունգարիային, իսկ 1916 թ.՝ Գերմանիային: Սակայն, պատերազմի ավարտից հետո Իտալիայի՝ տարածքային ձեռքբերում-ներին վերաբերող հեռանկարային ծրագրերը չարդարացան և Իտա-լիայում ձևավորվեց քաղաքական և սոցիալ-տնտեսական ճգնաժամ: Երկիրը ճգնաժամից դուրս բերելու համար քաղաքական

դաշտ թափանցեցին տարբեր քաղաքական ուժեր, որոնցից էր Իտալիայի ֆաշիստական կուսակցությունը: Բ. Մուսոլինին, ֆաշիստական կուսակցության ղեկավարը, պատկանում էր սոցիալիստական կուսակցության ուլտրահեղափոխական ճյուղին: Հետագայում, դուրս գալով այդ կուսակցությունից ստեղծում է իր կուսակցությունը:

Սոցիալ-տնտեսական ծանր վիճակը, հասարակության մեջ առաջացած ռևանշիստական միտումները, որոնք ձևավորվել էին առաջին համաշխարհային պատերազմից հետո, հիմք հանդիսացան նացիո-նալիստական տրամադրությունների ձևավորման համար:

Հռոմեական կայսրության երբեմնի հզորության և աշխարհակալության վերականգնման առասպելը Մուսոլինիի և իտալական ֆաշիզմի մյուս գաղափարախոսների կողմից օգտագործվում էր որպես սոցիալ-պատմական դեմագոգիա՝ ժողովրդական զանգվածների աջակցությունը ստանալու համար: Մուսոլինին կողմնակից էր «հզոր Իտալիայի» ստեղծմանը և դրանով կարողացավ արժանանալ հասարակության աջակցությանը:

1922 թ. ֆաշիստական ռեժիմը Իտալիայում հաղթեց և իշխանությունը Վիկտոր Էմանուել թագավորից անցավ Բ. Մուսոլինիին (դեպի Հռոմ ֆաշիստական միլիցիայի ջոկատների ձևական արշավանքից հետո):

Մուսոլինիի տեսությունը հենվում էր Պլատոնի և Հեգելի էլիտական գաղափարների և պետության «օրգանական» կոնցեպցիայի վրա: Այն քարոզում էր ծայրահեղ ազգայնամոլությունը, պետության «անսահ-մանափակ կամքը», ողջունում էր պատերազմն ու զավթողականությունը: Հանդես գալով հակադեմոկրատիզմի, ռասիզմի և շովինիզմի, ինչպես նաև հակամարքսիստական դիրքերից Մուսոլինիի գաղափարները մեծարում էին ամբողջատիրական պետությունը, նշում էին ուժեղ և անողոր իշխանության անհրաժեշտությունը, որը զուրկ կլինի «լիբերալ դեմոկրատիայի բոլոր թերություններից»:

Այս գաղափարախոսությունը հիմնավորվում էր ավտորիտար կուսակցության քաղաքական տիրա-պետությամբ, որը պետք է համընդհանուր վերահսկողություն սահմաներ ինչպես հասարակության, այնպես էլ առանձին անհատի նկատմամբ:

Մուսոլինիի տեսությունը փառաբանում էր նաև առաջնորդի պաշտա-մունքը:

Իտալական ֆաշիզմի հիմնական գաղափարներից մեկը «կորպորա-տիվ պետության» մասին դրույթն է: Մուսոլինիի խոսքերով («Կոր-պորատիվ պետություն» աշխատության մեջ) պետությունը չպետք է օտարված լինի մարդկանցից: Իր կողմից ստեղծված պետությունը նա համարում էր օրգանական, մարդկային, իրական կյանքի հետ կապված և ժողովրդի միասնական կամքն արտահայտող պետություն: Կորպորատիվ համակարգում, ըստ Մուսոլինիի, տնտեսությունը կազմակերպված է պետական վերահսկողության տակ գործող աշխատանքի և կա-պիտալի ասոցիացիաներում, բոլորն աշխատում են «համերաշխու-թյամբ» միակուսակցական դիկտատուրայի օգնությամբ:

Այս համա-կարգը ելնում է այն դրույթից, որ մարդը կարող է ինքնարտահայտվել որպես քաղաքացի միայն որպես այդ ասոցիացիայի անդամ: Աշխատավորներին հատկացվում է «արտադրողական կապիտալի» կամքն իրականացնողների դերը: Ֆաշիզմն արգելում է գործադուլներն ու աշխատավորության շահերը պաշտպանող այլ ելույթները:

Ֆաշիստ-ների կողմից ստեղծված արհմիությունները դարձան միայն աշխատանքի նկատմամբ վերահսկողություն իրականացնող գործիքներ:

Այսպիսով, հասարակության սոցիալ-տնտեսական համակարգի հիմքում ֆաշիզմը տեսնում էր պետության կողմից վերահսկվող մո-նոպոլիստական կապիտալի տիրապետությունը:

Մուսոլինիի համախոհներից Ջիտիլեն շրջանառության մեջ մտցրեց նաև «ամբողջատիրություն» հասկացությունը: Իտալական ֆաշիստ-ները գտնում էին, որ պետությունը պետք է լինի ամբողջատիրական և, բացի իրենից, չընդունի ոչ մի այլ միավորում կամ արժեք: Ամբողջատիրության հիմքում ֆաշիստները տեսնում էին դիկտատուրան:

Դիկտատուրան ենթադրում է պետության ցանկացած քաղաքացու գիտակցության մեջ պետության նկատմամբ հավատի գոյությունը: Դիկտատուրայի համար կարևոր է, որ շարքային քաղաքացին հավատա իշխանության հզորությանը, վճռականությանը, գործնականությանը: Դիկտատուրայի ժամանակ կարևոր է, հատկապես,

գաղափարախոսական ապարատի հզորությունը, որի հիմնական նպատակը մարդկանց գիտակցության մեջ աշխարհընկալման խեղաթյուրված պատկեր դրոշմելն է, հավաստիացնելն է, որ ներկայիս վարչակարգին չկա այլ-ընտրանք՝ այն ամենալավն է: Այսպիսով, ֆաշիզմի նպատակն է դիկտատուրայի լեգիտիմության հաստատումը: Բռնապետության հաստատման հոգեբանական հաջորդ մեխանիզմը ստեղծվում է հույզային և զգացմունքային մակարդակի վրա: Դիկտատուրան ենթադրում է գործող իշխանության նկատմամբ սիրո գոյությունը, նշելով, որ «սիրահարը չի տեսնում իր սիրո օբյեկտի թերությունները և բացերը»: Սակայն դիկտատուրան չի կարող հիմնը-վել միայն սիրո վրա, այլ պետք է հենվի ավելի հզոր զգացմունքի՝ վախի վրա: Յուրահատուկ սոցիալ-հոգեբանական մտքի տեսակը, որը համապատասխանում է տոտալիտար քաղաքական ռեժիմին, իր ար-տահայտությունն է գտել ինչպես բռնապետության կողմնակիցների, այնպես էլ նրա հակառակորդների մոտ: Դրա վառ օրինակն է Թեոդոր Ադորնոյի «ավտորիտար անհատի գաղափարը»: Ցանկացած բռնապետության անհրաժեշտ է մի անհատ, որը կկարողանա զանգվածներին տանել իր հետևից: Այդ անհատը ստեղծում է ավտորիտար հասարակություն և ներկայանում է որպես բռնապետ, ֆաշիստական Գերմանիայում՝ ֆյուրեր:

Բ. Մուսոլինիի ֆաշիզմի գաղափարախոսական շարունակությունն է Ա. Հիտլերի (Շիլլիբրուբերի) նացիոնալ-սոցիալիզմը: Ի տարբերություն իր իտալական համախոհի, Հիտլերը 1933 թ. իշխանության գլուխ անցավ խորհրդարանական ճանապարհով: Ա. Հիտլերի հայացքները ձևավորվեցին Ավստրիայում 19-րդ դ. ավստրիական ռասիզմի և անտիսեմիտիզմի տեսաբանների գաղափարների ազդեցության ներքո:

Նացիոնալ-սոցիալիստական գաղափարները Ավստրիայում առաջացան 19-րդ դարի 80-ական թվականներին, երբ Ավստրիայի սահմանադրական կուսակցության անդամ Շեներերը, դուրս գալով կուսակցությունից, 1882 թ. Լինցում կազմում է նոր ծրագիր, որի դրույթները ձևավորվել էին Դյուրինգի, Օտտոկարի, Բիլուսի, Լորենցի հա-յացքների հիմքի վրա: Հետագայում, Շեներերի ծրագիրը հիմք հանդիսացավ նացիոնալիստական և ուտոպիստական մի շարք կազմա-կերպությունների ստեղծման համար, որոնք տարածվեցին Ավստրո-Հունգարիայում, Լեհաստանում, հատկապես՝ Մոլեթական մարզում:

20-րդ դարի սկզբում Ավստրիայում բանվորական, աշխատավորա-կան, երիտասարդական և մասնագիտական խմբերի միակցման ար-դյունքում ձևավորվեց առաջին նացիոնալ-սոցիալիստական կուսակցու-թյունը, որի ծրագիրը ներառում էր նացիոնալիստական, ռասիստական, միլիտարիստական, գաղութարարչական սկզբունքներ: Կուսակցության ծրագրի կայացման գործում մեծ դեր էին խաղացել ավստրիական նա-ցիոնալ-սոցիալիզմի կնքահայր Ռուդոլֆ Յունգի գաղափարները: Նա առաջ քաշեց կենտրոնացված նացիոնալիստական պետության սկզբ-բունքը:

Կենտրոնացված պետության դերում նա տեսնում էր գեր-մանական կայսրությունը, որի մեջ էին մտնելու Լեհաստանը, Մո-րավիան և գերմանական Ավստրիան:

Կուսակցության ծրագրի մեջ էր ներառվում այն սկզբունքը, համա-ձայն որի, աշխատող դասակարգը բաժանվում է երկու խմբի.

1. Մարդիկ, ովքեր աշխատելով ստանում են եկամուտ (բանվորներ, միջին դասի ներկայացուցիչներ):

2. Մարդիկ, ովքեր գործնականում չեն աշխատում, բայց ստանում են մեծ եկամուտ (բանկիրներ, խոշոր գործարանատերեր և այլոք):

Այս սկզբունքը հետագայում տեղ գտավ Գերմանիայի նացիոնալ-սոցիալիստական բանվորական կուսակցության մեջ (NSDAP):

Սակայն նշված տեսությունները, ինչպես նաև մեր կողմից դի-տարկված պանգերմանիզմն ու պրուսական միլիտարիզմը բավարար պայման չէին կարող հանդիսանալ Գերմանիայում նացիստական և ռասիստական տրամադրությունների այդօրինակ աճի և տարածման համար: Դրա համար անհրաժեշտ էր, որ գոյություն ունենային շահագրգիռ և իրենցից որոշակի կշիռ ներկայացնող խմբեր կամ դասեր, որոնց վրա կհիմնվեր նոր գաղափարախոսությունը:



Ռևանզիատական և նացիոնալիստական գաղափարների տարածման համար կարևոր նախապայման եղավ Վերսալյան պայմանագիրը: Առաջին համաշխարհային պատերազմն ավարտվեց Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի պարտությամբ, որը իրավական ձևակերպում ստացավ Վերսալյան հաշտությունում (1919 թ.): Այդ պայմանագրով նախատեսված պարտավորությունները բավական ծանրակշիռ պատճառ էին հասարակության մեջ ազգայնամոլական և ռևանզիատական տրամադրությունների առաջացման համար: Դրանից օգտվելով, Գերմանիայի քաղաքական դաշտ մուտք գործեցին մի շարք քաղաքական մարզիմալ ուժեր, որոնք հիմնականում ծայրահեղ լիբերալ ուղղվածություն ունեին և սոցիալական դեմագոգիայի միջոցով ցանկանում էին մոտակա ընտրություններում էլեկտորատի աջակցությամբ տեղեր ստանալ պառլամենտում: Ռևանզիզմը խթանեց ուժեղ անհատի և ուժի պաշտամունքի գաղափարների տարածումը պարտված երկրների բնակչության միջավայրում: Գերմանական վարչակարգի խայտառակ պարտությունը դժգոհություններ առաջ բերեց ոչ միայն միջին դասի, այլ նաև զինվորականների և ազնվականների շրջանում: Զինվորականության մոտ Վերսալյան պայմանագրի կատարումը դիտվեց որպես անձնական աղետ: Զինվորականությանը և ազնվականությանը մտահոգում էին նաև ժողովրդական որոշ զանգվածների օրեցօր ուժեղացող մարքսիստական տրամադրությունները: Դրան դիմակայելու համար այդ շերտերն արդարացնում էին այդ հոսանքների դեմ զինուժի և բռնության կիրառումը: Սակայն որքան էլ կարևորենք զինվորականների և ազնվականության դերը ֆաշիստական վարչակարգի հաստատման գործում, այնուամենայնիվ, նացիոնալ-սոցիալիզմը հենվում էր միջին դասի վրա, որն արդյունքում դարձավ Գերմանիայում նացիոնալ-սոցիալիստական գաղափարների կրողը: Այս դասը յուրահատուկ «ինտելեկտուալ զինանոց» էր ֆաշիստական իշխող էլիտայի համար: Այս դասից ֆաշիստները թարմացնում էին իրենց շարքերը, այսինքն, ըստ ֆաշիստների, գործում էր «էլիտայի շրջապատյալ տեսությունը», համաձայն որի, ժամանակի ընթացքում էլիտայի որոշ ներկայացուցիչներ, կորցնելով իրենց գերիշխող դիրքը հասարակության վրա, զիջում են իրենց տեղը մարդկային նոր հոսքերին, որոնք համալրում են էլիտայի շարքերը: Արդյունքում, արդիականացվում են իշխող օղակները և նրանց գործունեությունը դառնում է ավելի արդյունավետ: Միջին դասի քաղաքական, սոցիալ-տնտեսական վիճակը Վայմար-յան Հանրապետությունում շատ ծանր էր և հասարակության մեջ գործող իշխանությունների նկատմամբ տիրում էր անհանդուրժողականության մթնոլորտ: Տնտեսական ոլորտում անհանդուրժողականությունը դրսևորվում էր հետևյալ կերպ: Քանի որ միջին դասը դժգոհ էր Վայմարյան կառավարության տնտեսական քաղաքականությունից, որն ակնհայտ պաշտպանում էր խոշոր մոնոպոլիաների և կապիտալիստների շահերը և չէր կարողանում երկիրը դուրս բերել տնտեսական ճգնաժամից, ցանկանում էր ստեղծել նոր սոցիալական կարգ, որի օրոք պետական ուժեղ իշխանությունը մի կողմից կարող է առողջացնել և վերականգնել տնտեսությունը, մյուս կողմից՝ ստեղծել համապատասխան պայմաններ միջին դասի բարեկեցության սպասովման համար: Արհեստավորները ցանկանում էին կրճատել նյութական ռեսուրսների գները որոշող կոնցեռների և տրեստների քանակը: Մանր բուրժուազիան պահանջում էր, որ պետությունը վերահսկի բանկերը, սահմանի ցածր տոկոսա-դրույքներ, հնարավորություն տա մանրածախ առևտրի զարգացմանը: Գյուղական համայնքներում միջին դասը ցանկանում էր, որ նոր իշխանությունը վարկեր տրամադրի գյուղացիությանը և սառեցնի նախկին ռեժիմի օրոք կուտակված պարտքերի վճարման գործընթացը: Փաստորեն, միջին դասի տնտեսական պահանջները բավական արմատական բնույթ էին կրում և նրանց բավարարման համար անհրաժեշտ էր, որ քաղաքական դաշտում տեղի ունենան համապատասխան փոփոխություններ: Սակայն, Վայմարյան Հանրապետությունում քաղաքական իրավիճակը արագորեն դարձավ անկառավարելի և անկանխատեսելի:

Միջին դասը գործող վարչակարգը դիտում էր որպես մահացած քաղաքական ուժ: Մանր բուրժուազիան հակված էր ուժեղ ազգային պետության ստեղծմանը, որը կպաշտպաներ իր շահերը, աչ և ձախ թևերի ոտնձգություններից: Քննադատելով դեմոկրատական ինստի-տուտների անգործությունը, միջին դասի ներկայացուցիչները գտնում էին, որ չարիքի ակունքը համակարգի դեմոկրատական լինելու մեջ է: Կաշառակերությունը, որը շատ բնորոշ էր Վայմարյան Հանրապետության պետական ապարատին, դիտվում էր որպես համապատասխան կարգ ու կանոնի բացակայության արդյունք: Կարգ ու կանոնը պետք է հենվի իշխանավորի, ղեկավարի հեղինակության վրա: Հե-տագայում այդպիսի անձ դիտվեց ֆյուրերը:

Գերմանական միջին դասն անկազմակերպ էր: Ֆաշիստական գաղափարախոսությունը դարձավ այն հիմքը, որի վրա համախմբվեց մանր բուրժուազիան:

Գերմանական նացիոնալ-սոցիալիզմին բնորոշ է կենսաբանական օրենքների տեղափոխումը հասարակություն, ուժեղի իրավունքների քարոզումը: Կարևորագույն արժեքներից է էլիտար-ստորադասական սկզբունքը, որի համաձայն մարդկության մի մասը ծնվել է հրամայելու, մյուսը՝ ենթարկվելու համար: Ինչպես և իտալականը, գերմանական ֆաշիզմը մեծ տեղ էր հատկացնում առաջնորդության սկզբունքին, որը նշանակում էր պետության միասնությունը մարմնավորող առաջնորդի (ֆյուրերի) գոյությունը:

Նացիոնալ-սոցիալիզմի գլխավոր առանձնահատկություններից էր արևմտյան պլուտոկրատիաների և բուրժուազիայի՝ որպես համաշխարհային հրեականության դավադրության մասին տեսության ընդունումը: Ըստ ֆաշիզմի գաղափարախոսների, այդ դավադրությունն ուղղված էր գերմանացիների՝ որպես արիական ռասայի ներկայացուցիչների դեմ: Այս կապակցությամբ արիական ռասան հավասարեցվում էր գերմանական ազգին: Ֆաշիզմի գերմանական տարբերակում ամենակարևոր տեղը գրավում էր հատկապես ռասայականությունը, որի մաքրության ապահովումը արդարացնում էր նվաճողական քաղաքականությունն ու անհարկությունները: Ուժեղ պետության գաղափարը, ի տարբերություն իտալական ֆաշիզմի, մղվում էր հետին պլան: Այսպես, Հիտլերի «Իմ պայքարը» գիրքը հազեցված էր ազգայնա-մոլական և ռասիստական գաղափարներով: Այսպես, օրինակ, նշվում էր, որ միայն գերմանացիներին է հաջողվել պահպանել բնածին արյունն ու լեզուն: Գեռևս 12-րդ դ. Գերմանիայում առաջացած տեսությունն ապացուցում էր, որ Ադամն ու Եվան խոսել են գերմաներեն: Գեր-մանական լեզուն առաջացել է աշխարհի մյուս լեզուներից առաջ: Հիտլերի կարծիքով գերմանացիները չունեն այլ ապագա, բացի համաշխարհային տիրապետության հասնելուց:

Ստեղծելով անհարկական ռեժիմներ՝ ֆաշիզմը ճնշեց բոլոր դե-մոկրատական ազատություններն ու ինստիտուտները: Տեղի ունեցավ հասարակական կյանքի բոլոր ոլորտների ռազմականացում: Հասարակության նկատմամբ վերահսկողությունը իրականացվում էր ոչ միայն պետական կառույցների, այլ նաև կուսակցական ռազմական կազմակերպությունների կողմից («սկուադրայի» ջոկատները Իտալիայում, գրոհայիններն ու էսէսականները՝ Գերմանիայում): Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ֆաշիզմի բռնությունները ար-տահայտվեցին հիտլերյան համակենտրոնացման ճամբարների ստեղծումով, մարդկության նկատմամբ իրականացվող եղեռնով: Ֆաշիզմի հանցագործությունները դատապարտվեցին ՄԱԿ-ի որոշումով ստեղծ-ված Նյուրեմբերգյան տրիբունալի կողմից:

Ֆաշիստական գաղափարախոսությունների շարքում իր առանձնա-հատուկ տեղն ունի պորտուգալացի դիկտատոր Անտոնիու Մալազարի անվան հետ կապված գաղափարախոսությունը: Պորտուգալիայում նա կառավարել է 1932 թ. մինչև 60-ական թթ. վերջը: Թե ինչպիսին էր վիճակը Պորտուգալիայում մինչև Մալազարը բավարար է նշել, որ 1910-1926 թթ. այստեղ կատարվել էր 16 հեղաշրջում:

Ա. Մալազարը Կուիմբրայի համալսարանի պրոֆեսոր էր: Նրան առաջարկվեցին արտակարգ լիազորություններ երկրի տնտեսությունն առողջացնելու համար: Դա նրան հաջողվեց մի քանի տարիների ընթացքում: Սակայն դրանից հետո ամբողջ իշխանությունը

երկրում կենտրոնացվեց Մալազարի ձեռքում: Նա գտնում էր, որ ոչ ոք իրավունք չունի վիճարկել պետության ղեկավարի որոշումները: Գոյություն ունի միայն մեկ դատավոր, որի «լուսավորչական» որոշումները պարտադիր են բոլորի համար:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո ֆաշիզմը վերածնվեց նեոֆաշիզմի տեսքով: Վերջինը ծագումնաբանորեն կապված է ֆաշիզմի հետ, քանի որ քարոզում է նույն քաղաքական գաղափարախոսական սկզբունքներն ու բռնության պաշտամունքը: Պահպանվել է նաև դրա սոցիալական հիմքը՝ խոշոր մոնոպոլիստական կապիտալը: ԳՏՀ-ի հետևանքով տեղի ունեցած խոշոր փոփոխությունները հանգեցրին սոցիալական ստորին սանդղակի վրա գտնվող շերտի՝ մարգինալների թվի աճին: Այդ շերտը ընդունակ է բավականին արագ արձագանքել նեոֆաշիստների ծայրահեղական կոչերին:

Նեոֆաշիզմի վերլուծաբան Գ. Բարչն իր «Աջ հեղափոխություն. Նեոֆաշիստական գաղափարախոսությունը և կազմակերպությունները» աշխատությունում 10 նշում է նեոֆաշիզմի կայացման այնպիսի հիմնադրույթների մասին, որոնք փորձում են արդարացնել «հզոր» Եվրոպայի ստեղծման գաղափարը և դրա հետ կապված մեծ գեր-մանական կայսրության վերածնունդը: Դրանք են՝

1. «Կենսաբանական մարդաբանություն»- Ծայրահեղ սոցիալ-դար-վինիզմի վրա հիմնված կենսաբանական մարդաբանությունը ձևավորվում էր ժառանգական կենսաբանության և գենետիկայի ոլորտում ուսումնասիրությունների արդյունքների և վարքաբանության մասին գիտության հիման վրա:

Նեոֆաշիստները գտնում են, որ հարկավոր է ոչնչացնել արևելքում և արևմուտքում գտնվող համաշխարհային գերիշխող համակարգերի մարդաբանական հիմքերը: Նրանց համար մարդը կենսաբանական տիպ է, որի էությունը որոշվում է կենսաբանական էվոլյուցիայով և բնագոյներով ու, ելնելով դրանից, հաստատված բոլոր նորմերը պետք է համապատասխանեն բնական այս օրինաչափություններին: Այս օրինաչափությունները ներկայանում են «բնագոյների» տեսքով.

ա) տարածքային բնագոյը, որը դիտվում էր որպես դրսից սահ-մանագծված, իսկ ներսից՝ միակցված խմբակային մեխանիզմ, ներ-կայանում է որպես ազգայնամոլության սկզբնապատճառ,

բ) գերիշխանության բնագոյը դիտվում էր որպես անհավասարության մեխանիզմ, որի ընդունումը միայն ինքնին ապահովում է ամենա-ընդունակի կամ էլիտայի տիրապետությունը: Այստեղ հավասարու-թյունը դիտվում էր որպես ոչ բնական կատեգորիա, իսկ անհավա-սարությունը՝ բնության զարգացման հիմնապատճառ,

գ) սեփականության բնագոյը ձևավորվում է մարդու կողմից մատե-րիայի ստեղծման և տիրապետության արդյունքում: Հետևաբար, անձ-նական սեփականությունը ոչ այլ ինչ էր, եթե ոչ մարդու կոնկրետացումը մատերիայի մեջ: Դա նպաստում էր լավագույնների գոյատևմանը և ամրապնդում նրանց իշխանության իրավունքը,

դ) ագրեսիվության բնագոյը ծառայում է տարածքի պաշտպանու-թյանը, դասերի առաջացմանը և սեփականության ձեռքբերմանը: Այս բնագոյի նյութական արտահայտությունը գենքն է, որը մարդու կա-յացման պատճառն է,

ե) դասային բնագոյը ծառայում է փոքր ու մեծ խմբերի պահպանմանը (խմբեր, ինչպիսիք են ընտանիքը և ազգը),

զ) սեռական բնագոյ, որը նպաստում է կենսաբանական էվոլյու-ցիային:

2. «Եվրոպական ճանաչողության տեսություն»- Նեոֆաշիստները Եվրոպայի՝ որպես աշխարհի քաղաքակրթական կենտրոններից մեկի, դիտարկումը, բացատրում էին «եվրոպական սինդրոմ» հասկացությամբ և պահանջում էին, որ եվրոպական քաղաքականությունը համաձայ-նեցվի այս դրույթի գիտակցման հետ: Նրանք, իրենց գլխավոր նպա-տակը համարելով «հզոր» Եվրոպայի ստեղծումը, փորձում էին ձևա-կերպել «եվրոպական իդենտիֆիկացիայի» գաղափարը: Ըստ նրանց գոյություն ունեցող իրականությունը մարդկանց բաժանումն է եվրո-պացիների, սևամորթների և մոնղոլոիդների: Ընդ որում, եվրոպացի-ները միշտ պետք է գերիշխեն մյուս ազգերի և

ռասաների վրա: Այս ըմբռնումը դիտվում էր բնության գիտական ճանաչողության պրիզմայի ներքո:

3. «Բիոհումանիզմ»- Ռասայական ազգագրությունը պնդում էր, որ ազգերի միջև տարբերությունները և յուրահատկությունները որոշվում են կենսաբանական գործոններով: Նրանցից յուրաքանչյուրին բնորոշ է յուրահատուկ ռասայական տրամաբանություն և ճանաչողության հա-մապատասխան ռասայական տեսություն: Պետության, հասարակու-թյան քաղաքականության այս հիմքի վրա ձևավորված տեսությունը, ըստ նեոֆաշիզմի, կոչվում էր Բիոհումանիզմ: Բիոհումանիզմը «մարդու իրական տիպի», «Եվրոպական ճանաչողության» և «ռասայական դի-ֆերենցվածության» տեսությունների գործնական կիրառումն է պե-տական և հասարակական տարբեր ոլորտներում: Ըստ նրանց, բիո-հումանիզմը պայքարում է «անգլիական» լիբերալիզմի և «հրեական» մարքիզմի դեմ:

4. «Էթնոպլյուրալիզմ»- Էթնոպլյուրալիզմը նեոֆաշիստների գաղա-փարախոսության առանցքային դրույթներից էր, որն իր մեջ ներառում էր «ազգային իդենտիֆիկացիա» հասկացությունը: Այդ հասկացությունը հանգում է կենդանիներին բնորոշ «տարածքային նվաճման» բնագոյին, որը համապատասխանում է «կենսաբանական հիմնական սկզբ-բունքին», այսինքն՝ ծառայում է էվոլյուցիայի գործընթացին: Այս պատճառով ազգերը ձգտում են ինքնահաստատման և ինքնարտա-հայտման, թեկուզ և տարածքային ձեռքբերումների ճանապարհով:

5. «Ազատագրող նացիոնալիզմ»- Էթնոպլյուրալիզմը առանց բա-զիսի չէր կարող ձևավորվել: Այդպիսի բազիս հանդիսացավ «ազա-տագրող նացիոնալիզմը», որի նպատակը Գերմանիայում, հետագայում նաև Եվրոպայի ողջ տարածքում, ազգայնամոլական ինքնագիտակցու-թյան արմատավորումն էր: Առաջ էր քաշվում մի դրույթ, համաձայն որի, գերմանախոս և «նորդիական» արմատներ ունեցող ազգերն ունեն հատուկ միսիա, որը պետք է իրականացվի ամեն գնով: Որպես «միսիա», կար նպատակ՝ հզոր Եվրոպայի ստեղծման գաղափարը, որը պետք է գերիշխեր ողջ աշխարհում: Մի շարք գիտնականներ նշում են, որ նեոֆաշիզմի և ֆաշիզմի վտանգն ընդհանրապես անցել է, սակայն դա սխալ կարծիք է: Համապատասխան պայմանների առկայության դեպքում ֆաշիստական գաղափարները կարող են վերածնվել և մասսայականություն վայելել հասարակության որևէ շերտի մոտ: Դրա վառ օրինակն էին 2000 թ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գլուխ առաջին

### ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Գաղափարախոսության տեսության ակունքները - ..... 3  
20-րդ դարի երկրորդ կեսի տեսությունները ..... 10

Գլուխ երկրորդ

### ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹ

Գաղափարախոսության էությունը ..... 15  
Գաղափարախոսություն և քաղաքականություն ..... 20

Գլուխ երրորդ

**ԼԻԲԵՐԱԼԻԶՄ**

Լիբերալիզմի ակունքները .....	26
Դասական լիբերալիզմ .....	30
Արժեքների վերականգնումն ու նոր լիբերալիզմի ձևավորումը. Նեոլիբերալիզմ .....	33

Գլուխ չորրորդ

**ԿՈՆՍԵՐՎԱՏԻԶՄ**

Կոնսերվատիզմի բովանդակությունը .....	42
Ժամանակակից կոնսերվատիզմի հիմնական մոտեցումները .....	48
Ժամանակակից կոնսերվատիզմի հոսանքները .....	52

Գլուխ հինգերորդ

**ՍՈՑԻԱԼԻԶՄ**

Սոցիալիստական գաղափարների պատմական զարգացումը .....	62
Կոմունիզմ .....	67
Սոցիալ-դեմոկրատիզմ .....	71

Գլուխ վեցերորդ

**ՖԱՇԻԶՄ**

Ֆաշիզմի գաղափարական հիմքերը .....	81
Ֆաշիզմի առաջացումը. Նեոֆաշիզմ .....	92

Ենգոյան Աշոտ Փայլակի

ԱՐԴԻ ԳԱՐԱՇՐՁԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ  
ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐԸ

Խմբագիր՝ Վ. Դերձյան  
Համակարգչային շարվածքը  
և ձևավորումը՝ Թ. Վարդանյան

Երևանի պետհամալսարանի տպարան, Աբովյան 52